# ՀԱՅԵՐԵՆԻ
# ՑՈՒՇԵՐԷՍ

Numérisé par CDMF (PP) - 2013

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆ
Մխիթ. ՈՒԽՏԷՆ

Սիրելի տեսնելու
պատրաստ
յարգանքներով
[illegible]

# ՀԱՅՐԵՆԻ ՅՈՒՇԵՐԻՆ

Բէյրութ

Numérisé par CDMF (PP) - 2013

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս հատորիկին մէջ ամփոփած ենք Հ. Համազասպ Ոսկեանի պատանեկութեան ատեն գրած և ապա բարեկամներու յորդորին վրայ թերթերու («Ուսումնարան» ամսագիր, «Մասիս» շաբաթաթերթ, ևն.) մէջ լոյս ընծայած հայրենի յուշերէն կամ արձակ գրութիւններէն – ունի բազմաթիւ ոտանաւորներ ալ – մաս մը: Այժմ դարձեալ համակիրներու բաղձանքին ընդառաջելով է որ կը թոյլատրուի անոր (մէկտեղուած) հրատարակութիւնը՝ հայ հանրութեան և մասնաւորապէս աշակերտութեան մատչելի ընելու դիտաւորութեամբ: Յուսով ենք որ այս յուշերը (Տայոց աշխարհի խոտորջուր գիւղամաղամէն) հետաքրքրութեամբ և հանոյքով պիտի կարդացուին և առիթ պիտի ըլլան ուրիշներու՝ ազգային սովորութիւններն ու աւանդութիւնները մոռացութենէ փրկելու և ապագայ սերունդին փոխանցելու: Եւ այդ՝ մեծ ծառայութիւն է ազգագրութեան:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

Numérisé par CDMF (PP) - 2013

# «ԷՅԾԻ ՄԻՐՈՒԽՈՎ ՎԱՐԺԱՊԵՏԸ»

Գիսակ թէև ութերորդ տարին թեւակոխած էր, սակայն դպրոցի սեմքէն ոտքը դեռ ներս չէր դրած։ Կարիք ալ չկար։ Տան մէջ արդէն ուսուցչուհի ունէր – իր մայրը։ Հակառակ անոր որ մեր կողմերը աղջիկներու ուսում տանելու համակիրներ սակաւ էին, ան շատ լաւ կարդալ ու գրել գիտէր։ Գիսակ ամէն երեկոյ այբբենարանը մայրիկին ծունկերուն վրայ կը դնէր և անիկա իր քնքուշ՝ բայց նիհար ձեռքին մէջ անոր մատիկը կամ թաթիկը բռնած՝ կարդալ կը սորվեցնէր։ Երբեմն գրեր ու բառեր կային, որոնք տղուն լեզուն կը տանջէին և կամ գլխուն մէջ տեղ չէին ըներ։ Երբեմն ալ անառակութիւնը կը բռնէր, – թէպէտ յանցաւոր – և ոտքերովը կը խաղար և կամ կը նայէր եղբայրիկին ու քոյրիկին, որոնք կարդալու և գրելու հոգէն դեռ ազատ՝ կը գուարճանային։ Բայց մայրիկին ակնարկը – քիչ մը խոժոռ – վինքը ղղաստութեան կը հրաւիրէր։

Դասի պահերը տան մէջ հանդարտ կ'անցնէին։ Սակայն հոն աղմուկը շատ էր։ Եւ ահա օր մը մեծ մայրիկը Գիսակի իր մօտ կանչելով իմացուց որ՝ վաղը դպրոց պիտի տանէր զինքը։ Անոր ուղածն ալ այդ էր։ Կը մտածէր թէ աւելի խաղընկերներ պիտի ունենար։ Բայց երբ նը-կատեց որ՝ պատրաստութիւնները լրջօրէն կը տեսնուին, սկսաւ վարդի պէս թառամիլ։ Զէ՞ որ հոն էր անպիտան «փարախոն»։ Ահ, այդ զարհուրելի բանը – անոր մասին տխուր պատմութիւններ լսած էր։

Որոշուած օրը եկաւ հասաւ։ Մեծ մայրիկը Գիսակին մէկ ձեռքին մէջ գրաւ պայուսակը, որուն մէջ կ-

Numérisé par CDMF (PP) - 2013

տեղուած էին գիրք և ուսելիք և միւս ձեռքը փայտի կտոր մը։ Այս փայտակրութիւնը անասնելի էր։ Իրաքանչիւր աշակերտ ամրան ընթացքին պարտական էր կտոր մը փայտ հետը՝ վարժարան երթալ՝ վառարանին մէջ կրակ և սենեակին մէջ ջերմութիւն ունենալու համար։ Անպիտան փայտը դրամէն աւելի նկատողութեան առարկայ էր։ Երիցապոյն և աշխարց աշակերտ մը դպրոցին դրան առջեւը կը կենար և մէկուն թոյլ չէր տար ներս մտնելու, մինչև որ փայտէ անցագրին հարցը կարգի չէր դրուած։

Մեծ մայրիկն ու անոր թոռնիկը վարժարան հասան. փայտէ անցագիրը տուին ու դասարան մտան։ Ուսուցիչը չոլտով վեր բարձրացաւ, ապրուստնց մեծ մայրիկը, որ անոր հետ քանի մը խօսք փոխանակելէ յետոյ եկեղեցի մեկնեցաւ։ Այդ միջոցին Գիսակ ուսուցչին կը նայէր։ Անիկա միջահասակ էր և յիսունոց մը։ Սաթի պէս փայլուն սև մազերուն մէջ արդէն ճերմակ սպիտակ բաթիլներ իջած էին։ Կրակ ու լոյս աչքերուն՝ ակնոց դրած էր։ Կապկը՝ սրածայր փոքրիկ մօրուք մը ծածկած էր և այս պատճառով «Լյոնի միրուքով վարժապետը» կոչուած։

Գիսակ ղինքը արդէն կը ճանչնար, բայց իրեն ըսած էին թէ՝ ան դպրոցին մէջ բոլորովին տարբեր մարդ էր՝ շատ խիստ ու դաժան։ Սակայն՝ ինչպէս Գիսակ նկատեց՝ միեւնոյն բարի մարդն էր։ Փութաջանութիւն և կնարութեան կանոն կը պահանջէր և հարկ եղած ժամանակը խիստ և սովորական պատիժներ կը կիրարկէր, բայց ցանցառ։

Աշակերտներէն շատերը Գիսակին ծանօթ էին։ Ուսուցիչը ղինքը երկու լաւ աշակերտներու միջև դրաւ։ Դրիգոր և Յակոբ էին անոնց անունները. Զգեստներէն դատելով՝ առաջինը հարուստի զաւակ էր և երկրորդը շնչեւորի որդի։

Numérisé par CDMF (PP) - 2013

Ուսուցիչը Գիսակին հրամայեց ընթերցարան տանել և կարդալ։ Էջ մը կարդաց, թէպէտ դողդոջուն ձայնով, բայց անսայթաք և անսխալ։ Ուսուցիչը գոհ մնալով ըսաւ՝ «Ապրի՛ս, շատ յառաջացած ես։ Վաղը «Վարժութիւն մանկանց» մը կը դնես»։

Այդ գիրքը Գիսակ արդէն ունէր և բերանացի սկսաւ ըսել՝ «Դպրատունը տեղ մըն է»։ Այս էր պաշարը և կանգ առաւ։ Ուսուցիչը սիրտ տուաւ՝ «Շարունակէ», բայց ա՛լ չկար՝ որ շարունակէր ու ան ինձորի պէս կարմրեցաւ։ Ուսուցիչը անոր կացութիւնը հասկցաւ ու ըսաւ. «Զարաճճի, ուրիշ անգամ այսպէս չընես. հոգ չէ, այսօր չգիտցածդ՝ վաղը կը գիտնաս, միայն փութաջան եղիր»։ Ապա վարժապետը – ժպտիւրդը միշտ այս բառը կը գործածէր – բարձր ձայնով ըսաւ. «Հիմայ, Սարգիս, դուն կարդա՛»։ Երկայնահասակ մանչ մը ոտքի ելաւ, բայց լուռ մնաց և միայն շրթունքները կը շարժէր։ Ուսուցիչին ստիպիչ հրամանին վրայ ձայն հանեց ու սկսաւ կմկմալ։ Վարժապետը համբերութեամբ կը սպասէր, սակայն երեսը կամաց կամաց շառագունեցաւ և շրթունքները սկսաւ խածնել ու ակամայ պոռաց. «Փալախա՜ն»։

Գիսակ այն զարհուրելի գործիքին անունը ստէպ լսած էր, սակայն դայն դեռ չէր տեսած։ Փալախան երեւան եկաւ։ Սարգիսին ոտքերը անով պրկեցին և հարուածները տեղացին։ Ծոյլ տղան ոչ թէ կու լար, այլ կ'ոռնար։ Գիսակին սիրտը կտոր կտոր եղաւ։ Աչքերը մէկդի դարձուց։ Ամէնուն շունչը բռնուած էր։ Բարեբաստէրն այդ զարհուրելի տեսարանը կարճ տեւեց։

Աղաւնեան ընթացքին քանի մ'անգամ աշակերտներուն դաղար տուաւ, և Գիսակ, Յակոբ ու Գրիգոր իրարու հետ տեսնուեցան և ջերմ սիրով կապուեցան։ Անոնք իրենց հետ բերած կէսօրուան ճաշիկը միասին կերան։

Numérisé par CDMF (PP) - 2013

Ճաշին յանկարծակի խոպ ու կատակ, յետոյ դասերը վերսկսան։ Այս անգամ՝ թուաբանութիւն։ Աշակերտները թէև մէկ սրահի մէջ ամփոփուած էին, սակայն քանի մը խումբի բաժնուած, իւրաքանչիւրն ունէր իր նիւթը։ Յանկարծ ապմուկ մը եկաւ։ Մէկուն քանակը վար ինկած էր։ Ուսուցիչը ապզարտեց՝ «Վահէ, քանակը վերցուր»։ Կարուկ էր իր խոսքերուն մէջ և ժամանակը վատնել չէր ուզեր երկար բարակ պատճառները քննելով։

Այդ պահն ալ անցաւ և կրօնի դասը սկսաւ։ Աշակերտները այս դասը անխոսիր ապէկ սորված էին, նոյն իսկ ծոյլ Սարգիսը։ Վասն զի ամէնքն ալ տեսած էին կամ լսած թէ՝ մեծ պահքին եկեղեցւոյ մէջ ամբողջ ժողովուրդին առջև պէտք էին իրարու դիմաց կեցած քրիստոնէականը հարցնել։ Պատասխան տալ չկրցողը՝ սոխուած էր քահանային տուած նշանին վրայ ծունր դնել։ Այդ ամօթը մէկը չէր ուզեր յանձն առնել։

Վերջին դասը Հայոց պատմութիւնն էր։ Ուսուցիչը թեթև մը հոգոց ու սկսաւ։ Ակրիւր էր որ կը հոսէր։ Հէքեաթ ու պատմութիւն տղուն խաղերու մասը կարելի է համարել։ Խորին լռութիւն տիրեց և ականջները սրուեցան։ Ուսուցիչը իբրև պատասի վրայ անոնց ներկայացուց Արային ու Շամիրամին պատմութիւնը։ Պատաւ Շամիրամը հարսի պէս գեղեցիկ. Արան հրեշտակի պէս սիրուն, Ասլէկները ճնճղուկէն ու արտոյտէն աւելի արագաթիռ և բարձրաթռիչ։

Մինչդեռ սկսած էր ու աշակերտները դեռ ուսուցիչը կ'ունկնդրէին բերան բաց՝ անոր բերանէն կախուած ինչպէս նուագ իր ճիւղէն։ Սակայն յանկարծ ան ոտքի ելլելով դպրոցի փակումի ապօթքը սկսաւ։

Գիսակ այդ օրը տան մէջ ո՞րքան ըսելիք ունէր։ Մայրը անոր կը նայէր ու կը հրճուէր։ Գոհ էր որ իր որդին սիրով վարժարան կ'երթար և խաղի լաւ ընկեր-

Numérisé par CDMF (PP) - 2013

ներ ընտրած էր։ Եւ սաստիկ անիկա վարժարանէն երբեք առանց բաւարար պատճառի բացակայ չեղաւ։ Ուսում և ուսուցիչ կինքը գիտցած ու գրաւած էին։ Ամէնքը աշակերտութեանը երանի կու տային որ այսպիսի ուսուցիչի մը օրով կ'ապրէին։ Սակայն գժբախտաբար փոքրիկը անոր գլխուն պայթեցաւ և հայը ու որդիներ իրարմէ բաժնեց։

Մեծ պահի երեկոյ մը՝ թուրք ձկնավաճառները կալի մը մէջ հաւաքուած՝ ձորտի մէջ բռնուած մեծ մեծ ձկներ կը վաճառէին։ Հոն էր նմանապէս ուսուցիչը։ Գնում բնել կ'ուզէր։ Բայց յանկարծ գերեզմանոցի կողմէն երեք թուրք սոսկալիներ երեւան եկան։ Այս սովորական բան չէր նոյն կողմերը և շտեղը պատի պէս ձերմակեցան վախէն։ Անոնք եկան հասան և անոնցմէ մէկը ուսուցիչին ասջեւը կենալով՝ յայտարարեց որ՝ կառավարութեան անունովը կինքը կը կալանաւորէին։ Գիտցաւ ինքզինքը գոգել և բաղձաց՝ իմանալ պատճառը։ Պատասխանուեցաւ թէ՝ այդ մասին մեծերէն իրեն խօսք պիտի ըլլայ։ Շղթաներ ու կապանքներ անոր ձեռքերուն անցուցին պնդօրէն, իսկ ոտքերուն՝ թոյլօրէն և հրամայեցին քալել։ Ան գիտէր որ անմեղ էր և գնաց երգելով՝ «Մերն է ցաւը, մերն է վիշտը»։ Իր եռեւէն ուտաւ տարաւ ծնողներու և աշակերտներու ցաւն ու արտասուքը։ Օրերով և ամիսներով անոր մասին խօսուեցաւ։ Զրպարտութեան գոհ եղած էր։ Թէև ոպաները յաջողեցան կինքը բռնէն հանել ու ազատել, սակայն անոր թոյլ չտրուեցաւ կրկին իր հայրենիքը դառնալ։ Բայց «Լյոնի միրուքով» այդ բարի և սիրելի ուսուցիչը իր աշակերտներու մոքէն ու սրտէն չելաւ։ Կինքը միշտ երախտագիտութեամբ ու սիրով յիշեցին։ Անոնք ուզեցին և ջանացին անոր խօսքերուն և օրինակին հետեւիլ և իրենց ազգին, ինչպէս և ուսուցիչին անունը բարձր պահել, մանաւանդ թէ աւելի բարձրացնել։

Numérisé par CDMF (PP) - 2013

## « ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ Ի ԴԱՆԻԷԼԷ ՄԱՐԳԱՐԷԷ »

Հայրենիքիս մէջ մեր գպրոցի աշակերտներէն երկուքը գոյգ աչքերս նկատած եմ։ Զանոնք սիրած եմ ջերմագին և անոնցմէ սիրուած կախուին։

Վարժարանին մէջ իրարու մերձ կը նստէինք և ճաշի համար բերած մեր ուտելիքները միասին՝ անխտիր կը ապաւէինք։ Մէկ մէկու առուր կ'երթայինք դաս պատրաստելու և ապա խաղալու։

Մեր սրտակցութիւնը շատերու աչքին զարկած էր և շատերը զմեզ «երեքնուկ» կ'անուանէին, թէև մեր միւս ընկերներուն հետ ալ յաճախ կը խօսակցէինք և յարաբերութեան մէջ էինք։

Դասընկերներէս մէկուն անունը Գրիգոր էր։ Անոր քիչ մը երկար գլխուն մազերը չէկ էին և նուրբ, և երբեմն զեփիւռը զանոնք շոյելով ճակտին վրայ կը սրփռէր իրրև կակաչի թերթիկներ։ Աչքերը՝ փայլուն և ժպտուն՝ – գոյգ լճակներ – որոնց վրայ ճառագուն ծիծեռնակներ թիս կու գան։ Ինչպէս գէմքին, նաև մարմնոյն մորթին գոյնը շատ սպիտակ էր։ Մէն մի անդամը՝ չափաւոր և ներդաշնակ։ Քայլուածքը՝ լուրջ և ուղիղ։ Հարուստի որդի էր և միշտ մաքուր ու ճաշակաւոր կը հագնուէր։

Միւս դասընկերս Յակոբ կը կոչուէր։ Անոր կլոր գլխուն մազերը սև էին և երեսին գոյնը քիչ մը թուխ, բայց ալեերուն վրայ թեթև կարմրութիւն տարածուած։ Վառվռուն աչքերուն մէջ կարծես հրդեհ կար։ Հասակը տարիքին համեմատութեամբ քիչ մը կարճ էր։ Մարմնոյն ամէն մէկ մասին, ինչպէս և հագուստներուն վրայ, զգալի մաքրութիւն կը նկատուէր։ Այդ իր խնամող մօրը կը պարտէր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Մայրը՝ թէպէտ Մաննիկ անունով մկրտուած, բայց շատերը զինքը Տիկին Մաքրիկ կանչելու սովոր էին, որովհետև այնքան քինախնդրօրէն ինքզինքը և իր մանչուկը մաքուր պահելու հետամուտ էր։ Նաւերը և պատկիկ կին, կը խորհէիր թէ կը թռչի, այնքան թեթև էր քալուածքը։

Տիկին Մաքրիկ հարուստ չէր, սակայն գոհ էր իր վիճակէն և փոյթ կը տանէր իր պատկին լաւ դաստիարակութեանը։ Անոր՝ անակնկալ ուրախութիւններու սիրթ ևս կը սահցնէր։

Վարժարան երթալու ճամբուն վրայ զգիարի ծառ մը կար։ Անոր մօտ Գրիգոր, Յակոբ և ևս կը միանային ու հանդարտ խօսելով և կատակելով զպրոց կը հասնէինք։

Առաւօտ մը՝ կարծես նշան տանուած՝ Գրիգոր և ևս միեւնոյն բոպէին հոն գտնուեցանք։ Բայց Յակոբ չերևցաւ։ Երկար սպասումէ յետոյ՝ վարժարան գացինք։ Այդ օրը մեր ընկերին տեղը բաց մնաց։ Եզրակացուցինք թէ՝ հիւանդ բլլար և տխրեցանք։ Ուսուցիչն ալ անոր բացակայութիւնը զարմանալի գտաւ։ Յետոյ՝ քաշեցինք քաշեցինք՝ մինչև որ կարճցաւ և երեկոյ եղաւ։

Արձակուեցանք։ Երկուքս ալ Յակոբենց տունը վազեցինք։ Տիկին Մաքրիկ հարցրեց թէ՝ իր որդին հիւանդ էր և կը քնանար։ Մեր բարեւները ձգելով հեռացանք։ Յետոյ մեկի հարցրուեցաւ թէ՝ Յակոբ ծոցիկի բռնուած էր։ Աչքարէր մեր գլխուն վրայ փրաւ։ Քառասուն օր – վրան գիր գեռ քառասուն գիշեր – գիրար պիտի չտեսնէինք։ Քառասունի քարերու վրայ նստած այդ քառասուն օրն ու գիշերը՝ մեզի համար տարբոյ մը տեւողութիւնն ունեցան։ Բայց անցան։ Այդ չրջանին երբեմն Յակոբին տան քովէն կ'անցնէինք և զինքը պատուհանին առջեւը կը տեսնէինք։ Կը լսէինք անոր ձայնը։ Ծննդեան ճրագալոյցի ընթերցուածներէն – Դանիէլը – կը փոր-

Numérisé par CDMF (PP) - 2013

ձէր։ Կը խորհէինք թէ՝ ձանձրոյթը փարատելու միջոց ընտրած էր։

Մեր ուրախութիւնը ո՞րքան մեծ եղաւ, երբ Ծննդեան Ճրագալոյցին Յակոբ եկեղեցւոյ մէջ երեւցաւ։ Ուսուցիչը թէև «Փարթամ»ի սպառնալիքով սրպելած էր հոն խօսիլը, սակայն մենք երկչոտ սրտով մէկ երկու խօսք փոխանակեցինք։

Ժամերգութեան յաջորդեցին ընթերցուածները, որոնցմէ ամէնէն վերջ կարդը եկաւ Դանիէլին։ Այդ՝ կարդացն ու երգելը ամէնուն չէր տրուած։ Սովորութեան մը համաձայն ասմունքի կը հանուէր։ Զայներ սկսան բարձրանալ՝ «ասա..., ասանուինդ..., քանի..., քանուինդ..., երեսուն..., քառասուն..., յիսուն...։» Ու յանկարծ ուժգին ցատքում՝ «Հարիւր»։ Զայները լռեցին, գուցէ սարսափահար։ Փիչ վերջը ժամկոչը ձայն տուաւ՝ «Վերջին գումար՝ հարիւր. դեռ երեք բոպէ և մրցութիւնը կը գադրի»։

Լռութիւնը չարունակուեցաւ և հարիւր տուողը չահեցաւ։ Այդ՝ իմ սիրելի Գրիգորին հայրն էր։ Եւ անոր սիրուն մանչուկը աւագ խորանին աջ կողմէն գիլ ձայնով կանչեց՝ «Ընթերցուածս ի Դանիէլ մարգարէէ՛»։ Անուշ ձայնը ալիք ալիք ամէն ականջի մերձեցաւ և ամէն մարդ գայն հաճոյքով ունկնդրեց։

Բայց ուշագրութենէս չվրիպեցաւ որ՝ փիչ յետոյ քովս Յակոբ մեկնեցաւ և կինոյս վերնատունէն Տիկին Մարիամ չարժեցաւ։ Մայր ու որդի եկեղեցիէն մեկնեցան։ Մտածեցի որ՝ պարոին չէին ուզած երկար կենալ։ Այդպէս խորհած էին և մերոնք, երբ Թիւմի պատարագէն յետոյ – ասոնց վերապատուաւ միջոցին – անոնց մասին խօսք եղաւ։ Մերոնք Գրիգորին ձայնն ու երգը շատ գովեցին և մայրիկս խօսք տուաւ որ՝ Զատկի Ճրագալոյցին մեր տնէն պիտի բլլայ Դանիէլ երգողը։

Numérisé par CDMF (PP) - 2013

Այդ՝ լաւ։ Այդպէս մայրս դիս Տիկին Մաքրիկին դրրկեց, որ եթէ Յակոբին վիճակը կը նեղէ, մեր մօտ ընթրիքի դան։ Սակայն ոչինչ տիկինը յանձնառու չեղաւ և Յակոբ չերեւցաւ։ Տուն վերադարձայ տխրութեամբ և ժխտական պատասխանը մայրիկիս հաղորդեցի։ Նաև՝ աւելցուցի թէ՝ Տիկին Մաքրիկ չա՜տ տխուր էր։ Մայրս խոստացաւ՝ յաջորդ առաւօտ անոնց այց տալ։

Գիշերը – ուրախ ժամանցէ վերջ – քնացայ և երազեցի. երեք ընկերներս ալ Մանուկ Յիսուսի մօտ էինք։ Գրիգոր երգեց, ես ծիծաղեցայ, իսկ Յակոբ լացաւ։ Առաւօտ՝ մայրս հարցուց թէ արթնցաւ՝ երազս անոր պատմեցի։

Ծոնունդի ճիւնապարզ առաւօտն – բարեբախտօրէն՝ օդը մեղմ – հագնուած ու զարդարուած՝ մօրս հետ Յակոբենց գացինք՝ անոնց հետ եկեղեցի երթալու և նմանապէս անոնց «դարա»ը իմանալու համար։ Տիկին Մաքրիկ գմեզ այս անգամ իր սովորական անուշ ժպիտով չընդունեցաւ, թէև ճիգ կ'ընէր ինքզինքը զուարթ ցուցնելու։ Մայրս հասկցաւ որ՝ անոր սրտին մէջ կրծոց ցաւ մը կար։ Մօտ խօսքի յաջորդեց՝ բայց Տիկին Մաքրիկ ինքզինքը միշտ բռնել կրցաւ և իր վիշտը թաքուն պահեց։ Սակայն երբ Յակոբի հեծկլտուքը կը սպառնար ամէն բան երեւան հանել, արցունքոտ աչքերով և դողդոջուն շրթներով պատմեց խնդիրը։ Այս է՝ Յակոբին հիւանդութեան առեն անոր Դանիէլ կարգալ խոստացեր էր և այդ նպատակին հասնելու համար փոքրիկ գումար մը քովէ քով բերած և սակայն՝ ճիշդ Յակոբի ընկերը դայն անոր ձեռքէն յափշտակած էր։

Մայրս հանգստացուց որ՝ եղածը չարութեան հետեւանք չէր և «Ուսկէ Գրիգորին հայրը պիտի գիտնար թէ՝ Յակոբին համար ձայն բարձրացուցեր է Գէորգ ապան, վասն զի ամուրցի մատնակցութիւնը կինեբու արգիլուած էր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Բարեկամուհիներու խոստակցութիւնը կրնար դեռ երկար տեւել, եթէ եկեղեցւոյ զանգակին ձայնը զանոնք ապօթելու չհրաւիրէր։

Ծնունդը ուրախ զուարթ անցաւ։

Երեք ընկերներս սկսանք վերսին մեր ընթացքը շարունակել, սակայն Յակոբ Գրիգորի հանդէպ յառաջուան համակրանքը չունէր, քիչ մը պակաս էր։

Բարեկենդանի օրերն ալ եկան ու գացին։ Իրարու «պաս» չնորհաւորեցինք և մեր բերանները կղպեցինք։ Թէպէտ չտեսանք՝ սակայն հաւատացինք թէ՝ անպիտան ձերուկ մը մեր մսեղէնները գիշերանց եկած ու փախցուցած էր և զանոնք Զատկին՝ նարէն եւ պիտի բերէր։ Հեռուտաբար կախեցինք սոխը և վրան անցուցինք եօթը փետուր, ամէն կիրակի հատ մը զուրս քաշելու արտօնութեամբ։ Պահքի մեր շարաթացոյցն էր։

Ամբ մեծ պասը կրնայի քայլերով կը յաստաղանար։ Վերջապէս եկաւ հասաւ Աւետումը։ Սև օրերու մէջ՝ ճերմակ, լաւ օրերու մէջ՝ ձայնարձակ։ Այդ ուրախ ձայնաւոր պատարագը մեր գերդաստանին վերադարձած էր։ Յակոբ գպրութիւն ընելով՝ շատ գեղեցիկ երգեց։ Ըսե՞մ՝ ինքզինքը գերազանցեց։ Եկեղեցիէն վերադարձին մայրս գիս իր մօտ կանչեց ու բսաւ.

– Ինձի կը թուի թէ՝ Յակոբը շատ կը սիրես։

– Այո՛, մայրիկ, զինքը շատ կը սիրեմ։

– Ուրախ եմ։ Այն ատեն քու տեղդ այս տարի թող անիկա Դանիէլը երգէ։

– Կ՚ըլլայ։

– Ապրի՛ս։

– Երթամ իմաց տամ։

– Ո՛չ։

– Բայց կրնայ ըլլալ որ՝ մոռցած ըլլայ։

– Այդ ինձի թող։ Քանի որ այս տարի հայրիկդ քացակայ է, փոխիր անոր փոխարէն Դանիէլի տեղուրդին պիտի մատնակցի։

Numérisé par CDMF (PP) - 2013

– Լաւ, չատ լաւ։

Ուրախութիւնս սահման չունէր։ Բայց ի՞նչ գժուար է գաղանիք պահելը։ Սակայն կը փարձուէի բանալու և սակայն պրկուածները կը սեղմէի։

Կապարէ սաքով քայլ Աւագ Շարաթ օրը վերջապէս եկաւ հասաւ։ Յակոբին ցոյց որ միասին եկեղեցի երթանք։ Նա անտարամարդիր էր։ Հին վերքը դեռ կը կսկսար։ Տիկին Մաքրիկ իր սրտին համոզեց և եկեղեցի թողանք։

Զանգաւոր պատարագէն ետոյ Դանիէլի աճուրդն սկսաւ։ Քեռիս ձայնը արձակած էր։ Կը բարձրանար ու կը բարձրանար։ Եւ վերջապէս յաղթեց։ Այդ ինձի գալով ուրախութեամբ բաւ. «Դանիէլը մերն է»։

Շատ ուրախացայ։ Մօտեցայ Յակոբին և ըսի. «Մայրիկիս բաղձանքն է որ՝ այսօր Դանիէլը դուն կարդաս։ Գիտես որ՝ ես հոգ ունիմ ու չեմ կրնար»։

Ըսածս ճիշդ էր։ Երկու օրէ ի վեր կը հոգայի։ Ան պատասխանեց.

– Ո՛չ, չեմ կրնար։

– Այն տեղն իրարու բնկեր չենք։ Դուն գիտես որ՝ ես հոգէն կը տառապիմ։

– Այո՛, սակայն չեմ կրնար։ Մոռցած եմ։

– Կրնա՛ս և պէտք ես երգել։ Շուտ բրէ՛, մարդիկ կը սպասեն։

– Կրնան սպասել։ Ո՛չ, ո՛չ։

– Լա՛ւ, այն տեղն կը կրկնեմ նորէն՝ իրարու բնկեր բլլալէն կը գաղրինք, եթէ մայրիկիս այս բաղձանքը չկատարես։

Յակոբ կարծես չանթահարուած՝ լեմ նեղուեցաւ։ Եւ երգեց։ Երկու Դանիէլ – Ծնունդի և Զատիկի – միացաւ։

Եկեղեցւոյ անկաչաս պատերը վկայեցին թէ՝ անոր Դանիէլին պէս յստակ և անուշ, բարձր ու ազդեցիկ ընթերցուած մինչև այդ օրը դեռ լսած չէին։



Numérisé par CDMF (PP) - 2013

# ՁԱՐ ԿԻՆԸ

Զմեռուան գիշեր։ Բուք ու բուրան։ Զուկն անգամ սառեցնող ցուրտ։ Մահ փնտռող կրնայ դուրս ելլել։

Տանը մէջ պատսպարուած ենք։ Շքեղօրէն և նըրբաճաշակ կահաւորուած սենեակին մէջ վառարանը հաճոյական ջերմութիւն կը տարածէ։ Քարիւղի կանթեղը խաւարին դէմ ոսկեբերով՝ լոյս կը տիրէ։

Եօթը հոգի ենք սենեակին առաստաղին տակ։ Մեծ մայրիկը – ալեցիկ հասակով և դեռ թարմ դեղով – իր հոգեակ թոռնեակին մօտ է։ Փոքրիկը ընդարձակ գիտակից՝ իրեն շտապուած սիրոյն՝ չփայած է։ Սեւուկ սեւուկ աչուկները մեծ մայրիկին աչքերուն մէջ կարծես կ'ուզէ մխրճել, այնպէս սեւեռուն և վառվռուն անոր կը նայի և փոքրիկ թաթիկներուն անոր բամպակէ ապտակիկներ կը տեղացնէ։ Հարսը ափոսի մը վրայ նստած՝ ձեռագործով զբաղած է։ Եւ հնուանդ սովորութեան համեմատ դեռ լուութիւն ունի։ Մայրս գուլպայ կը հիւսէ և գլուխը շարժելով ինծի կը նայի։ Քիչ մը սրտնեղած կ'երեւայ։ Իրաւունք կու տամ – գուլպայ ծակելու մէջ մրցանակի կրնամ արժանանայ։ Նա երբեմն մեզմ ձայնով կ'երգէ։ Անոր մելանուշ ձայնին կարօտ բառերը ականջիս դեռ կը հնչեն. կը խօսի հօրս հետ, որ Ռուսաստան է իր եղբօրը հետ, որուն կինը, – մեր հարսնուկը – սրտով կ'երգէ՝ հոգւով կու լայ։

Եղբայրս ու ես դաս կը պատրաստենք՝ Սպիտակոտրանին վրայէն։ Երկու էջ արտագրութիւն ունինք, և նոյն երեսները պէտք ենք քան անգամ կարդալ։ Ուսուցիչին սպառնալիքը մեր ականջին մէջ կը հնչէ՝ մէկ անգամ պակաս կարդալուն՝ ճլոտի երեք հարուած։ Կը գրենք ու կը կարդանք առանց հասկնալու և ձանձրոյթը մեր կրակոտ հոգիները կը դրաւէ։ Ու յանկարծ կարծես մէկ հարուածով նեռուած՝ մեր մեծ հայրիկին թեւե-

Numérisé par CDMF (PP) - 2013

բուն մէջ կ'իյնանք։ Նա – յուրջ, բայց և միշտ մաքրմիկ – մեղի կը նայի իր արծուի աչքերովը և պլանիկի վերջին մնացորդը մոխրամանին մէջ կը դնէ։ Գիտենք՝ անոր տրամադրութիւնը վատ չէ և երկու եղբայրներ կ'աղերսենք.

– Մեծ հայրիկ, մեղի պատմութիւն պատմէ։

– Աղէկ, պայմանով որ դասերը պատրաստ ըլլան։

Մեղի կը հրամայէ Սարգսատարանները ձեռք առնել։ Ան բերանացի դիտէ։

Կը կարդանք։ Գոհ կը մնայ։

– Լաւ, պատմեմ ձեղի կարճ, բայց յուզիչ պատմութիւն մը։ Գիտէք ո՞ւր է փերիներու – ոգիներու – ջաղացքը։

– Ոչ, ես չեմ գիտեր, կը պատասխանէ եղբայրս։

– Մեծ հայրիկ, ես գիտեմ, շատ լաւ գիտեմ, վրայ կը բերեմ։ Անցեալ տարի, երբ Ս. Աստուածածին ուխտի կ'երթայինք Ճամբան անոր քովէն կ'երկարէր և մենք ամէնքս առաւօտը արշալոյսէ բաւական վերջը և ապա մայրամուտէն յետոյ անդէ անցանք։

– Ինչո՞ւ այնպէս ըրիք։

– Պատճառ մը բան որ՝ այն տեղ փերիներու ջաղացքը կայ և պէտք է ոգիներէ խոյս տալ։

– Այնպէ՛ս, մտիկ ըրէք։ Մեր թաղէն մէկ ժամ հեռու Ս. Աստուածածնի սրբավայրին մօտերը ձորի մը քով ջաղացք մը կար։ Նոյն իսկ հեռաւոր վայրերէն շատերը հոն կը տանէին իրենց արմտիքը ապալու։ Մենք ալ՝ մեր ցորենն ու գարին հոն կը տանէինք։

Ջաղացպանը մեծ հայրիկիս բարեկամներէն էր, հետեւաբար որքան շատ տարիներ յետոյ։ Անիկա բարի էր և ողորմած։ Հարուստներու ցորենն ու գարին, վարսակն ու հաճարն արդար գնով կ'աղար, իսկ աղքատներու փոքրիկ արտերուն համեստ արդասիքը շատ անդամ ձրիօրէն ալիրիքին տակ կը դնէր։ Զկար մէկը՝ որ դինքը չսիրէր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Բայց ունէր կին մը, որ չեռ գիտեր՝ ինչպէս գինքը գտած էր։ Եւ յաւ էր որ անոր հետ ամուսնացած էր, ապա թէ ոչ անոր բրած չարիքներուն թիւը պիտի չըլլար։ Անոր գանկին մէջ կարծես այնքան ատանայ կար, որքան մաղ անոր գլխէն բուսած։ Շատախօս էր, ժլատ ու նախանձոտ։ Ուր զրպարտութիւն կար՝ հոն անոր մէջն էր, ուր բամբասանք կար՝ հոն անիկա ներկայ էր։ Ամէնուն տան մէջ եղածին տեղեակ էր. և մունետիկն պէս ամէն բան անցուցած կը հաղորդէր։ Զէր հասկցած որ լեզուն ակռաներով ու շրթունքներով փակուած է, որպէսզի չատ չբացուի։ Սակայն բարեբաստութիւն իր քանդածը ամուսինը կը շտկէր և հրդեհը անոր մոխիրի կոյտերու չէր վերածեր։ Խեղճ ջաղացպանը թէ որքա՜ն նեղութիւն կը կրէր անկէ, մինչ՝ վերը՝ Դատուած և վարը՝ ինքը գիտէին։

Այս բարի այրը և շատ կինը գաւակ մը ունէին։ Մանչուկ էր այն գեղանի, ամէն մարդու սիրելի։ Դպրոցին մէջ առաջինն էր, բակը՝ վնասուած խոպի ընկեր։ Պարտէզին՝ քաղուած վարդ, ջաղացքին ճակատին՝ դարդ։

Տարի մը մարախն եկաւ սրբեց գաշտ ու արտ։ Սոփն իր մերկ թեւերը տարածեց և գերանդին կեանք է որ հնձեց։ Շատերն ելան օտար երկիր գացին։

Ջաղացպանն առանց գործի մնաց։ Օր մըն ալ՝ տաքուկ համբոյր մը գրոշմեց իր մանչուկին անկնճիռ ճակատին և օտար աշխարհ մեկնեցաւ՝ առանց կնոջը լուր տալու, որպէսզի իր հեռանալուն խոչընդոտ չըլլար։ Գնաց և կինը մնաց առանց սանձի։ Լեզուն աւելի լայնօրէն բացաւ։ Շաղոքորթեց ու լարեց։ Զրպարտեց ու բամբասեց։ Ամէնուն տան մէջ խնդիր ու կռիւ բարձրացաւ արագ։

Բայց վա՜յ անոր որ ուրիշին տունը կը քանդէ։ Աստուածն կը սերմանէ։ Այնպէսին իր տան հիմքերը երկնքին կը ցուցնէ։ Չար կնոջ ամուսինն լուր չեղաւ։

Numérisé par CDMF (PP) - 2013

Քիւրաե՞ը յափշտակեցին թէ բնական մահը զինքը սև հողին մէջ ամփոփեց, դեռ մինչև այսօր անծանօթ կը մնայ: Իսկ իր որդին հօրը սիրոյն արեգակէն հեռու՝ տկարացաւ ու դունատեցաւ: Մահը կարծես տանը սեմքին դարանակալ կեցած էր: Իսկ չար մայրը կը չարունակէր յեղուի մեղքերը, թէեւ նօթի, մերկ և տղուն չէր նայեր:

Օր մը չար կինը ագքաաի մը խրճիթը մտաւ: Եւ նորատպակ հարսին երեսին պոռաց՝ «Ա՛յ հարս, ի՞նչ կեցեր ես. և դատակ կը մեծցնես սիրականիդ ցուցնելու համար: Այն Ռուսասան մեռած է և դիշակեր անասուններուն կեր փոուած»:

Հարսը որ միշտ համեստ էր և դուստ, թէեւ չհաւատաց ըսուածին, դիտնալով անոր դէշ բնաւորութիւնը, սակայն քարը բերնէն մինչև ճորոխ նետեց ու պոռաց՝ «Ա՛յ կին, քանզելուն և խարելուն պատիժը ծանր է, սակայն քաջութիւն չէ»:

Չար կինը աշխարհ իրար անցուց: Հարսին ուսերուն աստղերու թիւով մեղք բեռցուց: Ու այդ օրը ուշ ատեն ջաղացքի ճամբան բռնեց: Բայց տես երկինքէն՝ շանթ ու կայծակ, ամպերէն՝ անձրև ու կարկուտ, ճորերէն՝ ջուր ու քար: Կինը հասաւ ջաղացքին տեղը, բայց ո՞ւր ջաղացք: Հազիւ քանի մը դերաններ և ամէն բան աւեր: Եւ յանկարծ անոր կուրծքին տակ կարծես մօր սիրտ մտաւ և պոռաց երկինք պատռելու սաստկութեամբ՝ «Զաւա՜կս»:

Մանչուկը հոն չկար: Շանթահա՞ր եղած էր: Մէկը զինքը փախցուցա՞ծ էր:

Մայրը յուսակտուր՝ վազեց խելացնոր և գետին ինկաւ ուշակորոյս: Երբ աչքերը բացաւ՝ ի՞նչ տեսնէ: Ինքը «չար» հարսին մօտ և մանչուկն իր գով: Բայց նա ինքը չար էր, շատ չար: Հարսը նախատեց՝ որ բարիք ըրած էր, հարսը լացուց իր բերնէն թափած ժահրով և տղուն ձեռքէն քաշելով ելաւ գնաց անտառին

Numérisé par CDMF (PP) - 2013

մօտ՝ լքուած խրճիթի մը մէջ բնակելու։ Մէկը չհասկըցաւ անոր ըրածը։ «Հրէշ» ըսին ամէնքը և իրենց գլուխները շարժեցին։

Մեկն ոգան օր չտեսաւ, արեւ չտեսաւ։ Մայրը թաղէ թաղ շրջուն և այլևս ամէնէն արհամարհուած։ Ինքը հօրմէն որբ և գրեթէ անանուն։ Ամէն ջաղացքին տեղ կ'երթար։ Հոն կը յիշէր անմոռանալի գեղեցիկ օրերը հայրիկին հետ, անոնմա՛ն հայրիկին հետ։ Արտասուքները հեղեղի նման անոր դէմքին այտերուն վրայէն վար կը վազէին։ Հոգին սրտէն կ'ուզէր փախչի՛ երթա՛ լ, մինա՛ լ հայրիկին հետ, և օր տեսնել, արեւ գտնել։ Կու լար կու լար ու գոգցեր վշտերը ջաղացքի ջուրերուն տուած հիւզակը կը դառնար։

Դուք, թոռնիկներս, լաւ գիտէք մեր ապարակին կածանը։ Հսկայ հսկայ, ամէն պատառ պատառ եղած ժայռերու վրայ բուսեր են մեծ ու փոքր ծառեր՝ ամէնն ալ՝ այս հունտէն, այն սերմէն։ Այնպէս ալ հարսին խօսքերն ու վերջին գեղեցիկ դարձը, ժողովուրդին արհամարհանքը՝ չար կնոջ սրտին մէջ իբրեւ սերմեր մտան։ Անիկա օրէ օր ինքն իր մէջ ամփոփուեցաւ, զգաստացաւ և օր մը ալ եկեղեցւոյ դուռը փնտռեց։ Հոն գնաց ինկաւ Յիսուսի խաչին առջև, մոմ վառեց Տիրամօր պատկերին առջև, և քահանային իր մեղքերը խոստովանեցաւ։ Անկէ վերջ մէկ շարիքին դիմաց՝ հաղար բարիք ըղձաց ընել և կաթողին սիրով իր զաւակին փարեցաւ։ Բայց վերջինս տխուր էր, չա՛տ տխուր։ Հայրը կը փնտռէր։ Ու օր մը ալ երբ ջաղացք գացեր էր լալու, ալ չվերադարձաւ։

Ոմանք կարծեցին թէ՝ հայրը, որ դեռ գուցէ կ'ապրէր, եկած է և գինքը փախցուցած տարած ըլլայ։ Բայց ես այնպէս կը համարիմ թէ՝ Փերիները – ոգիները –, որոնք ջաղացքի աւերակներուն մէջ նստեր էին, գինքը իրենց մէջ առին՝ պահեցին։

Numérisé par CDMF (PP) - 2013

Զար կինը, այժմ այնքան բարկացած, մարդկան քով փնտռեց իր զաւակը և չգտաւ։ Սարերէն պաղատեցաւ իր զաւակը, բայց ոչանչ չկարեցին։ Իր հառաչանքներովը ջրերուն կոհակները յուզեց, և անոնք հառաչելով գլորեցան և զաւակին տեղը չցուցուցին։ Ջաղացքին քարերը վեր վերցուց ու վար դրաւ, մէկ անգամ չէ, հազար անգամ, և զաւակը չկա՞ր ու չկա՞ր։

Դժբա՞խտ կին։ Մեռաւ ուռանց իր ամուսինն ու զաւակը տեսնելու, բայց մեռաւ իբրեւ բարի կին և դեռ մինչեւ հիմայ Ջաղացքին քով քար մը կայ՝ վրան ծունկի նշաններ։ Ասոնք անոր ծունկի հետքերն են։ Ժամերով այդ քարին վրայ ծնրադիր՝ աղօթքի կը կենայր և իր մեղքերուն վրայ կու լար ու կու լար։

Այդ քարը կը կոչուի՝ Մաղդաղինէի քար»։

---

## ԽԱՓՈՒՐԵՆԵՐԸ

Մե՛զմ, չա՞տ մեզմ ձայն մը սրսրացին քով լսելի կ'ելլար։ Նայիկն էր, որ կ'երգէր։ Մեզմ կ'երգէր և որոնք թեթեւ մը կը շարժէր, որպէսզի խարթ մարքուն ու ներքնները չխանգարէր և անոր անէծքներու որոտումը չլսէր։ Շա՞տ մեզմ կ'երգէր, որովհետեւ կը վախնար թէ՝ դուցէ գոբաւոր չեշտ մը իր տղբարիկին ականջիկին անհաճոյ դար։ Եւ կ'երգէր քնքուշ ու անուշ, զի կը սիրէր իր եղբայրիկը և անոր խաժ աչուկներուն քուն կը մաղթէր։ Ու ի՞նչպէս կրնային անոր շրթներէն կանչ ու աղաղակ պոռթկալ, երբ իր սրտի հատորը, իր Սուրիկը հիւանդ էր, չա՞տ հիւանդ։

Numérisé par CDMF (PP) - 2013

Նապիկ ու Սուրիկ հարազատ քոյր ու եղբայր էին։ Նապիկ հարիւ տասնուերկու տարու աղջիկ էր և սակայն այնքան լաւ աճած, որ կարծես հարսնցու էր։ Անոր դեղին ու շնորհքին հաշակը գիւղին հովերը մինչև քաղաքը հասցուցած էին։ Սակայն ան պարկեշտ աղջիկ էր և իր գեղեցկութեան վրայ կը չիկնէր։ Համեստ կը հագուէր և մեռաքսի նման նուրբ մազերը սպիտակ պարանոցին վրայ կը վէտվէտէին։

Անոր հագածութեան միակ տարբերան Սուրիկն էր։ Մանչուկ մը՝ մէկ ու կէս տարեկան։ Սիրուն ու բարի։ Աչուկները կապոյտ՝ ինչպէս երկինքը։ Շատերը դինքը Խաժակ կ՚անուանէին։

Նապիկ և Սուրիկ ունեցած էին խնամօտ մայր մը, որ մանչուն ծնունդէն ասոնուերեք ամիս առաջ մեռաւ։ Քոյր ու եղբայր օր ու գիշեր անոր մահը սգացին։ Պրպտիկը սակայն լալով մայրը կը փնտռէր և քրոջ սիրտը կը յուզուէր ասոնց կապին։

Անոնց հայրը դժբախտաբար գինով էր։ Հանդէպն ու մտածութիւնը գինին էր և անոր հետ՝ օդին։ Քրտինքով չահած դրամը – յաճախ նոյն իսկ պարտքով – գինետանին կը յանձնէր հաւատարմօրէն։ Երբեմն՝ երբ մտագիր կ՚ելլար թէ՝ Նապիկին քով դրամ կար, – վասն զի աղջիկը այդ հասակին մէջ արդէն ոչխին տան համար գեղեցիկ ժանեակներ կը բանէր և գուլպայ կը հիւսէր – անոր ոսկեթել վարսերը ջղայնօրէն կը քաշէր՝ անքուն գիշերներու արդիւնքը Բագոսին զոհաբերելու համար։ Մեռած կնոջը վրայ հազիւ երկու կաթիլ արցունք թափած՝ մէկ շարաթ յետոյ տունը բերաւ ուրիշ կին մը, որուն յանձնեց իր զաւակները, որպէսզի ինքը կապելանոցի ոգեւին ծառայէր։

Մօրուն Նապիկին քիչ մը համակրեցաւ, սակայն Սուրիկը չէր հանդուրժեր։ Ասոր աչքերը կապոյտ՝ խաւ էին – և անիկա կապոյտ աչքէ իբր չար աչքէ կը վախնար։

Numérisé par CDMF (PP) - 2013

Խորթ մայրը Սուրիկին ուսելիքով ու մաքրութեամբ երբեք չհետաքրքրուեցաւ և Նազիկն եղաւ անոր մայրիկը, որ ձեռքի աշխատանքովը գանիկա հոգաց ու խնամեց։

Ծանր պատասխանատուութիւն մը Սուրէնին կեանքին սպասեցաւ։ Կը հոգար։ Կը դողդղար։ Քոյրիկը անոր հոգ ու յոգնութիւն երբեք չզլացաւ։ Բայց մահը վճռած էր փոքրիկը այս աշխարհէն հեռացնել։ Նազիկին ջանքերն ու բժիշկին դեղերը անկարող եղան դինքը անոր ճիրաններէն ազատելու։ Եւ առաւօտ մը արեւին – ձմեռ եղանակի – ճառագայթները ի զուր ջանացին Սուրիկին խամաչուկները բանալ։ Անոնք բացին Նազիկին ակամոգիքները։ Լացաւ ու լացաւ անվերադարձ մեկնումը անուշիկ Սուրիկի, որ ալ հրեշտակ էր երկնքի։

Ձմրան վերջին օրերն էին։ Գաղջ տաքութիւնը երկիրը վերադարձնումի արդէն կը կոչէր։ Եւ Նազիկ իր սիրելի Սուրիկը գերեզմանոց տանիլ տուաւ – սիրուած։ Ամէն ջանք թափած էր փառաւոր թաղումի և յաջողած։ Վասն դի գլխաւոր արգելքները – հայր ու մայր – հիւանդութեան միջոցին մէկ շաբաթով հեռաւոր գիւղ մեկնած էին։

Զիւնախառն ու ծանր հողը Նազիկին աչքերէն մրչտապէս բաժնեց անոր հոգեակը – բայց անկէ բաժնուիլ կարելի՞ էր։ Ինկաւ անոր հողակոյտին վրայ։ Լացաւ ու համբուրեց։ Սակայն վերջապէս ծերունի քահանային խօսքին անսալով՝ ոչխին աղջկան հետ, որ իր անկեղծ բարեկամուհին էր, տուն դարձաւ։ Բոյն էր առանց թռչնիկի։ Ամէն բան հոն էր։ Ամէն բան Սուրիկը կը դիշեցնէր և սակայն նա ինքը՝ տան գոհարն ու միակ դանձը չկա՞ր։ Չկա՞ր ուր ալ փնտռէր։

Բարի բարեկամուհին այն գիշերը Նազիկին մօտ անցուց։ Ան քնացաւ, բայց Նազիկ արթուն մնաց և լոյս ու Սուրիկ ցանկացաւ։ Եւ հազիւ թէ ներս սահեցաւ ոյսա-

Numérisé par CDMF (PP) - 2013

տուհանէն լոյսի չոլը ու գնաց հանդչեցաւ Սուրիկին բաց օրորոցին վրայ՝ Նաղիկ անէն դուրս թռչելով փութիաց գերեզմանոց։

Եւ ի՞նչ տեսնէ։ Ահա կապոյտ ծաղիկներ Սուրիկի սև հողին վրայ։ Խաժ աչուկներն իր եղբօր եկեր էին գինքը տեսնելու — Խաժուրեկներր (*) բուսած էին։

---

## « Ե Ա Տ Ե՛ Ս »

Լեւոնիկի ծննդեան տարեդարձն էր։ Անոր տունը հաւաքուած էին տնեցիներէ զատ ազգականներ ու բարեկամներ։ Զէ՞ որ նա տանը ամէնէն սիրուածն էր։ Հոն էին նաև անոր դասընկերներէն՝ Համիկ և հարեւանուհիներէն՝ Ազատիկ։ Երկուքն ալ յիշողութեամբ զօրաւոր և «Եատես» ընելու մէջ մրցակիցներ։

Ճաշը պատրաստ էր։ Տապկած հաւը եկաւ պառկեցաւ սեղանին վրայ և անոր հոտը բանեց անջրպետը։ Ամէնուն վրայ զուարթութիւն իր թեւերը բացաւ։ Համիկ և Ազատիկ սկսան իրարու նայիլ։ Դարձեալ մրցութիւն և կռիւ պիտի ունենային։

Բոլոր սեղանակիցներուն բերանէն մէկ շեշտով լսելի եղաւ՝ «ճինեկը, ճինեկը»։ Եւ իւրաքանչիւր ոք իր պատառը ուռած՝ սկսաւ «ճինեկ»ը փնտռել։ Ան մէկ հաւ էր և Համիկ լաւ գիտէր թէ հաւին ո՛ւր տեղը կը գտնուէր։ Բայց բախտը Լեւոնիկին ժպտեցաւ և զուարթ բացականչեց՝ «ճինե՛կը, էէ՛, ճինեկը ի՛մ մօտս է։ Ո՞վ կ՚ուզէ քաշել։

---

(*) Խաժուրեկը ձմրան վերջը և գարնան սկիզբը կը բուսնի։ Կարճ ցօղունով և կապոյտ՝ խաժ ծաղիկ մըն է։

Numérisé par CDMF (PP) - 2013

– Ե՛ս, ե՛ս, պոռաց Աղաւնիկ։

– Եւ ե՛ս, ե՛ս, ձայն տուաւ Համիկ։

Լեւոնիկ դայն սիրով յանձնեց Աղաւնիկին։

Աղաւնիկ ճինեկին (հաւքաչին) մէկ կողմէն բռնեց և Համիկ միւս կողմէն բռնեց։

– Թէ ես խաբեմ, ի՞նչ պիտի տաս, հարցուց Համիկ։

– Իսկ եթէ ես յաղթեմ, դուն ի՞նչ կը խոստանաս, պատասխանեց Աղաւնիկ։

– Ես քեզի գեղեցիկ, շատ սիրուն գրիչ մը կու տամ։

– Լա՛ւ, ես ալ քեզի երկու գոյգ գուլպայ։

– Շա՜տ աղէկ, շա՜տ աղէկ, ըսին ներկանները և Համիկ ու Աղաւնիկ հաւքաչին երկու թեւերը բռնած՝ քաշեցին ու բաժնեցին։ Եւ անկէ վերջ անոնք իրարմէ ետ բաժնուեցան և կարծես թշնամի եղան։ Նոյն ճաշի պահին երկուքն ալ փորձեր ըրին խաբելու, բայց մէկն ալ չյաջողեցաւ և ստէպ ծիծաղով ու կատակով կը լսուէր, «Միտքս է, միտքս է»։ Մանաւանդ Աղաւնիկ որ՝ առաջ հանդիստ նստած՝ բերանն ու փորը կը լեցնէր, այժմ ամէն բան Համիկին կը հրամցնէր։ Խեղճ Համիկը «Միտքս է» ըսելէն յոգնեցաւ և պոռաց. «Գնա՛ կորիր, սատանայ»։

Անցաւ մէկ շաբաթ։ Բարդուեցաւ երկրորդ շաբաթը և սակայն Աղաւնիկ ու Համիկ դիրար չկրցան խաբել։ Աղաւնիկ նոյնիսկ իր ցուցամատին վրայ կարմիր դերձան մը կապած էր՝ միշտ յիշելու համար։ Քանի մը ծերեր խորհուրդ տուին՝ «բաս»ը եռ ընել և սակայն մէկն ալ յանձնառու չեղաւ։

Բայց ահա օր մը մէկը Աղաւնիկին խորհուրդ տուաւ այր մարդ ձեւանալ և այնպէս Համիկը խաբել։ Աղաւնիկ ուրախացաւ։ Հագաւ իր մեծ եղբօր հագուստները, մրով պզտիկ մօրուք մը կցակին կպցուց և գախուեցիկ մրն ալ – պեխիկ մրն ալ – քթին տակը յարմարցուց։ Նայեցաւ, նայեցաւ հայելիին մէջ ու գոչեց՝

Numérisé par CDMF (PP) - 2013

«Հրաշալի՜ է։ Համի՜կ, էհէ՛յ, յապիտեցար։ Խե՜ղճ ապայ»։

Համիկ խաղէն յոգնած ու դադրած տունը եկած էր և երեկոյեան՝ ընթրիքը կ'ընէր։ Տնեցիներուն կը պատմէր թէ՝ այդ օրը Ադաւնիկ դարձեալ ի՜նչ փորձեր բրած էր գինքը խաբելու։ «Խեղճ ապջիկը, բաւ, նիհարցեր է հոգէն։ Սակայն պիտի չխաբուիմ և պիտի խաբեմ»։

Բայց ահա տան դուռը թակեց և քովի սենեակը եկաւ մտաւ երիտասարդ մը, գլուխն ու մազերը ծածկուած, քթին տակ պեխիկ մը և կզակին վրայ մօրուքիկ մը թողած։

«Համիկ, ներս եկուր» լսելի եղաւ ձայն մը և Համիկ վազեց քովի սենեակը, ուր նորեկը անոր յանձնեց նամակ մը, լսի՜ կ ինչի՜ կ։ Ապա մինչ Համիկ նամակը բանալով դրպած էր՝ նորեկ երիտասարդը քովի միւս սենեակը անցնելով, պոռաց՝ «Եաուե՜ռ։ Համի՜կ, տուր գրիչը»։

Համիկ նամակը թողուց՝ նայեցաւ ձայնի կողմը և ահա Ադաւնիկը՝ իր ասջեւը բաց գլխովը և երկար մազերովը, բայց ղեռ՝ պեխաւոր ու մօրուսաւոր։

– Զէ՜, չէ՜, այս խաբէութիւն է, այս չ'արժեր, պոռաց Համիկ։

Դեռ մինչև այսօր Ադաւնիկ և Համիկ իրարու հետ վէճ ունին։

– Խաբեցի՜։

– Չխաբեցի՜ր։

Numérisé par CDMF (PP) - 2013

# ԿՏՐԵՐ, ԿՏՐԵՐ

«Սա կեռասը, որ տերեւին եռեւէն ինծի կը նայի, պէ՛տք է, պէ՛տք է որ իր ճղիկէն բաժնեմ և կոկորդէս վար սահեցնեմ»։ Այսպէս վճռեց Խաչիկ։

Այն տարին կեռասենիները շատ պտուղ տուած էին և ամէն մէկ հատիկը կարծես խնձորիկ ըլլար՝ համեղ, հիւթեղ, մսեղ, մարմնեղ։ Կերաւ մարդը և յագեցաւ։ Կայսահարեց թռչունը և կշտացաւ։ Բաւական մաս մը ալ որդնկեր եղաւ ու ինկաւ և կամ ծառին վրայ չորցաւ։

Խաչիկ կեռաս շա՞տ կը սիրէր։ Օրը երեք չորս անգամ ծառի վրայ կը թռուէր։ Կ՚ուտէր, կ՚ուտէր ու կը յագենար։ Իսկ երբեմն փորը կը բռնէր ու կը գայթաղուէր։ Հասկնալի է՝ փորի ցաւի պատիժը կ՚առնէր։

Անցաւ կեռասի շրջանը. աշխարհի վրայ կա՞յ մը ընտրենական բան մը։

Օր մը Խաչիկ Գիսակենց պարտէզին մօտէն կ՚անցնէր։ Նայեցաւ վեր՝ երկար ու բարակ կեռասենիին, որքա՞ն սակայն անոր վրայ եւած էր Գիսակին հետ և կեռասները ափով բերնէն ներս նետած։ Հիմայ տերև կար միայն. ո՞ւր էին կարմիր այտիկներով այն կեռասները։ Չկայի՞ն, չկայի՞ն։ Բայց ահա՛ շատ բարձրիկ ճիւղի մը դիւրաբեկ ճիւղիկին վրայ՝ կեռաս մը, որ կը խօսէր Խաչիկին՝ «Համեղ եմ, ազուոր եմ. զիս հարկաւ պիտի ուզես, բայց ճանկերուդ մէջ պիտի չիյնամ»։

Ուշ մնացած պտուղը միշտ աւելի փնտռուած է և մանուկներու հաճելի։

«Սա կեռասը, որ տերեւին եռեւէն ինծի կը նայի, պէ՛տք է, պէ՛տք է որ իր ճղիկէն բաժնեմ և կոկորդէս վար սահեցնեմ։ Համո՞վ համո՞վ ուտեմ», վճռեց Խաչիկ։

Քար քարի վրայ անոր վրայ տեղացուց իրրև թէ ընկոյզ ըլլար։

Numérisé par CDMF (PP) - 2013

Կեռասը իր տեղը կեցեր էր հանգարտ և գինքը կը ծաղրէ՛ր։

Խաչիկ երկար ձող մ՚առաւ և սկսաւ անով կեռասը վար բերելու ճգնիլ։

Բրանքը ճակատէն վար կը հոսէր. իսկ կեռասը վերը կը յամառէր։

Անդուխով ալ կարելի չէր բան մ՚ընել։ Խաչիկ երկնկեկ ու բարակ ծառը սեղմեց իր կրծքին ու թեւերուն մէջ և երա՛ւ ելա՛ւ։ Ճիւղ կոխեց, ճիւղ անցաւ։ Հասաւ կեռասին ճիւղին քովերը. փորձեց դայն իրեն քաշել՝ չեղաւ, կեռեճանն ալ օգնութիւն առաւ՝ չյաջողեցաւ։ Շարժեց ճիւղը՝ օգուտ չբրաւ։ Գոնէ խելացի դանուեցաւ և ճիւղին ու կեռասին հետ վար իջնալու փորձ չբրաւ։

Ծառէն ամօթով վար իջաւ։ Բայց կեռասը գինքը կը քաշէր։ Պատուոյ զգացումն ալ գինքը կը գրգռէր. ի՞նչ լսել է՝ կեռասի մը հատիկը իրեն պիտի չհպատակէր։

Անգամ մը ալ ծառին նայեցաւ և պատուոյ գիտեց, ապա, գլուխը շարժելով դայրոյթով հեռացաւ։

Գնաց վազեց տուն և տանելով կացինը եկաւ առանձին։ Աչ դարձաւ, ձախ դարձաւ։ Մէկը չկար։ Սուր կացինը շարժեց և հարուածը իջաւ։ Ծառը դղդղաց։ Հարուածները կրկնուեցան և կեռասենին հառաչելով ինկաւ։ Խաչիկ սարսափեցաւ, սակայն համեց կեռասը առնելով փախաւ։

Մինչ կը կարծէր թէ մէկը իր չարութիւնն իմացած չէր, յանկարդ օրը վարժարանին մէջ ան ու պղպեղը տեսը լեղուն ու կոկորդը, իսկ ճգնան ու «Փալախա»ն ձեռքերն ու ոտքերը տանջեցին։

Անցան շաբաթներ և օր մը Խաչիկ Գառնիկենց կալին մէջ սկսաւ իր ընկերներուն հետ վէգ խաղալ։

Հետաքրքրական խաղ էր։ Վէգը նեակ օղին մէջ վեր, եթէ վար իջնայ և խոտաչափը կոպմը վեր նայի, վա՛յ քեզի, գող ես և ծեծի արժանի։ Կարգը միւս ըն-

Numérisé par CDMF (PP) - 2013

կերոջդ է, եթէ նա միւսին հակառակ կողմը բերէ՝ ապա է և ծեծէ ապատ։ Եթէ երրորդը կոշմնակի հաւասար կողմը վեր ունենայ՝ թագաւոր է և կրնայ հրամայել դողը ծեծելու։ Երբ չորրորդ ընկերը վեր նետէ և վէգը վար իյնալով կոշմնակի քիչ մը ուռուցիկ կողմը վեր մնայ, ան վէգիր է, դահիճ է։ Ան թագաւորին հրամանին համաձայն թաշկինակով կամ չուանով այնքան հարուած պիտի տայ դոցին կոնակին, որքան առեն որ խաղացողներէն մին կամ միւսը վէգին կոշմնակի հաւասար կամ քիչ մը տարբեր կողերը չեն բերած։

Վէգի այս խաղը զուարճալի և հետաքրքրական է։ Կան վէգի խաղի դեռ ուրիշ տեսակներ, որոնցմէ մէկուն համաձայն պարտուողը իր վէգը ընկերին կու տայ։

Այս և այն խաղը խաղաց Խաչիկ։ Բայց բախտ չունէր։ Կը նետէր՝ «դող» կու գար և ծեծին տակ կոնակը կը ցաւէր ու կը տաքնար։ Պարտուեցաւ և վերջին խաղին մէջ վէգերը կորսնցուց։ Սակայն ան կ'ուզէր խաղը շարունակել և տուածները վերստանալ։

Սատանան փորն ինկաւ, միտքը եկաւ՝ ի՞նչ ազուրիկ ուլիկ մը ունին Գառնիկենք։ Երթամ առնում անոր վէգը։ Մտածելն ու վազելը մէկ ըրաւ։ Գնաց փարախը և բռնելով անուշիկ ոչխ ուլիկը՝ սուր դանակով կտրեց բաժնեց սրունքը։ Քաշեց կաշին, նետեց միսը։ «Վէ՛գ, վէ՛գ» պոռաց ու ճամպարեց ընկերներուն մօտ։ Ամէնքը զարմացան մնացին։

Բայց ան ալ զարմացաւ և սատիկ ցաւ մը ականջները նեղեց։ Եռեալը նայեցաւ. Գառնիկենց Կիրակոս դանոնք բռնած էր ու կը քաշէր։

Խաչիկին հայրը սոխպուեցաւ յետոյ Գառնիկենց ուլիկ մը տալ։

Numérisé par CDMF (PP) - 2013

# ՄԱՆՈՒՇԱԿԸ

Երկնքին ցօղը իջաւ մանուշակին վրայ։

Արեգակին շողը հանդչեցաւ մանուշակին վրայ։

Եւ մանուշակը բացուեցաւ։ . . . : Անմահն սիրուն։

Անուշ բոյր մը, զգլխիչ հոտ մը համայն անջրպետը լրուեց։

Հովիկը նազիկ բոյրը քաղցրիկ՝ կապած թեւիկին խնդալին՝ թռաւ հիւսիս ու հարաւ, արեւելք ու արեւմուտք։

Ծաղիկները հոտը ասին։ Եկան տեսութեան։ Ամանք նախանձեցան։ Մանուշակը զսպզսպաց։

Թռչունները բոյրը զլսին։ Փութացին տեսութեան։ Ապշահար լսեցին։ Մանուշակը զգածուեցաւ։

Մարդիկ հոտէն ձգուեցան։ Վազեցին տեսութեան։ Միասնաբար զմայլեցան։ Մանուշակը յուզուեցաւ։

Հովիկը մանուշակին բոյրը տարա՛ւ տարա՛ւ՝ հասցուց մինչեւ երկինք։ Եւ ահա փոքրիկ հրեշտակ մը հոտէն գինովցած՝ թողուց արքայութեան երջանիկ կեանքը և վար խոյացաւ՝ արտասուքի աշխարհը։ Շատ չմնացաւ։ Բոյրը ճամբան ցուցուց, անշեղ։ Գտաւ մանուշակը և ուղիւը քարացած՝ կեցաւ։ Նայեցա՛ւ, նայեցա՛ւ։ Ապա ձեռքերը վար խոնարհեցուց։

Մանուշակի տունկի մէջէն զոլ անցաւ ու անոր համեստաբեն փսփսաց՝ «Մի հպեր ինծի երկնային ձեռքերդ, ես երկրաւոր՝ անոնց արժանի չեմ»։

Հրեշտակը բսաւ՝ «Զքեզ երկինք կ'ուզեմ փոխադրել։ Եկո՛ւր։

Մանուշակը մրմնջեց՝ «Դուն հանձէ երթալ, երբ դեռ սուրբ Պետրոս երկնքի դուռը չէ փակած։ Թող զիս հոն, ուր զիս իմ Արարիչս գնել հաճեցաւ։ Իսկ եթէ ինծի բարիք ընել կը բաղձաս՝ հրամայէ որ՝ իմ շուրջս և վրաս բարձրանա՞ն, հատա՛կ նեռեն մացաւ ու խոտ և

Numérisé par CDMF (PP) - 2013

*Եւ՝ անոնց տակ ապրիմ աննշմա՛ր ու թաքո՛ւն, բայց միշտ բուրու՛ն։*

*Եւ անկէ վերջ խոնարհ մանուշակը խոտերու մէջ կ՚ապրի ծածկուա՛ծ, տակաւին միշտ աւելի անուշահոտ և միշտ ամէնուն աւելի սիրելի։* (*)

---

## ՍԳԱՒՈՐ ԹՌՉՆԻԿԸ

*Ինձի պատմած են և ես ձեզի կ՚ուզեմ։ Թէ որքան ճիշդ է, ես ևս չեմ գիտեր։ Միայն այսչափը տեսյ կը յիշեմ, որ ես ալ սպասը թռչնիկին կիսաւեր բունիկին մէջ ծպրիկ սփռած եմ։*

*Դէպի ապարակները կ՚երթայինք։ Հանիկս և ինձի հետ ուրիշ ուղեւորներ ալ կային։ Նորածագ արեգակին ճառագայթները սկսան նախ յամբօրէն և ապա արագօրէն լեռ ու սար, գաշտ ու հովիտ, տուն ու դոմ ոսկեզօծել։ Ի՜նչ գեղեցիկ է մեր հայրենիքի արշալոյսը, ո՜րքան բուրումնաւէտ հայրենի տաւօտը։*

*Կ՚երթայինք՝ երբ ամէն մարդ իր ձիէն վար իջաւ – ամէնքս ալ ձիաւոր էինք – և սկսաւ ծպրիկ ժողվել։ Հանիկս ևս ինձի մեր նժոյգէն վար իջնել հրամայեց և անուշ շեշտով յարեց՝ «Տպաս, ծպրիկ հաւաքէ՝ մենաւոր թռչնիկին կիսաւեր բունիկին մէջ դնելու համար»։*

*Հարց տուի. «Ո՞վ է այդ թռչնիկը, որ կ՚ուզէ ծպրիկը»։*

*«Տպաս, շտապէ, բան հանիս և սկսաւ պատմել՝*

*«Մեզմէ տարիներ յառաջ, չա՜տ տարիներ յառաջ՝ հովիւ ազջիկ մը կար.*

---

(*) Համանման տեսիլք մը ունին Գերմանացիներն ալ։



Numérisé par CDMF (PP) - 2013

Այդ հուրի աղջիկ
Անուանն էր Շողիկ,
Սարեր ու լեռներ
Հովիւ ինքն էր:

*Աղջիկ մը կար: Անոր աչքերը սարերու եղնիկի աչքերուն պէս բարակ էին և արագընթաց: Ծամերը ոսկեւորէն փեսուրէն ուելի թուխ և ուսերուն վրայ վէտ-վէտուն: Աչքերը նման մեր կալի մօտիկ լճակին, որուն մէջ մերձաւոր պուրակին թուուտ ծառերու սաւերները կը լողան:*

Այդ աղջիկ սիրուն
Հոգին լեռներուն,
Սիրտ ունէր բարի
Եւ անմեղ զառի:

*Օր մը տեսաւ թէ՝ ինչպէս իր տաղնուէն կը սուրայ եղնիկ մը, լեզուն բերնէն դուրս, սաքին արիւնը՝ կաթ կաթ: Ինքն ալ եղնիկ մը՝ վազելով հասաւ վիրաւոր եղնիկին:*

*Գլխուն լաչակը վար քաշեց ու կապեց վէրքը սիրուն եղնիկին, որ սկսաւ անոր մատները լպել:*

Եւ բարի աղջիկ
Ու ազու եղնիկ
Կարծես թէ դարձան՝
Երկու քոյր եղան:

*Բայց յանկարծ սրտաբուխ հրացանը ապջիկն ու եղնիկը զարկաւ՝ մեռցուց: Ու բարի աղջկան*

Սրբալիկը փոքրիկ
Դարձաւ մի թռչնիկ.
Թռչնիկ ազատոր՝
Թռչնիկ մեներոր:

*Այդ օրէն ի վեր կիսաւեր բունին մէջ ապջկան թռչուն դարձած սիրտը կը կենայ: Զայն չի հաներ, լայ*

Numérisé par CDMF (PP) - 2013

*չբլլար։ Միայն ծպիկ կ'ուտէ և իր ծպիկ հատակը կու-լայ՝ լի՜կ։*

Եւ կ'ուտէ ծպիկ
Աղջիկը թրոչնիկ՝
Սիրտը վիրաւոր
Սուգով ամէն օր։

*Բայց, Հանի, վրայ բերի, ջուր չի՞ խմեր։*

*Նա պատասխանեց, Անոր մօտիկ ծերպին մէջ, մա-մուռին տակ ապջկան ոտքին արիւնը կայ։ Անոր կը նայի ծարաւ պահերուն։*

Մամռին տակ թաքուն
Եղնիկին արիւն
Աղջիկը սգաւոր
Կը նայի անոր։

*Հանին պատմեց ու երգեց։ Նա յուզուած էր, ինչ-պէս և ես։ Հատանք պաւոր ու մենաւոր թռչունին՝ կի-սաւեր բունիկը։ Մեր խոյրերը ակնածանքով վար ա-տինք։ Թռչունին բարակ ոտքերը կարկամած էին։ Թուր վերաւորները դիրուն վրայ ցցուն և սեւ աչքերը սառած։ Ծպիկներ ափեցինք անոր բունին մէջ։ Եւ անոր ախուր ակնարկին մէջ կարդացինք՝ «Զգո՜յշ ձեր ամէն բանին։ Մահը դիւրաւ կրնայ հասնիլ»։*

Numérisé par CDMF (PP) - 2013

# Ս Պ Ի Ն

Մայրս պատմեց մեր սպարթալից թթենիին տակ.

«Մեր հարեւանին որդիները – Լեւոն և Թորոս – անգամ մը իրարու հետ կռուի բռնուեցան և Լեւոն, որ երէցն էր, կրտսեր Թորոսի ճակատին այնպիսի ուժգին հարուած մը տուաւ, որ Թորոս խեղակորոյս վար սա-պուեցաւ։

Լեւոն իր բրածին վրայ ա՛նքան ցաւեցաւ, որ անե-բեւութացաւ։ Ոսոիկաններն ու խնդրարկուները հակա-սակ ամէն ջանքի չկրցան իրմէ հեռք մը դնել և ա-մէնքը այն կարծիքը կայմեցին, որ ալ չէր ապրեր։

Իսկ Թորոս բուժուեցաւ իր վէրքէն, սակայն դէմ-քը խաթարուած մնաց։ Հօրը մահէն յետոյ եղաւ անոր հարստութեան միակ ժառանգը և ամէն խնամք չտայլեց իր կայր և պառաւ մայրիկին։

Տարիներ յետոյ Թորոսենց տան տակի ալեւոր մարդ մ'երեւցաւ։ Անոր դանկը ծածկուած էր խառնաշփոթ մազերով։ Ճակատը հարուստ էր կնճիռներով, դէմքը՝ մազապաթի պէս։ Անոր կրակն ու այտերը պատուած էր սպիտակ ու անխնամ ճգուած մօրուք մը։ Անիկա պիչ պիչ տանը նայեցաւ։ Ծունկերը սկսան կթսալ ու դող-դողալ։ Մեղմ հեծեծանքով՝ կոխեցաւ մերձաւոր ծա-սին։ Հոն կեցաւ։ Պրկած՝ երեսին գիծերը և շրթունք-ները իրարու սեղմած։ Աչքերը, որոնք միշտ բակին ու շրջակայ հողերուն վրայ սեւեռուն էին, անոր ներքին խռովքն ու յուզումը կը մատնէին։ Բայց ինքզինքը գիտ-ցաւ զսպել ու բակը մտաւ։ Շունը սկսաւ հաչել և Թո-րոս տան դռնէն դուրս եկաւ։ Երբ Լեւոն անոր այնպէս խաթարուած դէմքը տեսաւ՝ զողզողաց և աչքերը վար խոնարհեցուց։

Թորոս հարցուց. «Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզես»։

Numérisé par CDMF (PP) - 2013

Լեւոն գլխարկը վար առաւ, ոպիտակ վարսերը կը շոշոպային. «Ի՞նչ կ'ուզեմ։ Ափ մը հող կ'ուզեմ։ Հո՞ղ»։

Թորոս ձեռքը ականջին դրաւ. «Ի՞նչ կ'ուզես»։

– Ափ մը հող՝ քիչ մը հանգիստ գտնելու համար։ Տարիներէ ի վեր հայրենազուրկ եմ։ Ինծի համար գորգ մը չունի՞ս։ Կը բաղձամ քու հաւատարիմ ծառայ ըլլալ։

Թորոս գլուխը շարժեց՝ «Ահա կերոյ մըն ալ դեռ։ Մեր կարուածը հոգին մեղի կը բաւարարէ։ Բարեկամս, ուրիշ գաւս գտնելու ես»։

– Չիս մի վռնտեր։ Տնտեսապետութենէ կը հասկնամ և անասուններու հիւանդութենէ գերծ պահել գիտեմ։

– Կրնայ ըլլալ, սակայն ինչո՞ւ ծառայ մը աւելի ուզենամ, երբ ես անոր բրածն արդէն կրնամ գլուխ հանել։

– Թոյլ տուր որ մնամ։ Քեզմէ խնդրածս է՝ բաւ մը յարգ անկոպիկս համար և սեղանէն մնացած փշրանքները՝ որկորիս համար։

– Ուզածդ ըլլայ։ Գործդ յաջողցնել լաւ գիտես։ Ներս եկուր։

Լեւոն մնաց հոն, որովհետև պառաւ մայրն ալ բարեխօսեց անոր համար։ Անոր անունը Մկո գրուեցաւ և անիկա այն տան մէջ չտեսնուած ծառայ եղաւ։ Ճաշերու համեստ մնացորդներովը գոհացաւ և տխուրին մէջ պահեցաւ։ Սակայն միւս կողմէ յանձնառու եղած գործին նուիրուեցաւ ու փարեցաւ հոգւով և մարմնով։ Կանչուեցաւ գիշերով ու ցերեկով և միշտ անտրտունջ գործի լծուեցաւ։ Անոր ծանօթութիւններուն հետեւանքով շնչին կարուածքը հաստատարեր եղաւ։ Արջառը անոր հոգածութեամբ աճեցաւ ու բազմացաւ։ Հիւանդութենէ փրկուեցաւ։

Մտատն երբեք խօսք չբրաւ թէ՝ ինքը ո՞վ է և ո՞ւրկէ։ Բայց կոյր պառաւը ստէպ ուշի ուշով անոր ձայնին հնչեւնները ու շեշտը կ'ունկնդրէր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Մկօ տասնումէկ տարի մշտատև գոհարերութեամբ անցուց հոն և ամէն գիրութիւն ու հոգածութիւն մեր-ժեց։ Եւ առաւօտ մըն ալ իր խշտիքին վրայ՝ խաղաղ դէմքով վախճանած գտնուեցաւ։

Իր գոյքերուն մէջ երեւան եկաւ ռուսական անցա-գիր մը և նաև յայտնի եղաւ որ Ռուսաստանի մէջ այն-քան հարստութեան տէր եղած էր, որ անով կրնար հան-գիստ կեանք մը ըմբոշխնել։ Իր անունը կեղծած էր և բովանդակ հարստութիւնը Պր. Թորոսին կտակած։

Երբ մահուան բօթը յարակից պարպանելով հա-ղորդուեցաւ պառաւ տանտիկնոջ, ուզեց որ գինքը նրն-ջեցեալին տանին։ Գնաց հոն։ Մեղմիկ չօշափեց անոր սպիտակ մազերը և ծոծրակին վրայ սկսաւ բան մը որո-նել։ Ու յանկարծ բացականչեց. «Ահաւասիկ հոս է սպին»։ Ցպայ եղած տեղն անպամ մը վար իյնալով գլուխը պատռեց և անկէ սպի մը մնաց։ Ա՛խ, ներսէս միշտ ձայն մը կ՚ըսէր թէ՝ այդ մարդը իմ անդրանիկս է, իմ Լեւոնս է»։

Հայրենիքի կարօտը գինքը հայրենի կտուրը քա-շած էր, իսկ խիղճը ստիպած էր գինքը ապաշխարելու և այն ինչպիսի՛ ձեւով։ Պառաւ մայրը շարունակեց «Լեւոնս, ներուած է, քեզի ներուած ամէն բան։ Իսկ դուն Թորոս, եկուր ձեռքդ անոր կուրծքին ու սրտին վրայ դիր և հաստատէ որ ներած ես, որպէսզի վեր-ջապէս հանգիստ գտնէ հոս՝ իր հայրենիքին ծոցը»։

Մայրս յուզուած ձայնով փակեց իր պատմութիւ-նը ըսելով՝ «Այսպէս են մայրական սիրտն ու սէրը»։

---

Numérisé par CDMF (PP) - 2013

# ԳԻՍԱԿԵՆՑ ՆՇԱՆԸ

Գիսակենց եղեռէն մէկը Նշան կը կոչուէր. այս անունը Գիսակի մեծ հայրիկէն ժառանգած էր։ Անոր մարմինը սեւ սեւ մազերով ծածկուած էր և միայն ճակատին վրայ՝ կոպչերուն միջեւ ճերմակ մազերու փունջ մը կար։ Այս պիսակին համար Նշան անունը ստացած էր։

Նշան մեռնելու եկած էր և սակայն տարիներով ապրեցաւ։

Կալերը դեռ նոր աւարտած էին և ոսկի ցորենը ջաղացք տարուած, երբ օր մը տարերէն ու ձորերէն եղեռնելու, երինջներու և մոպիներու երամակ մը կալերն իջաւ։ Կենդանիները ամիսներով յուսթի մակաղատեղիներու վրայ դիրցած ու ոնքացած՝ եկեր էին լերկ կալերը և կարծես եղածէն չափազանց դժգոհ էին։ Արդէն երբեմն անոնցմէ մէկը կամ միւսը թռիչք կու տար՝ հասնելու այն տեղերը, ոսկայն ճարպիկ և եղջերուի տաք ունեցող խաշնարածները խարազանով կամ սպառնալիքով անոր ընթացքը կը կասեցնէին։ Ձորքոտանիները բերուած էին մարդկային որկորին ողջակէզ ըլլալու։ Ժողովուրդը անոնց դալուն կը սպասէր և տհաքիչ եաքը կայը այրերով լեցուեցաւ։ Հոն եկան հարուստն ու աղքատը՝ իրենց կարողութեան համաձայն ձմրան պարէնն ընտրելու և դնելու։ Այժմէն պէտք էր յուրա եղանակի միսը հոգալ, քանի որ մէկ երկու կանգուն ձիւնի հնաւանքով երթեւեկը դրեթէ կը դադրէր և միջոցները հնարաւորութիւն չունէր ամէն օր. և նոյն իսկ գոնէ ամէն շաբաթ թարմ միս հայթայթելու։ Պէտք էր «պաւուրմա»ն եփել ու պահել։

Գիսակ – դեռ եօթը տարու մանչուկ – իր մեծ հայրիկին հետ կայ դնաց։ Մեծ հայրիկը երկու երինջ և եզ մը ընտրեց։ Ապա սակարկելով գանանք դնեց և վա-

Numérisé par CDMF (PP) - 2013

ճառողը գանոնք Գիսակենց պարապ տեսար քշեց ու բանտարկեց։ Պարապ՝ վասն զի միւս արջառները ապարակ տարուած էին։

Եւ գնուած եզը Նշանն էր։ Ցոյր ու վաղվուն։ Նաև խեռ ու կատաղի, այնպէս որ դայն վաճառողը յորդորեց՝ առանց զգուշութեան չմօտենալ անոր։ Կայտառ անասունը առաջին բոպէէն իր գեղովն ու չարժուններովը մեծ հայրիկին ու Գիսակին ուշադրութիւնը գրաւեց ու անոնց սրտերը գիւթեց։ Գոմի մէջ հանգարտ չէր կենար և հոպար ու մէկ չարժուններով կը ջանար կապանքները խզել։

Քանի մը ժամուան մէջ կալը արդէն պարզուած էր և ամէն մէկը իր գնած անասունը կա՛մ սեռոր տարած էր և կա՛մ ուրիշ ապահով տեղ մը կապած։ Քիչ հաք ուժեղ երիտասարդներ գանակներ սրած՝ սկսան մորթել։ Կարգը եկաւ Գիսակենց անասուններուն։ Երեք հոգի անոնց գնածները բերելու գացին։ Եզը նախ եղջիւրներով ուզեց հարուածել, բայց յետոյ փապաքչական ձայներէ զգլխած՝ գլուխը չարժելով և ականջը բռնուած խոտի խուրձէն աչքն ձախէն փրցնելով յառաջացաւ։ Սակայն յանկարծ կանգ առաւ և կարծես չորս ոտքերուն վրայ քարացաւ։ Անուշ խօսք, սպառնալիք, բռնութիւն ու հարուած օգուտ չըրաւ։ Կեցաւ յամառօրէն։ Ցայտնի էր որ ոնգունքին արիւնի հոտը զարկած էր։ Այո՛, մահուան հոտ կար։ Երիտասարդները ճարահատ՝ եզը մերձաւոր հաստաբուն ծառի մը կապեցին ու երինջները կալ տարուեցան ու մորթուեցան։ Խեղճերուն արիւնը ուժգին դուրս ցայտեց և քիչ հաքը անոնք սկսան հանգալ։ Գիսակի սիրտը դէջ եկաւ և գլուխը եղին կողմը դարձուց և ի՞նչ տեսնէ։ Երրեմնի խեռ անասունին աչքերէն արտասուքի խոշոր խոշոր կաթիլներ վար կ՚իջնէին։ Գիսակ մեծ հայրիկին քովը վազեց։ Դողդոջուն ու փափուկ թաթիկներով անոր ուսերուտ ձեռքը բռնեց ու ըսաւ. «Նայէ՛, նայէ՛ եզը կու

Numérisé par CDMF (PP) - 2013

լայ»։ Մեծ հայրիկը նայեցաւ ու պլոխը չարժեց։ Ապա մորթողներուն դառնալով ըսաւ. «Եկը մի մորթէք։ Ա-նոր տեղ մսի համար եաքէն մողի մը կը գնեմ։ Լծկանի ալ կարիք ունինք»։ Ու արտասուքներն եկը մօտալուտ մահէն ազատեցին։

Զարմանալի անասունը ախոռ տաքուեցաւ։ Իր առ-ջեւը դրուած ամէն ուտելիք մերժեց։ Աչքերը գոմին փոքրիկ լուսամուտին ուղղած էր – ախուր։ Երբեմն՝ սրատապատաս կը բառաչէր։ Օդ կ'ուզէր, արեւ կը ցան-կար։ Այլասութիւն կը պահանջէր ու հին բնակիները կը խնդրէր։

Անցան օրերն ու սահեցան գիշերները և եկը զալի-օրէն «լղարեցաւ», սակայն կամաց կամաց նոր կեանքին վարժեցաւ և ամէն բան մոռցաւ, մանաւանդ՝ երբ միւս եղներն ու կովերն եկան՝ ախոռին մէջ պապէն պատըս-պարուելու։

Զիւնը սար ու զաչա ծածկեց և սառը գետ ու առուակ կապեց։ Գոմին մէջ ցերեկուան լոյսը հազիւ թէ զգալի կ'ըլլար, վասն զի ձիւնը պատուհանին կէսը գոցած էր և ապակիները սառնածաղիկներով զարդարած։ Բայց Փետրուար երկուքին – Տէրնտեսի օրը – ամբողջ ախոռը լուսաւորուեցաւ, վասն զի մեծ հայրիկը եկեղեցիէն օրհնուած մոմեր բերաւ։ Զանոնք կովերուն ու եղնե-րուն եղջիւրներու վրայ հաստատեց ու վառեց։ Թէ ին-չո՞ւ համար, ատոր իմաստը Գիսակ չհասկցաւ, բայց մեծ հայրիկին հարցնելու ալ քաշուեցաւ։ Սակայն տե-սաւ՝ ու ինքն ալ ուրիշներու հետեւելով այդ օրը՝ թըռ-չուններուն ցլիթ նետեց։

Եկաւ հասաւ զարունը. կովերը հոթիերով զուարթ-ճացան և եղները սկսան ոտքերը զարնել, բառաչել ու ազատութիւն պահանջել։ Ա՛լ բաւ էր յոյսերէն ուտել ու որոճալ։ Դիւղացին եւս արդէն անհամբեր էր։ Անոնք արտերը տարուեցան հերկելու համար։ Եւ նորեկ եղը – Նչան անունով ծանօթ – քանի մը անգամ հարեւաններ-

Numérisé par CDMF (PP) - 2013

բու եղնեբու հետ կռուեցաւ ու կռուչ կտրեց։ Նմանապէս բուական զժուար եղաւ գինքը լուծի և արօրի վարժեցնելը։ Բայց ընտելացաւ և ընկերոջը հետ գլուխ ու պոչ չարժելով կը յառաջանար և կարծես գործելէն հաճոյք կը զգար։ Ոտքը երկրին կուրծքը կը պատռէր, սերմերը ակօսներուն մէջ կը թաղուէին։ Տափանը կոչտերը կը հարթէր և վէրքերը կը գոցէր։ Բիչ վերջը սերմերը պիտի վերապարթնուն՝ տաքութեն և ստուերեն ու անուռուռեն հաց ու կեր պիտի հայթայթեն։

Եւ իրապէս արաերը արև տեսան։ Գոյ և ջուր ստեն, կենդանութիւն գտեցան, կանանչութեամբ զարդարուեցան։ Ցորենն ու գարին հատակ նետեցին և երեսնաւոր ու հարիւրաւոր հատիկներով բեռնաւորուեցան։ Արեգակով թրծուեցան ու ոսկի դարձան։ Այդ մանդագն ու գեղանդին արաերը մտան։ Անոնց հարուածներու տակ ծղօտները երկիր խոնարհեցան և որայ որայ եղած՝ կալերը փոխադրուեցան։ Կամելը սկսաւ։ Թէև յոգնեցուցիչ՝ բայց հաճելի գործում։ Մանչ ու աղջիկ կամին վրայ նստած կամ կանգուն՝ ճղոտը իրենց ձեռքին մէջ։ Սակայն բարեբաստութիւն գայն գործածելու կարիքը քիչ է, վասն զի եղնեքը ուրախ գուարթ կը քալեն յառաջ։ Անոնց բերնին դնչանոց անցուած է, որպէս զի ոբանները չուտեն, իսկ ոտոց բերնէն կը հնչէ «հօ՛, հօ՛» կամ հարսանեկան երգ մը։ Երբեմն և կարօտի երգ մը։ Հարսանիքի հոգին ու «քաթա»ին իմաստն է որ ցորեանհատիկի ալիւրէն պիտի պատրաստուի։

Նշան այդ օրերուն անխոնջ աշխատեցաւ։ Ինքն ալ բաժին ստացաւ՝ յարդ։ Կալը վերջացաւ և Գիսակին մեծ հայրիկը ստաւ մը եղնեքը Լեգանի անտառը տանել ուզեց։ Գիսակին բան։ «Այսօր կ'երթամ և քեզի Ձորոխի ափերէն կլոր կլոր քարեր կը բերեմ»։ Գիսակին ուրախութիւնը մեծ եղաւ։ Ձորոխի անունը չատ լսած էր և գիտէր՝ որ ամէն տարի Մայիս 7ին, 17ին ու 27ին – թէ ինչո՞ւ այդ եօթի օրերուն, այդ՝ ինծի

Numérisé par CDMF (PP) - 2013

անձանոթ – չտեսնելու ձևրոխ կ՝երթային։ Այդ գեսը լ-
ուն համար հէքեաթային գետ էր։ Խմացած էր, որ վի-
չապի պէս օղակ օղակ կ՝երթայ, ջրվէժներ կը կազմէ
և սարեր հասնող փրփուրներ կը դիզէ։ Սակայն դայն
տեսնելու բախտին պիտի արժանանար, երբ քիչ մը ա-
ւելի մեծնար։

Մեծ հայրիկը եղներուն հետ գնաց և առանձին վի-
բաղարձաւ։ Իր խոտաւոտ կառարած էր։ Եւ անոր բե-
բած քարերէն թոռնիկը գոհ մնաց։ Այդ երբ օղերը
ցրտեցին՝ մէկը գնաց և եղները եա բերաւ։ Մեծ հայ-
րիկը չգնաց։ Հիւանդ էր։ Անկողին մտաւ և անկէ՝ գե-
բեղման։

Անոր անդարմանելի կորուստը Գիսակ շատ զգաց,
դուցէ և Նշան։

Եղբ իր փութաջանութեամբը և բնատնութեամբը
տնեցիներուն համակրանքը շահեցաւ։ Ջմեռը՝ ախոռին
մէջ, գարունը՝ արտերուն վրայ, ամառը՝ կալերը և
աշունը՝ Լեղանի անտառը կ՝ապրէր և անկէ նոյն խակ
ինքն իրմէ ժամանակին կը վերադառնար։

1907ի Մեծ Պահքն էր։ Ուրբաթ օր մը եկեղեցին
հոծ բազմութիւն մը խռնուած էր։ Քահանան քարոզէն
վերջ յայտարարեց որ՝ մերձաւոր թաղերէն մէկուն
մէջ նոր եկեղեցի պիտի կառուցուէր և քար կրելու հա-
մար եղներ հարկաւոր են։ Շատերուն հետ Գիսակենք
իրենց եղը տրամադրեցին։ Մարդիկ եկան և Նշանը
տարին։

Երկու ամիս յետոյ Գիսակ նորաշէն եկեղեցւոյ մօ-
տերը կը գտնուէր և կը գնէր այն հոկայ քարերը, որ-
ոնք եղները կրած բերած էին։ Եւ ահա յանկարծ իր
ականջին անուշ ու ծանոթ ձայն մ՝եկաւ։ Քիչ յետոյ
անիւներու ճռնչոց ու թաւալում։ Աչք ու ականջ կրա-
ցեցաւ և ի՞նչ տեսնէ – իր սիրելի Նշանը, սակայն ո՞ր-
քան նիհար ու վատուժ։ Վազեց անոր մօտ։ Գգուեց ու
համբուրեց։ Իր սիրելի Նշանը գտած էր։ Եղը կարծես

Numérisé par CDMF (PP) - 2013

խանջինքը մոցաւ, անուշ անուշ անոր նայեցաւ և արուած խոտերը համով համով կերաւ։ Հեռանալէն յետոյ դուցէ առաջին անգամն էր՝ որ այնպէս ախորժով կ'ուտէր։

Գիսակ կառապանը յորդորեց՝ իր աննման Նշանին լաւ նայիլ ու ակամայ անկէ բաժնուեցաւ։

Այո՝ անոր վերջին տեսութիւնն եղաւ։ Մայիսին Եւրոպա մեկնեցաւ՝ ուսում ընելու համար և երկար տեղ հայրենիքէն հեռու մնաց։

Հետոպային՝ վերադրոյ ընկերի մը գրութենէն կ'իմանար թէ՝ Նշան դարձեալ իրենց տունն եկած էր և տնեցիներուն կառքին լծուած՝ քշուած դէպի աքսոր ու...։

---

## ԱՆՄՈՌԱՆԱԼԻՆ ՔԵՐՈՎԲԷ

Կը յիշեմ՝ անիկա դեռ տասնումէկ տարու աշակերտ էր, բայց անոր դէմքն ու հասակը կը ցուցնէին թէ՝ օր մը առնական գեղեցկութեան չեչտուած տիպար պիտի հանդիսանար։

Այո՛, Քերովբէն մանչ էր սիրուն, բայց մանաւանդ բարի, կորովի և վառվռուն։ Տան մէջ զուարթ էր հլու, հնազանդ։ Վարժարանին առաջին աշակերտն էր՝ ուշիմ և մտադիր։ Շատերէն փնտռուած ընկեր և շատերէն սիրուած տղայ։ Օժտուած էր գեղեցիկ ձայնով և յատուկ տաղանութեամբ։ Դպրոցական հանդէսներու մէջ հասարակութեան ծափերու առարկայ էր և ծնողները գինքը փութաջանութեան և բարեկրթութեան օրինակ կը մատնանշէին իրենց զաւակներու։ Եկեղեցւոյ մէջ զրկիր էր և անոր անուշ ձայնը բուրվառին խունկի բոյրին միացած կը բարձրանար կամարները։ Ժողովուրդը հազը կոկորդին մէջ կը բանտար-

Numérisé par CDMF (PP) - 2013

կէր՝ անոր ձայնին չեշտիկն անգամ անլսելի չընելու համար։

Ծննդեան տօնին իր ընկերներէն շատերը գինքը իրենց գլուխ կ՚ընտրէին և անէ տուն այցելելով՝ կ՚երգէին. «Այսօր տօն է Ծննդեան, աւետի՛ս, Յայտնութեան Տեառն մերոյ, աւետի՛ս, Մելքոն, Գասպար և Բալթասար, աւետի՛ս...։ Ժողովուրդը հաճոյքով անոնց ձայնը կը լսէր և պարգևներով դանոնք կը վարձատրէր։

Նմանապէս Ծաղկազարդին՝ Քերովբէն և իր ընկերներն արմաւենիի, աւելի ճիշդը՝ ուռենիի դալար ճիւղեր իրենց ձեռքերու մէջ՝ անէ տուն կը շրջէին հաւկիթ հաւաքելու։ Այդ ճուերը յետոյ եփուած ու ներկուած՝ Զատկի օրը հրապարակ կու գային և հաճելի ժամանցի տոթ կ՚ընծայէին։ Որուն հաւկիթը որ կտրուէր նա պարտական էր իբրև պարտուած՝ յաղթանակողին յանձնել կոտրած ճուն։ Կային տղաք, որոնք կեղծ հաւկիթներով՝ խարէութեամբ շահ կ՚ընէին։ Այսպիսիներու թիւը սակաւ էր։ Քերովբէ երբեք անոնց մէջ չէր։

Վարագանցին անիկա իր ընկերներէն ամէնէն աւելի կը փնտռուէր։ Այդ օրը իւրաքանչիւր աշակերտ իր տանէն յաւագոյն ուտելիքը և կերակուրի վերաբերեալ բան մը կը բերէր։ Տղաք խումբերու բաժնուած արտ մը կամ դաշտ մը կ՚երթային։ Հոն մէկուկէս կանգուն բարձրացած ձիւնը մէկ կողմ կը հաւաքէին և կրակատեղիներ պատրաստած՝ կերակուր կ՚եփէին. թէ որքան կը յաջողէին՝ այդ իրենք գիտէին, բայց համով համով կ՚ուտէին և ապա կ՚երգէին ու կը պարէին։ «Քեֆ» է որ կ՚ընէին և անոնց «պին պաշին»՝ Քերովբէ։

Ծոնիկը աշակերտներու ամէնէն հետաքնդած ու սիրած խաղն էր։ Եղ վեր, իջիր վար՝ ճը՛ռ, ճը՛ռ, շուրջանակի պարձիր՝ ճը՛ռ, ճը՛ռ։

Numérisé par CDMF (PP) - 2013

Բերովրէ՝ օր մը Գէորգին հետ ճոնիկ կը խաղար, երբ վերջինս յանկարծ՝ բաւական բարձրաձիգ վար ինկաւ ասր քարի մը վրայ, նախ հոպոպէն ուժգին ճիչ մը փրթաւ և ապա լռութիւն տիրեց՝ մարած էր։ Բերովրէ ինքզինքը խուճապէն բռնեց և ապա ընկերոջ օգնութեան հասաւ։ Խեղճին ճակատէն արիւնը կը ծորէր։ Խոր էր պատուածքը։ Գէորգ մերձաւոր տուն մը փոխադրուեցաւ և ուշքի բերուեցաւ։ Ցաւէն կը գոչարուէր և շրթունքներն ու ձեռքերը կը դողդողային։

Ամբողջ ամիս մը Գէորգ տատապեցաւ։ Անոր վէրքին վրայ ծխախոտ կը դնէին և ան կը պառաւ ու կուլար։

Բերովրէ սակայն անոր այցելութեան կ՝երթար և անգամ մը վերազարձին մօրը բսաւ։ «Մայրիկ, Գէորգին ճակատին վէրքը ալ գոցուած է, բայց մեծ սպի մը պիտի մնայ։ Տգեղ պիտի երևնայ։ Զէ՞ կարելի այլ սպին ջնջել»։

Ամրան տաք օրերուն աշակերտներու սիրելի զուարճութիւններէն էր գետին մէջ լողալը։ Տղաք իրարու հետ միանալով մեծ մեծ քարեր քով քով կը բերէին և ջրին ընթացքը թեթեւ մը կասեցնելով՝ երկու երեք կանգուն խորութիւն կ՝ունենային։ Ապա լողմարտիկները հոպած՝ ջուրը կը նետուէին։ Ժամերով կը խաղային և անոնց մէջ էր երբեմն նաև Բերովրէ։

Ան օր մը իրենց տան պատշգամէն նկատեց թէ ի՛նչպէս մէկը գետին մէջ կը լողար և հոպար ու մէկ փորձ կ՝ընէր ջուրին երեսն ելլելու և սակայն չէր կրնար։ Կայծակէն արագ վազեց գետը, գլեսանները վրայէն շուտ մը նետեց և ջուր մտաւ։ Մեծ դժուարութեամբ գետափ հանեց ընկերը, որ անգի աշխարհէն այս աշխարհ կը բերէր։

Ապաստարարը վարձատրուեցաւ և անոր անուն բերնէ բերան շրջեցաւ ու հռչակուեցաւ։

---

Numérisé par CDMF (PP) - 2013

Բայց մթիկ կարելի՞ է լսել թէ՝ Քեռովբէ կարեկցող սրտով օժտուած մանչ էր։

Անոնց գրացիներէն մէկուն ապջիկը՝ հիւանդութեան մը աչքերու լոյսն զրկուած էր – Աչխէն կոյրցած էր։ Սուտկիս զուցէ նախընտրելի է ի ծնէ կոյր ըլլալ քան տարիներով տեսնել և ապա լոյս չվայելել, ծագիկ ու սիրելիներ չտեսնել։ Անոր ամէն մէկ բառն ու խօսքը մօրը սիրտը կը խոցէր. «Մայրիկ, հագած զգեստդ ի՞նչ գոյն ունի, քոյրիկիս զրքերը մաքո՞ւր են, վարդենիս քանի՞ վարդ ունի, կաթնագրիւրին ջուրը յատա՞կ է։ Մայրիկ, խօսէ ու պատմէ»։ Մօրը ձայնը և ամէնուն ձայնը անոր ամէն բանն էր։ Ձայնով նաև կը տեսնէր և չատ բանի հասու կ'ըլլար։

Քեռովբէ կարծես կոյր Աչխէնի եղբայրն ըլլար, դաշտերէն ծաղիկներ քաղած՝ անոր կը բերէր և սիրտը կը յուզուէր, երբ զգայուն ապջիկը կը հարցնէր. «Քեռովբ ջան, է՞րբ ես ալ նորէն մեր դաշտերն ու ծաղիկները պիտի տեսնեմ, է՞րբ արեւն ու մայրս պիտի տեսնե՞մ։

Քեռովբէ անոր լոյս չէր կրնար պարգեւել, սակայն լոյս կը ներշնչէր։ Միշտ կ'ուզէր գանիկա ուրախացնել և ցրուել։ Օր մը բոլորովին յուզուած՝ իր մօրն բատ. «Երբ մեծնամ՝ կ'ուզեմ բժիշկ ըլլալ, քա՛ջ բժիշկ և Աչխէնի աչքերուն լոյս պիտի տամ։ Զանոնք պիտի բուժեմ՝ առանց մէկ փարա պահանջելու»։

Մայրը տաքուկ համբոյր մը դրոշմեց իր բարի զաւակին ապիտակ այտերուն վրայ։

---

Numérisé par CDMF (PP) - 2013

# ՔԱՐԸ, ՈՐՈՒՆ ՎՐԱՅ ԱԻԱՆԱԿԸ ԿԵՑԱԾ ԷՐ

Ցերեկուան չոգէն գրեթէ չնչահեղձ՝ մեծ մայրիկիս հետ մեր թոգէն դուրս եկանք ապարակ երթալու համար։ Շոճիներու և կուենիներու գարգարուած հովանիին տակէն ճամբան կ՝երկարէր՝ երբեմն օձապտոյտ և անձուկ և ցանցառ՝ ուղիղ ու լայն։ Ի՞նչ անուշ բոյր և ի՞նչպիսի թոյր ծաղիկներու վրայ։ Սակայն ոտոտուն թռչուններու կեղկեղանքներ լսելի կ՝ըլլան։

Բուսական քալելէ ետքը՝ մեծ մայրիկս խոնջած կը թուի և կը նստի. բայց ոչ՝ կը ծնրադրէ քարի մը քով։ Երկիւղածօրէն կը խաչակնքէ ինքզինքը և ապա ջերմեռանդութեամբ կը համբուրէ՝ քարին վրայ արդէն շա՞տ մաշած տեղ մը, որ պայտի կը նմանի և ապա խոսոչ մը, որ պատուանի ծայրի հարուածի հետեւանք ըլլալ կ՝երեւայ։ Կը համբուրէ. մէկ անգամ չէ, քանի մը անգամ և ես թէպէտ դեռ տասնամեայ աշակերտ՝ կը զգամ թէ անոր ներսը՝ յուզումը յուզում կը ծնանի և երանութիւնը հոգին կ՝ողողէ։ Կ՝ապերսեմ այդ գարմանալի քարին պատմութիւնը ծանօթացնել։

Մեծ մայրիկս քարին մերձ գալար խոտերու վրայ կը նստի և կ՝ըսէ.

«Մեզմէ տարիներ առաջ ծերուկ մը կար։ Թէ ի՞նչ մեղք գործած է՝ այդ Աստուած, ինքը և քահանան գիտեն։ Սակայն վերջինս անոր վրայ ծանր ապաշխարանք կը դնէ՝ քալելով Երուսաղէմ երթալ և քալելով ալ վերադառնալ։ Ամենօրը պաշարը կը պատրաստէ և անեցիներէն լալով բաժնուած՝ ճամբայ կ՝ելլէ։ Օրե՞ր, շաբաթնե՞ր, ամիսնե՞ր կը քալէ։ Կը յոգնի՝ կը հանգչի։ Կ՝անօթենայ՝ կը նստի քիչ մը սնունդ կ՝առնէ։ Կը ծարաւի՝ պուտ մը ջուրով կսկծալը կը թրջէ։ Պարտատոմ

Numérisé par CDMF (PP) - 2013

և ծիրան Երուսաղէմ սաք կը կոխէ։ Տրեխները կը հանէ և բոպիկ կը քալէ։ Կը համբուրէ այն հողը, զոր Փրկիչն իր արիւնով օծած է։ Կ'ելլէ Գողգոթա։ Կը մտնէ Ս. Յարութեան տաճարը։ Կ'երթայ նաև Ս. Յակոբի Վանքը։ Ամիսներով Ս. Քաղաքը կը կենայ, «հաճի» կ'ըլլայ։ Կը խորհի հոն մնալ, բայց կը յիշէ քահանային տուած ապաշխարանքին երկրորդ մասը։ Դարձեալ՝ տան ու պատակի սէրը գինքը անհանգիստ կ'ընէն. կարօտը գինքը կը հալէ ու կը մաշէ։ Կ'որոշէ իր յարկը դառնալ և հոն նախնիներու քով հայրենի թեթե՛ւ հողին տակ հանգչիլ։ Սակայն կը յանկայ հեռը Յիսուսն մատնած մը առնել, ըլլայ անոր մազերէն, տաշիկէն, փէշ պրատակէն, գամերէն, արիւնի գոնաբ կաթիլներէն։ Ուր կը գիմէ՝ կը մերժուի։

Անգամ մը Ս. Յարութեան տաճարին տակն երբ արտում տխուր կեցած էր՝ իր առջեւը կը նկատէ սեւերու մէջ համակուած կին մը, որ Հայ կնոջ իսկական տիպարը կը ներկայացնէ։ Կինը քնքշօրէն կը հարցնէ անոր տխրութեան պատճառը։ Ծերուկը կը պատասխանէ՝ «Եկած եմ Ճորոխի ափերէն, տեսած եմ Որջնհաղ՝ ուր քաջ Վարդանին եղբայրը՝ Հմայեակ նահատակուեցաւ։ Կ'ուզեմ վերադառնալ այդ սրտնեալ երկիրները, բայց Ս. Երկրէն մասունք մը հետս տուած։ Ուր գիմեցի՝ քարէ սրտեր միայն տեսայ»։ Կինը կ'ըսէ՝ «Է՛լ այստեղէն, գնա՛ անցիր սա փողոցը, դարձի՛ր աջ և երկրորդ տան մը առջեւ քար մը պիտի գտնես։ Զայն տո՛ւ ու տա՛ր։ Անոր վրայ կանգնած է այն տունակը, որուն վրայ Յիսուս նստած՝ ոտաններով Երուսաղէմ չրջեցաւ։ Քարին վրայ ծակ մը՝ խոռոչ մը կայ։ Այն արդիւնք է Քրիստոսի գաւազանի հարուածին։ Գնա՛, տիրացի՛ր սոյն քարին. ան մասունք է թանկագին»։

Ծերը կ'ուրախանայ և կ'ճամբարէ։ Բայց տարտուր գինքը կը ցնցէ, երբ խոշոր ու ծանր քարը կը տեսնէ։ Կը մտածէ՝ քարէ սրտեր՝ քար, այս՝ ի՛մ խոշոր է։



Numérisé par CDMF (PP) - 2013

կամքը կը գարձնէ և քարը ուսին վրայ կը բարձրացնէ։ Կը քալէ՞ չա՞տ, կը յոգնի՞ չա՞տ։ Բայց գեղեցիկ օր մը տունը կը հասնի։ Կը տեսնէ իր սիրելիները և գոհ սրբտով մշտապէս կը փակէ իր աչքերը, գոհ՝ վասն զի հայրենիքին բերած ու ձօնած էր գոհար մասունք մը, որ թէ յետոյ՝ ինչպէս հոս եկած ինկած կամ գետեղուած է, չեմ գիտեր»։

---

## ՔԱՋԱՐԻՆ ՔԵՐՈՎԲԷ

Թերթերն ու գրքերը ժամանակին հոշակած են անոր անունն ու գործը։ Սակայն անոնցմէ չեմ ուզեր օգտուիլ։ Կը բաղձամ անոր մասին թղթին յանձնել այն, զոր մեծ մայրիկս ձմեռնային գիշեր մը՝ մեր տան թոնիրին շուրջ հաւաքուած իր զոյգ մը թոռնիկներուս պատմեց։

Քերովբէ սրգի էր քահանայի և եղբայր՝ քահանայի։ Երբեմն կրակ ու բոց մանչ և ապա եռանդուն և գործօն երիտասարդ։ Ինչպէս կրօնաւէր, նաև ապրաւէր։ Եթէ մէկուն գործքով չկրցաւ օգտակար ըլլալ՝ խօսքով կը նպաստէր։

Գրքերու չափազանց յարում ունէր։ Կը կարդար Հայոց Պատմութեան գրքեր, մեծ մեծ գրքեր, հա՞տ հա՞տ գրքեր. և կը պատմէր փոգոցին մէջ, տան մէջ։ Պատմելու ժամանակ աչքերէն կրակ կը ցայտէր, կարծես կռուի մէջ էր և հազարներ կը ջարդէր։

Երբ կ'իմանար՝ թէ թուրք ոստիկաններ հայերէն գրքեր կը փնտռեն, գոնոնք և իր գէնքերը շուտ մը ջրհոր կ'իջեցնէր կամ ձեղունին տախտակներուն տակ կը պահէր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Օր մը – իր կայր բախտէն – սոսկիանները անոր գլխերէն երկուքը գան։ Քերովբէ ամենեին չխոսեցաւ։ Զանոնք անոնց ձեռքէն յափշտակեց և եղնիկէն արագ թռաւ լեռը։ Մէկն ալ եռեւէն չվազեց կամ ղընդակ չուղղեց։ Ոսոիկաններն անգամ անկէ վախ ունէին։ Շատ զօրաւոր էր և անվախ։ Եղունգովը գամ կը գամէր։ Բռունցքովը եղան մէջքը կը կոտրէր։ Սակայն որսի կ'ելլէր և տեսա՞ւ եղջիւր մը, այն թիւրախն էր անպայման իր գնդակին. թէ չտեսաւ՝ թռչունները ծառերէն և օդէն վար կը բերէր։ Քանի՞ քանի՞ գայլեր և արջեր սրսացած է և անոնց թաթերը իրենց գրան սեմին զարկած ու գամած։ Անոր զէնքերը սակայն կը պահէին որ՝ զէնքի ակրը ներսը պապի և Ռուսասան երթայ գործի, սակայն ան տարբեր մարդ էր, տարբե՛ր...։

1886ին մեր հայրենիքին ան ու սարսուռը Թոյլօղլի Տուրսուն աւազակապետ եկաւ Մոսկուտէն և գիշերանց հասաւ Ճիճապաղ։ Ագտաւին կուիչքը, բուին վայրը Հայերուն սիրտը քարացուցին։ Ամէն մարդ իր դուռը փակեց և ձեռքերը բացաւ դէպի երկինք։ Գալի՞ք կար։ Ո՞վ ապատուած էր աւազակապետէն։ Բայց Ճիճապաղ բախտով կ'ապատի։ Թոյլօղլի Տուրսունի աչքերը այս անգամ Խանդաձորի հարստութեան վրայ են։ Սակայն անոնց պահակն ու պաշտպանն է Քերովբէն քաջարի։

Կ'իմանայ անոր գալուստը և երկու ընկերի. հետ միացած՝ կ'ուզուէ հայրենիքը անոր ճիրաններէն ազատել։ Կ'ուզէ զանիկա այնպէս սարսափեցնել որ՝ ծառի տերեւին նման դողայ և անգամ մը ալ սաք չկոխէ Հայուն կոխած տեղը։ Տունը՝ ամէն անկիւն իր հրացանն ու փամփուշտները կը փնտռէ, բայց անոնք չը-կա՞ն։ Եւ ահա բաց բերանէ մը կը լսէ թէ Ա. Ա. պառաւին մօտ են։ Տէրտէր Եղբայրը սակայն անոր զէնքերը կը հեռացնէր, որ յանկարծ թուրքերէն բան մը չպայթի իրենց գլխուն և ակութին վրայ։

Numérisé par CDMF (PP) - 2013

Քերովբէ պառաւին մօտ կը վազէ և գէնքերը շուտով երեւան կը հանէ։

«Որդի՛ Ջան, կը ձայնէ պառաւը, անտառը արշ տեսնուած է, գնա՛ և հազար կտոր բրէ դայն, արեւիդ մեռնիմ, գնա՛ հոն և մի՛ «չափուիր» Տուրսունի հետ»։ «Մամիկ Ջան, դուն հանգիստ եղիր. ես մարդասպան չեմ. պիտի չմեռցնեմ։ Լեզին այնպէս պիտի պատռեմ, որ եօթը տար անգին թոչի ու այլեւս չերեւայ։ Դուն հանգիստ եղիր, արիւն չեմ մտներ»։

Քերովբէ պատռեր էր երկու ընկերները. բայց անոնք իրեն օգուտ մը չբերին և փախան։ Հասաւ Զորուք, գետին ափին երկինք հասած ընկուզենիին վրայ բարձրացաւ ու ճիւղերու և տերեւներու մէջ ծածկուեցաւ։

–Մեծ մայրիկ, վրայ բերի, ես այդ ծառը տեսած եմ և վրան ո՞րքան գնդակի հարուածի նշաններ կան։

–Անոնք գնդակներու հանդիպած տեղերն են, բայց լաւ եղիր և միտ դիր, սատակեց մեծ մայրիկս և շարունակեց իր պատմութիւնը.

Թոյլօղլի Տուրսունի հետ կային տասնեւութը չար ընկերներ։ Անոնցմէ մէկը սատանայի աչք ունէր՝ տեսնելով Քերովբէն լաւ տուաւ։ Թոյլօղլին պոռաց. «Ա՛յ մարդ, թէ կեանքդ կը սիրես վար իջիր, ապա թէ ոչ ընկուզի պէս գլեկ վար կը բերեմ»։

Թոյլօղլին իր հրացանը լարեց. Քերովբէն ալ իր «թիւֆէնք»ը ուղղեց անոր ձեռքին գարնելու և հրացանը վար ձգելու համար։ Թոյլօղլին նշմարեց և չարժուիր ը-բաւ։ Քերովբէին գնդակը թռաւ և չարժումին հետեւանքով եկաւ հասաւ Թոյլօղլիի կուրծքին և ան ձիէն վար ինկաւ պոռալով՝ «Ընկերներ, սատկեցուցէք սա կեանքը հայը»։

Գնդակները տեղացին եռեւ եռան։

Քերովբէ ծառին վրայ ինքզինքը անապահով զգաց։ Օձի նման վար սպասկեցաւ և գնդակներու տե-

Numérisé par CDMF (PP) - 2013

պատարտիին տակ քովի ձորն իջաւ և անկէ անտառն ի վեր սկսաւ։ Կեանքի և մահուան պայքարն էր որ կը սկսէր։ Գայլերու պէս աւազակները անոր եաւէն ինկան և հրացան հրացանի վրայ պարպեցին։ Քերովբէ հրացանը լարեց ու նետեց, լեցուց ու պարպեց։

Աւազակները ճնճղուկի պէս կ'իյնային, բայց նորերը երևան կու գային։ Քերովբէ հանգիստ չունէր, կը փախչէր։ Կը կենար ու կը նետէր։ Եւ յանկարծ՝ հրացանը պայթեցաւ։ Անձկութեան քրտինքը դէնքը պատեց և սկսաւ եղջերուի պէս ուրալ։ Բայց գնդակ մը հասաւ կողքին և արիւնը առատօրէն դուրս ժայթքեց։ Քերովբէ պաղարիւնութիւնը չկորսնցուց։ Լաթ խօթեց ու թռաւ։ Հասան դեռ ուրիշ գնդակներ և առիւծը ծառի մը տակ ինկաւ՝ մահացաւ։

Աւազակները հասան անոր մօտ և գնդակ գնդակի վրայ նետեցին ու հեռացան։

Քաջին դիակը ժամերով առանձին մնաց։ Ապա երբ ժողովուրդը համոզուեցաւ՝ թէ կեանքի ու գոյքի վնաս չկայ՝ մարդիկ գացին, և արիւնի հետքերէն իմացան դիւցազնի դիակին տեղը։

Զայն բերին մեր տունը։ Ամէն աչք արտասուք թափեց Քերովբէի անչունչ մարմնոյն վրայ, ուսկէ թաշկինակով գնդակ հաւաքեցինք։

Մեծ հանդիսութեամբ և հոծ բազմութեամբ անոր դագաղը գերեզման դրուեցաւ։

Այ անկէ վերջ մեր աչխարհը արև ու կեանք տեսաւ։ Աւազակ չերևցաւ։ Քաջարին Քերովբէ հայրենիքը ազատած էր»։

Այսքան՝ մեծ մայրիկս։ Անոր պատմելէն տարի մը վերջ գերեզմանատուն էի և ալ կարդալ դիտէի։ Քերովբէի մարմարէ շիրմաքարին վրայ կարդացի՝ «Քերովբէ Ոսկ...»։ Մնացածները չկրցայ կարդալ։

Numérisé par CDMF (PP) - 2013

# ՔՈՒՐ–ԱՂԲՕՐ ԱՂԲՈՒՐՆԵՐԸ

Ահաւասիկ էր։ Արեւի նորաբծարծ ճառագայթները ուրախութեան թեւերով գրկած էին երկիրը և սար ու ձոր, դաշտ ու դուրան հրդեհով բռնկած։ Միայն հոն՝ ապարթալից կաւենիին բունին մօտիկ չկար արև, չբկար ժպիտ։ Հոն արիւն կը վազէր, արտասուք կը կաթէր։ Հոն մամռապատ քարի մը տակէն դուրս կը սողսկէին զոյգ ապրիւրներ՝ կաթիլ կաթիլ, յայտիկ յայտիկ, հոգեխռով մրմունջներով նուազկոտ մահամերձին։ Կը սահէին կաթիլը կաթիլը, ճերմակ ճերմակ. առեղծուածով կարծես անլուծելի։

Չեմ կրնար արձանագրել անհատ մը, որ այդ քայլ–եղբայր ապրիւրներու այցելած ըլլայ անտաբերեր և մեկնած անոնցմէ՝ սրտին մէջ հեղնանքը ոգեսպան։ Կը յիշեմ մանուկ էի ճնճղուկի պէս ուտուտուն և անհոգ, սակայն ամէն անգամ որ անոնց մերձեցած եմ՝ թեւերս ուռենիի ճիւղերու նման կախ տուած՝ կեցեր եմ անոնց դիմաց՝ նկարելով պատկերը որբուկին՝ աչքերը չիրմին մայրիկին։ Թէպէտ ծարաւը լեղուս քիմքիս է բեւեռած, սակայն ճկոյթովս իսկ չեմ կրցած հպել ջրերուն։ Չեռքս ու լեղուս կը բողոքէին անողոքելի։ Մի՛, մի՛ մերձենար, մի՛ խմեր, արի՜ւն կայ եղբօր կանաչ երակէն, արցո՜ւնք կայ քոյրիկին ծով ծով աչերէն։

Տարիներ յառաջ – այսպէս կը պատմէին ծերերը – կաւենիին բունէն բաւական հեռու ջաղացքի մը կողքին կպած էր քարուկիր խրճիթ մը։ Դարեւոր ուռենիի մշտադալար բազուկները տարածած էր՝ նման պահապան հրեշտակին՝ անոր տախտակեայ ծածկին վրայ և վտակին կարկաջը միացած զեփիւռին նազանքին կը ջանար ապահովել յութեան ազդեցութիւնը պոնչ մեղմել։

Numérisé par CDMF (PP) - 2013

Այդ հիւղակին մէջ հայ մայր մը գրկած ու մեծցուցած էին երկուսակ մը — մանչ մը և աղջիկ մը։ Մէկուն անունը՝ Վարդէն, միւսին անունը՝ Աշխէն։ Մանչը՝ անուշ, աղջիկը՝ քնքուշ։ Վարդէնը՝ արի, Աշխէնը՝ բարի։ Եղբայրը՝ սեւաչուի, քոյրիկը՝ հրաշուի։ Մէկ սրտի հաւասար մասեր՝ անոնց սրտիկներն՝ ամփոփուած երկու կուրծքի տակ։

Սիրուն էր Վարդէնի ձայնը, գեղեցիկ էր Աշխէնի ձայնը։ Սոխակն իսկ չիկնած՝ մտադիր կ՚ըլլար անոնց ձայնին, երբ անոնք տատնձին կամ միասին կ՚երգէին։ Եւ Վարդէն որոշեց աշուղ ըլլալ։ Հայրենիքի սէրը սրտին մէջ արծարծուն, ազգին վշտերը սրտին մէջ ծըփուն, մէկ ձեռքին դաւազան, և միւսին մէջ ջութակն աննման, մտաւ բուրաստանը հարուստին, գնաց խըզիկն ապքատին, մասնակցեցաւ պարին՝ խաղին, հեռուեցաւ սև զգաղին։ Երգեց ու նուագեց և արար աշխարհ գիւթեց ու մոգեց։ Ծափերը անոր ականջները խլցուցին, բայց քսակը միշտ պարապ մնաց։ Իսկ տան մէջ քոյրիկն երգեց թափառումն ու կարուտը իր եղբօր և սարդերն ու ճանճերն ունեցաւ ունկնդիր։

Օր մը աշուղ եղբայրը որոշեց երթալ օտար երկիր, բայց քրոջ սէրը վերարծարծեցաւ սրտին մէջ։ Ցիշեց գինքը և ուզեց անգամ մըն ալ անոր դէմքը տեսնել։

Գնաց աշուղը և նստաւ կուէնի շուքին տակ ու երգեց, որ իր ձայնը քոյրը խղիկէն քաշէր բերէր իր մօտ։

Կու տամ քեզի վերջին համբոյրս,
Ով հայրենիք, հատոր սիրոյս,
Վերջին համբոյր մըն ալ ձեզի,
Քոյրիկ անուշ, տուն անձկալի։

Սակայն հրաշալի սէրը կամքի մեկնումի որոշումը հալեցուց և ան հեծեծեց։

Numérisé par CDMF (PP) - 2013

Ո՞հ, ձեզ թողուլ ես չե՛մ կրրնար,
Հոս տեղ տեսայ երկնի ջինջ լոյս,
Հոս տեղ հնչեց սիրոյս քնար,
Թող հո՞ս տեսնեմ վերջն օրերուս...:

Ու ձայնը օդէն կախ մնաց: Թշնամիին գնդակը հասաւ կուրծքին և մամուռ քարին տակէն սկսաւ հոսիլ ապրիւրն իր արիւնին՝ կարմի՛ր–կարմի՛ր: Բայց լսեց ձայնն իր եղբօր և թոռաւ հասաւ անոր մօտ, բայց գինքը՝ մահացած գտաւ: Լացաւ օրերը ու գիշերները: Եւ օր մը՝ այ գինքը գտան հոն անկենդան և ապրիւր մը՝ կից միւս ապրիւրին՝ ճերմա՛կ–ճերմա՛կ: Զոյգ աղբիւրները կոչուեցան «Քուր–աղբօր ապրուրները»:

Անցորդ, յարգանքի կեցիր ոտնկայ:

Հոն տեղ՝ արի՛ւն կայ, հոս տեղ՝ արցո՛ւնք կայ:

---

## ԴԺԲԱԽՏ ՀԱՐՍԸ

Մարթա՛ն է. դժբա՛խտ հարսը:

Արեւի մայրամուտի ճառագայթներուն նման իր չէկ ու երկար մազերը ուսերուն վրայ ցրիւ՝ կը վազէ:

Կը վազէ, որովհեան կորսնցուցած է և կը փնտռէ:

Կը փնտռէ թէպէտ գտնելիք չունի: Բայց սէրը կը ստիպէ, սէրը կը տանջէ:

Սէրը ի՞նչպէս չստիպէ, ի՞նչպէս չտանջէ անոր հոգին՝ երբ իր սիրտը՝ – իր ամուսինը կորսնցուցած է, – իր Արո՛ւթը:

* * *

Անիկա որսի ելաւ: Բայց մահը գինքը որսաց:

Մեր թաղին դարբինն էր Արութ: Ան իր հայրենակիցներու նման Ռուսաստան չէր գացած՝ հացի ու ա-

Numérisé par CDMF (PP) - 2013

գանելիքի դրամ հարելու համար։ Անգամ մը միայն հոն գացած էր՝ հօրմէն ժառանգած արհեստը կատարելագործելու համար, և ապա հայրենիք վերադարձած՝ անոր հետ միասին կ՝աշխատէր։ Հայր ու որդի փնտրուած դարբիններ էին։ Անոնց ձեռքերէն միայն լաւ ու դիմացկուն բաներ դուրս կ՝ելլէին։ Տարուոյն ամէն եղանակին գրեթէ միշտ գործ ունէին։ Միայն Դեկտեմբերը անոնց ամուլ ամիսն էր։ Եւ անոնց բարեկամները այն ժամանակ կը հանդիպէին, յեռոյ մուրճերը շառաչեցնելու համար նոր թափով՝ կացինին, բահին ու մանգաղին վրայ։

Արութ քառասուն դարուններ տեսած ծերունի մի երիտասարդ էր։ Աննման գեղեցիկ և առոյգ։ Շատ մը մայրեր զինքը իրենց փեսայ ընտրած էին։ Սակայն անոր աչքը հանդիպեցաւ ապքատ, բայց բարեկիրթ և գեղանի Մարթայի վրայ։ Դեկտեմբերի առաջին օրերուն անոնց հարսանիքը տեղի ունեցաւ։ Գինիի տակառներն ու գաւաթները պարպուեցան՝ անոնց երկար կեանքի մաղթանքով։

Մարթա և Արութ երջանկացած էին։

* * *

Դեկտեմբերի վերջին օրերը։ Մնուղի հանդէսները արդէն փակուած։ Եւ կաղանդի պատրաստութիւնները սկսած։ Երկնքի վրայ ամպի ծուէնն անգամ չկայ՝ այնպէս ջինջ կապոյտ է։ Երկիրը սպիտակ ձիւնով ծածկուած է, և անոր շողովը աչքերդ կը խոցոտան։ Արեւի տակը ճառագայթները սառին ու ձիւնին վրայ մագլցեր են։ Հեղիկ զեփիւռն ալ – գով ու մեղմիկ – կը փչէ։

Արութ ու Մարթա նստած՝ իրենց տաքցուած սենեակին մէջ կը խօսին՝ սարէն ու ձորէն։ Բայց յանկարծ Արութ Մարթային ձեռքը իր ափերուն մէջ առնելով՝ կ՝ըսէ. «Մարթա, դուն զիս կը ճանչնաս։ Ամէն տարի այս օրերուն որսի կ՝ելլէի և ահա ամէն բան պատրաստ

Numérisé par CDMF (PP) - 2013

ու կամ է։ Հրացանս լարուած, սարճանակս լեցուած, պաշարս ծրարուած։ Հայրիկիս հետ կ'երթամ և ամէնէն ուշ երկու օրէն հոս քովդ՝ քեզի հետ դարձեալ կը խօսիմ»։

Մարթա կարծես կայծակնահար կ'ըլլայ, կը դունաթափի ու կը շփոթի։

– Զէ՛, Արութիւն, չ'ըլլար։ Այսօր երազիս մէջ ձիւնի վրայ արիւն տեսայ։ Այդ դէշ բան է։ Հրացանը թող իր տեղը։ Կարելի է թէ հիւս իմնէ։ Ամէն բան կրնայ դիպիլ»։

Բայց ո՞վ կարող է Արութին իր որոշումէն ետ կեցընել։ Տարիներու փորձառութիւն ունի։ Ամէն տարի աւելի դէշ օդերու դացած է և հօրը հետ երկու երեք եղջերու որսալով՝ խնդումերես վերադարձած։

Հաստատուն կը կենայ իր առաջադրութեան վրայ, թաշկինակովը կը սրբէ Մարթայի տաքուկ արցունքները, և մօտալուտ տեսութեան յոյսեր ներշնչելով՝ հօրը հետ որսորդութեան կը մեկնի։

Հայր ու որդի ուրախ և յուսալից կը հեռանան։ Մայր ու հարս թախծոտ ու կասկածալից տուն կը մնան։

Այս՝ հարսին առաջին բաժանումն էր, չա՜տ ծանր։ Եթանի՞ թէ վերջինը չըլլար։

* * *

Առաջին օրը կը մթնէ, բայց կարծես Մարթայի համար հազար տարի կ'անցնի, այնքան դանդաղ կը շարժի այդ օրը։ Գիշերն իր սև թեւերը կը տարածէ, սակայն ձիւնի սպիտակութենէն կը ստիպուի պարտուիլ և դանդաղ քիչ մը ամփոփել։ Մարթա իր սենեակը կը մտնէ։ Բունը աչքերէն եօթը սար անդին փախած է։ Երբեմն կը մտածէ, երբեմն կ'աղօթէ։ Կը ջանայ հին օրերով սփոփուիլ և նոր օրերու երազներ հիւսել։ Բայց նորէն ինքզինքը այս օրուան կասկածելի բաժանումին առջև կը գտնէ և արտասուքով փեռուրէ բարձիկը կը թրջէ։

Numérisé par CDMF (PP) - 2013

Վերջապէս Մարբէոս կը յաջողի անոր կոպերը փակել։ Կը տաքայ, կը քրտնի ու «Արութիւն» պոռալով վեր կը ցատքէ, վերմակը մէկդի կը նետէ։ Զինքը տեսեր է... գունա՜տ... անխօ՛ս... դիա՛կ...։ Կը փախչի սենեակէն վար՝ միւսներու մօտ։ Մա՜հ է տեսեր... մա՜հ... ի՛ր Արութին անշունչ մարմինը։

Կ'անցնի յաւիտենական այդ գիշերը։ Արեւը նորէն երկրին կու տայ լոյս և Մարթայի սրտին՝ յոյս։

Օդի բացատրիկ ջերմութիւն մը կը սփռեն առաւօտն ու օրը։ Զրի անուշ երաժշտութիւնը լսելի կ'ըլլայ։ Ամէն մարդ ժպիտը երեսին կապանդի կը պատրաստուի։ Միայն Մարթա տխուր է։ Ա՜խ, եղկ արեւը հիւսքին մայրն է։ Սեւ մտածութիւնը զինքը կը տանջէ։ Հիւսն պիտի իջնէ՞ և իր Արութը հօրը հետ ձիւնի տակ պիտի անշնչանա՞յ...։

Ա՜խ իր երազը...։

Գիշերը նորէն կը հասնի՝ բայց ոչ ոք գիտցողները չեն հասնիր։ Մարթա կրկին իր տան մէջ է, և յուսամուտէն կը նայի ու նայի...։ Այսօր պէտք է գան... ալ ուշ է, այսօր պէտք է որ գան...։ Եւ սակայն եկող չկայ, գացող չկայ։ Միայն ձիւնի թեթեւ բաթիլներ երկնքէն յամրաքար և յուլօրէն վար կը թափին։ Երանի՜ անոնց։

Բայց ահա ստուեր մը։ Մարթա կը ցնցուի։ Ժըպիտ մը կը փայլի երեսին։ Ա՛ն է կամ կեսայլն է։ Քայլերու ձայնը աւելի լսելի կ'ըլլայ, ձիւնին տեղի տալովը։ Կը մօտենա՞յ...։

Կին մըն է, բոչայ մը։ Կու գայ կու գայ և Դարբինների դրան առջև ափ կ'առնէ։ Մարթա կարեկից սիրտ ունի։ Կ'իջնէ գինքը բոպէի մը համար ներս առնելու և ոգեւորութիւն տալու։ Ան արդէն երրեք քրիստոնեայի տուն չուզեր մնալ, գիտնալով որ՝ զինքը մէկն ալ դեռ գիշեր մը ներս պահած չէ։ Բոչան ներս կը մտնէ և իր սովորութեան համաձայն կը սկսի երգել՝

Numérisé par CDMF (PP) - 2013

պատաս մը հաց կամ քիչ մը ալիւր ստանալու համար։ Կ'երդէ։ Երանի՜ թէ բերանը այդ ժամուն հաղար կղպակ ունենար։ Բայց չէր գիտեր թէ որո՛ւ առջեւը կ'երդէր։ Թաղեցիներն արդիւլած էին անոր Դարբիններու տունն երթալը և խոստում տուած էր Սուլթանին կնիքովը։ Չէր գիտեր թէ Մարթա Դարբիններու հարս է եղեր։ Շփոթելով՝ մութին մտեր էր անոնց տունը։

Բուշան կ'երգէ.

Ա՜խ Արուբ ջան, Արուբ ջան,
Ամէնուն դու սիրական,
Մահր կու գայ շատ կանուխ։
Թշնամի է ձիւն կակուղ։

« Մա՜հը » կը պոռայ Մարթա սարեր պատուոյ ձայնով ու կը մարի...։

Բուշան կը հասկնայ իր սխալը և այծեամի ոտքերով կը փախչի։

Կեսուրը ներս կը փութայ քովի բակէն։ Երդելեր է, բայց ոչ՝ բառերը։ Հարսը փոուեր է դեռին։

* * *

Թաղեցիներն արդէն իմացած էին թէ՝ ինչպէս Արուբ և իր հայրը եղջերու որսալու համար հրացան արձակած էին և անոր թնդիւնէն և արձագանքէն ուսին իջած էր և հայրը ու որդի ծածկած։ Անոնք քահանային և երկու խոհեմ ծերերու միջոցով սև լուրը պիտի հաղորդէին դժբախտ տնեցիներուն։ Բայց բօթը բուշային բերնով արդէն հասած էր և իր աւե՛րը գործած։

Թագին անվախ երիտասարդները –կակիծն իրենց սրտին մէջ – կ'երթան կը փորեն ձիւնը և անշունչ դիակները կը գտնեն։ Ամէն փորձ՝ սառած անդամները տաքցնելու՝ ապարդիւն։

Երկու դժբախտներու թաղումը կ'ըլլայ չաստ հան-

Numérisé par CDMF (PP) - 2013

դիսաւոր և յուզիչ։ Ո՞ր գրիչը կրնայ պատմել Մարթայի հոգւոյն կսկիծն ու տառապանքը։ Ո՞ր վրձինը կրնայ անոր դէմքը նկարել։

* * *

Մարթա՛ն է. դժբա՛խտ հարսը։

Տարիներ անցած են և ան ուրիշին կին գացած։ Թէև կը սիրէ իր նոր ամուսինն ու անկէ կը սիրուի, բայց Արո՛ւթը... ուրի՛շ էր։

* * *

Լաւ կը յիշեմ,

Մարթա՛ն է. դժբա՛խտ հարսը։

Արեւի մայրամուտի ճառագայթներուն նման իր երկար ու չէկ մազերը ուսերուն վրայ ցրիւ՝ կը վազէ։

Կը վազէ, որովհետև կորսնցուցած է...։

Կը փնտռէ, կը փնտռէ և կը յոգնի...։

Կը նստի քարի մը վրայ և կու լայ ու կու լայ։

Գուցէ քարը դեռ իր տեղն է։

Իսկ անոր հեծեծանքները ականջներուս մէջ դեռ կը հնչեն...։

..Բայց ինքը ո՞ւր է, ո՞ւր...։

Numérisé par CDMF (PP) - 2013

# ՄԱՅՐԻԿԸ ԶՈՀԵԼ ԳԻՏԷ

*Մեծ մայրիկս պատմած է ինծի հետեւեալը և ես ձեզի կը պատմեմ։*

*Եօթը օր և եօթը գիշեր հարսանիք ըրին, երբ նոր-գելին Շողիկ ու սիրուն Գեղամ իրարու հետ ամուսնացան։ Երջանիկ էին անոնք և ուելի երջանիկ եղան, երբ Աստուած անոնց պարգեւեց անուշիկ մանչուկ մը։*

*Սակայն հոգածու հայրը շատ քիչ վայրեց իր անդրանիկին ժպիտն ու գեղգեղը, վասն զի ստիպուեցաւ պատերազմի երթալ։ Շողիկ իր սրտի հատորին հետ մնաց առանձին։ Ստէպ թախիծն ու տխրութիւնը զինքը կը համակէին և ինքզինքը ցրելու, նաև՝ թարմ օդ ծծելու համար, փոքրիկը գրկին մէջ առած անառատն ու տափաստանները կ'ելլէր։ Որքա՜ն հաճոյական էր, մանաւա՜նդ անտառին մէջ. հոն ամէն բան իրեն կը խօսէր, ծառն ալ, ապրիւրն ալ, գետիւռն ալ, ամէն բան իր ամուսնին կեանքէն գրուագ մը կը պատմէր։ Եւ ինքը անոնց յիշատակովը կը հրճուէր, լիայոյս որ՝ նորէն պիրաբ պիտի տեսնէին և ուելի երջանիկ օրեր պիտի ըմբոշխնէին։ Իսկ փոքրի՞կը։ Կը խայտար մայրիկին գրկին մէջ՝ ուշադիր ու հետաքրքիր ամէն բանի։ Երբեմն տատիկներովն ու թեւիկներովը մայրիկը կը տանջէր ու կը ճչար մինչև որ գետին դրուէր։ Այն ատեն մանրիկ մանրիկ քայլերով կը փութար ծաղիկէ ծաղիկ և փոքր մատիկներովը գանոնք հաւաքելով մայրիկին նուէր կը բերէր։*

*...Այսպէս՝ օր մը ալ, երբ մենակեցիկ մայրը նստած ապաղուն կանանչութեան վրայ՝ լուրթ կամարը կը դիտէր և փոքրիկը ծաղկէ ծաղիկ կը վազէր, յանկարծ – չես գիտեր ուսկէ – ճոխօրէն զգեստաւոր–*

Numérisé par CDMF (PP) - 2013

ուած կին մը երեւցաւ և փոքրիկն առնելով անհետացաւ։

Որդեկորոյս մայրը՝ խելակորոյս մարեցաւ ինկաւ։ Բայց չուտով սթափեցաւ և իր մօտը տեսաւ մուրացիկ կին մը, որ իր զաւակներու համար ողորմութիւն կը խնդրէր։ «Ա՛ռ, քեզի, հեծեծեց Շոպիկ, սա ապարանջանը։ Ես քեզի ողորմիմ, որ Աստուած ինծի ողորմի և զաւակս ետ տայ»։ Կինը Շոպիկին ձեռքը համբուրեց ու ըսաւ. «Տիկին, Աստուած ողորմողին կ՚ողորմի։ Քու զաւակդ անտառի թագուհին փախցուց։ Անցիր այս կիրճէն և այն հովիտէն, անցիր կապանէն, անցիր կամուրջէն, անցիր անտառներէն, պատերէն ու դռներէն։ Գնա անդայթ, գնա անվհատ, և զաւակդ պիտի գտնես»։

Շոպիկ ոչի տուաւ ու քալեց։ Ցերեկները երկար ու տօթ, գիշերները երբեմն փոթորկոտ՝ քալեց։ Զգեստները հինցան ու մաշեցան, մորթով ծածկեց ինքզինքը. կօշիկները ծակծկեցան ու պատռեցան. գանոնք նետեց ու բոկոտն քալեց։ Ամբը կենալ պիտէ՞։

Վերջապէս հասաւ սև պատի մը սեւաթոյր դրան։ Բախեց դուռը և ահա ներսէն մէկը բամբ ձայնով մը հարց տուաւ.

– Ո՞վ է և ի՞նչ կ՚ուզէ։

– Մայր մը, որ իր զաւակը կը փնտռէ։

– Կ՚ըլլայ, բայց նախ՝ նուէ՛ր։

– Սիրով, սակայն միայն հիւծած մարմին մը և տանջուած հոգի մը ունիմ։

– Տուր մաղերդ։

– Մաղե՞րս, կնոջ ամէնէն ճոխ զարդերը, մաղերս խոպոպ ու սև, ա՜ռ, միայն դուռը բաց ու տո՛ւր զաւակս արագ։

Սեւ պատին կպրպտոյն դուռը բացուեցաւ և հապի կինն անկէ անցաւ՝ ցաւ մը զգաց և այլ եւս գանձուրները անոր գեղեցիկ գլուխը չէին զարդարեր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Հերթափ ու խոնջած, բայց քալեց յառաջ և հասաւ սպիտակ պատի մը ճերմակ դրան առջև։ Այն ալ փակ էր։ Զարկաւ ուժգին ի խնդիր իր զաւկին։

– Դո՞ւռը բանալ, հարցուց դռնապանը զիլ ձայնով, չա՜ռ սիրով, սակայն նախ տո՛ւր տասմիներդ հանդոյն փղոսկրին։

– Հաճոյքով, պատասխանեց Շոպիկ, և դանոնք ալ դռնովը յառաջացաւ։

Ստուգիւ մայրական սէրը զոհել գիտէ և յոգնութիւն չի գիտեր։ Շոպիկ քալեց յուսալից, քալեց քրտնալից։ Ժամանեց ոսկեղէն պատին ոսկեղէն դուռը։

Զայն բախեց և ահա ոսկեհնչիւն ձայն մը՝ «Տիկին, այս դռնէն ներս կը մտնես միայն այն ատեն, երբ կորովը ունենաս զոհելու ծով ծով աչքերդ»։

Շոպիկ կամքի կորովը ալ ունէր։ Բայց պահիկ մը դադրեցաւ՝ ինչպէս տերև մը աշնանային։ Զոհե՞լ աչքե՞րս, ա՛յն աչքերը, որոնցմով յոյս ունիմ տեսնելու ամուսինս և որոնցմով կը փնտռեմ զաւակս։

Մարմնոյս աչքերով խաւարած, բայց հոգւոյս աչքերով բաց՝ կարող եմ տեսնել դանոնք։ Խորհրդածեց ու պոռաց. «Բա՜ց, բարեկամ, բա՜ց, որ դանեմ զաւակս՝ անոր զոհը ըլլայ արեգակս»։

Դրան փեղկերը բացուեցան և կին ներս մտաւ։ Խաւարը՝ ակնապիճներուն մէջ, բայց սրտին մէջ՝ յոյս, ու մարմին մէջ՝ լոյս, քալեց յառաջ։ Փուչը խայթեց ոտքը, հոգը չեղաւ. փոսն ինկաւ, կանգնեցաւ ու բարձրացաւ, արձանացաւ ու նորէն քալեց, երբ հրամայական ձայն մը զինքը կեցուց։

– Ցանդուզն մայր, դէպի ո՞ւր և ի՞նչու։

– Որդիս կը փնտռեմ։

– Հոս է ան, սակայն ի՞նչպէս պիտի ճանչնաս զինքը կոյր աչքերով։

– Բայց են հոգւոյս աչքերը, միայն զինքը գանէի։

Numérisé par CDMF (PP) - 2013

– Այս հարիւրաւոր մանուկներուն մէջ է, գտիր ու տես։

Անտառի թագուհին էր, որ կը խօսէր և անոր նաժիշտները կարգով Շողիկի թեւերուն մէջ գրին փոքրիկները։ Եւ ան յանկարծ ուժգին սեղմեց իր նիհար կուրծքին մանկիկ մը։ Եւ ժպտուն ու ծիծաղուն ձայնեց. «Այս է իմ զաւա՛կս, այս է իմ զաւակս»։

Եւ համբոյրներ կաթոտագին դրոշմեց անոր ճակատին։

Գանգուրներով գուրկ, տառամներով թափուր, աչքերէ կորսուած և ուժէ ընկած մայրը կենդանացա՛ւ, ոգի առա՛ւ և ապան թեւերուն մէջ սեղմաւ՝ կայծակէն աւելի արագ արագաւ գէպի տուն՝ այն տառուն։

Անցաւ գեղին պատին սակի գոնէն ու ծաւալ աչքերն տուգաւ հոս. անցաւ սպիտակ պատին արծաթեայ գոնէն և արծաթէն աւելի սպիտակ տառամնաշարն ընդունեցաւ հոս։ Անցաւ սև պատի սև գոնէն և սեւաթոյր վարսերն տուաւ հոս։ Հասաւ ամուսնին խորքը և գլեսանները նորոգուեցան։ Հասաւ մարդկային ծօտ, որ իր ապարանջանը ձեռքն անցուց։ Հասաւ իր տունը, և ո՛ երկինք, հոն գտաւ իր ամուսինը ու մանուկն իր գիրկը՝ ինկաւ ամուսինին գիրկը՝ գոհուելով գիւղացոյ մայրիկը։

---



Numérisé par CDMF (PP) - 2013

# ՍԷՐ ՈՒ ԿԱՐՕՏ

Զարս երկար տարիներ անցած էին այն օրէն ի վեր, երբ մեր գրկից Սուրբիկ իր սիրելի Վարդանէն բաժնուած էր։ Այդ օրը իր սրտին խորէն Վարդանի ականջէն վար լսած էր՝ «Սիրելիս, աշխարհի վրայ իմ միակս, մի մոռնար զիս, մի՛, և շատով եա գարձիր, շատո՛վ։» Եւ ուրիշցուցած – չէչտով ոգեթով՝ – «Սիրաս ու հոգիս, ամէն տեղ ու ամէն բոպէ գրեց պի-տի փնտռեն ու երգեն»։ Եւ Վարդան անոր ճակտին վրայ իջած խոպոպները սիրուն գլխուն վրայ նետած էր և կարծես երգում բրած՝ «Հոգեա՛կս, քեզ թոգալ չեմ կրնար։ Կ'երթամ, վասն զի հարկը կը պահանջէ, բայց կու գամ քու ուղածէդ աւելի շատ»։

Անցան օրեր ու ամիսներ և տակաւին Վարդանէն լուր չեկաւ ու չեկաւ։ Բայց օր մը Վարդան՝ ինքը պզտիկցած եկաւ։ Սուրբիկ փոքրիկ մը ունեցաւ՝ այնքան նման Վարդանին – ժողովրդական բառին համեմատ – անոր քթէն ինկած։ Սուրբիկ համբուրեց իր փոքրիկը, համբուրեց և ուզեց իր կարօտը առնել։ Ուրախութեան այդ ժամուն սկսաւ իր մանուկին պէս լալ «Ո՞ւր ես Վարդան, ո՞ւր, ահա այն՝ որուն այնչափ կը սպասէիր...։ Մինչ ո՞ւր պիտի մեծցնեմ...։ Զինքը ինձի յիշատա՞կ թողուցիր...։ Քու և իմ գլխուս հա՞գ ցանեցիր...»։

Կեսուրը տեսաւ հարսնուկին ցաւը ու կարօտի ջերմ արտասուքները։ Թէև վարժած էր հրաժեշտի և բացակայութեան – քանի՛ քանի՛ անգամներ իր տասնին ու որդիները «զուրպէթ» գրկած էր – բայց նորէն զգացուեցաւ և հարսին գոռնալով ըսաւ. « Ադ-ջիկս մի լար, մի հատցներ լոյսը ծով ծով աչերուդ։ Պահէ այդ մեղուշ աչերդ Վարդանը տեսնելու։ Եա վաղը տէրտէրին կ'երթամ և քաղաքը գիր գրելով։

Numérisé par CDMF (PP) - 2013

Վարդանին փոքրիկին ծնունդը կ՚իմացնենք։ Աչքս կը խոցոյ, կը զգամ որ այս օրեր Վարդանէն լուր կ՚ելլէ։ Անհոգ եղիր»։

Բայց ահա ման զրան ուժգին հարուածներ և այն՝ եռուէ եռի։ «Այս ի՞նչքան անհամբեր մարդ է», ըսաւ կեսուրը և դժկամակութեամբ զուռը բանալու գնաց։ Գացած ատենը կը պոռար. «Ա՛յ մարդ, քիչ մը խիզ ունեցիր և կամաց թակէ»։ Սակայն ի՞նչպէս մինչև ականջները կարմրեցաւ, երբ զուռը բանալով ակռակրը իր առջևը գտաւ։ Ամօթէն եռ ուզեց քաշուիլ ու թաքչիլ։ Բայց անիկա խնդալից ձայնով բաւ. «Մի փախչիր, Խաթուն, մի քաշուիր, քեզի « մուժուռ՝ » ուեռիս տարա եմ եկած»։

– Կատակ մի՛ ըներ, մինթէ մարդպէ՞ ես որ իմացար թէ այսօր թոռնիկ մը ունեցայ։

– Այնպէ՞ս, այն ատեն երկա՛ր ապրի թոռնիկդ և օր ատաջ հայրիկը տեսնելու արժանի ըլլայ։

– Ա՛խ, ոնոր մասին խօսք մի՛ ըներ։ Հարսնուկս հիմայ գինքը յիշեց և լալէն չի դադրիր. եկուր ներս, տես ատ։

– Չէ՛, չէ՛ Խաթուն, ժամանակ չունիմ, բայց մուժուռյիս փարձը կ՚ուզեմ։

– Խնդրեմ կատակ չընել և ներս գալ։

– Լաւ, լաւ « չարա » չեմ ըներ։ Ահա անուշիկ Վարդանէդ նամակ մը։ Իր գրութիւնը իմ ապուս նամակին էջի ներփակած էր։

Կեսուրը ուրախութենէն ինքզինքը կորսնցուց և նամակն ուռած վազեց հարսին մօտ. «Սուրբիկ, Սուրբիկ, ահա նամակ մը մեր սիրելի Վարդանէն»։

Սուրբիկ յանկարծակի եկաւ այն կանչէն և չուզեց հաւատալ ականջին։ Եւ երբ նամակը տեսաւ՝ չուզեց հաւատալ իր աչքերուն։ Բայց ձեռքերուն մէջ էր նամակը. ոնոր գիրն էր, ոնոր յատակ գիրը։ Ու նամակին թուղթը զողզոջ ձեռքերով հոլիս զարձուց՝ ահա

Numérisé par CDMF (PP) - 2013

բան մը սահեցաւ ու վար ինկաւ։ Եւ ի՞նչ. Վարդան-նի՛ն լուսանկարը։ Կարծես հարսին ու կեսուրին ուշքը գնաց։ Երկուքն ալ գարմացած ու չուարած մնացին։ Անակնկալներու այս ի՞նչ օր. նամակը համբուրեցին, լուսանկարը համբուրեցին. և լացին ու լացին։

Սուրբիկ լուսանկարը մեծնցաւ իր փոքրիկին կակուղ շրթունքներուն։ Որդի ու հայր գիրար ողջագուրեցին։

Բայց յանկարծ կեսուրը ձեռքերը գլխուն դարկաւ. «Վա՛յ գլխուս, ոչրտէրը մոռցայ, երթամ կանչեմ, թող նստի ու նամակը կարդայ»։

Ան ալ՝ հարսն ալ տեղական սովորութեան համաձայն կարդալ ու գրել չէին գիտեր. իսկական սեռին կարդալ գրել սորվիլը կը դիտցուէր՝ որպէս զի իրենց «դարիպներուն» հետ թղթակցութիւն չունենային և դանոնք անհանգիստ չընէին։ Կեսուրը դէպի դուռը աճապարեց, սակայն ոչրտէրը հոն չգտաւ և ցաւած սրտով եւ դարձաւ։Ա՛հ ոչրտէրին հանդէպ անքաղաքավար դանուած էր և ի՞նչպէս անոր երեսը տեսնելու պիտի համարձակէր։ Տէրտէրը բարեբաստութեան չատ ազնիւ և ներողամիտ մարդ էր։ Այդ կէտը գինքը քիչ մը սփոփեց։ Բայց նամակը կար. այն նամակը՝ որուն այնքան տենչանքներով երկուքն ալ սպասած էին։ Մէկը պէտք էր որ՝ այդ լուս ապան խօսեցնէր։ Աչքը միջոցը չուտով գտաւ։ Կեսուրը դուրս վազեց։ Գնաց դրացիին մօտ։ Եւ անոր կարդալ գիտցող տղան առնելով տուն բերաւ։

Սուրբիկ երկնային երջանկութեան մէջ էր։ Նամակը կարդալու հարկ կարծես չէր զգար։ Լուսանկարը գինքը գիւթած էր. իր սիրելի Վարդանը կը տեսնէր։ Ան՝ իր բարեկիրթ պէս երկար հասակով, երկար երկար մազերը կոր դանկին վրայ երկուքի բաժնուած, լեցուն տյաներով։Մտքէն կ՚ըսէր՝ «Այս ո՞րքան

Numérisé par CDMF (PP) - 2013

գիրցած է. անուշիկ անհոգը՝ կերած խմած է ու իր Սուրբիկը մոռցած»:

Դրացիին տան նամակը կարդաց. անոր ամէն մէկ տողը բարի լուր կը նշմարէր: Վարդանին վեցերորդ նամակն էր այն: Ան հայթաւոր եղած էր: Շատ լաւ ամսական կը ստանար, իսկ առողջութիւնը բարձացածէն աւելի: Նամակին վերջաւորութեանը բարեւի և սիրոյ արտայայտումի բառեր միայն կային: Նոյն իսկ իր փոքրիկին համբոյր ու բարի ծրարած էր ու կը կարծէր թէ ան արդէն մէկ երկու ամսուան պիտի ըլլար:

Կեսուր ու հարս շատ ուրախացան և այդ օրը վերջինիս բերանը բացուելու օրն եղաւ: Կեսուրը առնոր խօսելու հրաման տուաւ:

Դրացի մանչուկը նամակը կարդալուն համար տուաւ տուտ վարձք՝ շոյլ գովասանքներ և մրգեղէն:

Պղտիկին մկրտութեան գեղեցիկ օրը եկաւ հասաւ: Նամակ կարդացող մանչուկը կնքահայր եղաւ: Եւ այսպէս՝ իրեն կը վերապահուէր օր մը ալ հարսանեկան «թագաւոր»ն ըլլալու պատիւը: Թէև կեսուրը քահանային ամօթով մերձեցած էր և մկրտութիւն խնդրած, բայց ասիկա գինքը թեթև մը յանդիմանած, այն վարկածին համար թէ՝ վերաւորուած ըլլայ: Փոքրիկը մեծ հօրը անունով Ստեփան կոչուեցաւ՝ մեծ մայրիկին և մանկիկին հօրը կամքին համաձայն:

Սուրբիկ իր քրիստոնեայ եղած փոքրիկը համբուրեց, երբ գինքը տուն բերին և այդ օրը տան մէջ մերձաւոր բարեկամներու և ազգականներու մէջ հաճելի ժամանց և կերուխում տեղի ունեցաւ:

* * *

Քանի մը շաբաթ յետոյ Սուրբիկ Ստեփանիկին որորոցէն կախեց կապոյտ հլուններ, որպէս զի մանուկը անոնց հետ խաղար, բայց մանաւանդ որպէս զի շար աչքի չդար: Փոքրիկը այդ հլունները խաղալիք

Numérisé par CDMF (PP) - 2013

բրաւ, ու գանգը չարժելով կը գուարճանար և ուրախութեան ձայներ կ՝արձակէր։ Երբեմն ալ երբ սրսրոցին մէջ նստած կ՝ըլլար, հլուններբը բերանը կը տանէր ուտելու համար։ Նոյն քանի՞ քանի՞ անգամ պատուհանէն ներս նայող լուսինը ուզեց բռնել և ճչեց ու աղաղակեց դինքը սրսրոցէն դուրս հանելու համար։ Իսկ կատուին ձագուկին հետ թէ ի՞նչեր բրած է, այդ ինքը գիտէ։ Ի՞նչքան անուշ էր իր ժպիտը՝ երբ փոքրիկ կուշտ էր, երբ սրամտութիւններ լու էր։ Այն տեղն ուրախ ուրախ՝ փոփիկ թաթիկներովը մայրիկին ու մեծ մայրիկին ձեռքերուն ու երեսին հետ կը խաղար։

Սուրբիկ ջանք չէր խնայեր իր Ստեփանիկը տասնչ մեծցնելու։ Ա՞րքան հրճուեցաւ երբ անոր բերանին մէջ առաջին ատամը տեսաւ, թէև անիկ ատաջ բաւական նեղութիւն և անհանգիստ գիշերներ ունեցաւ, վասն զի ապան կու լար և անարամապիր էր։ Խեղճը ցաւ ունէր՝ մէկը իր լինդին մէջ մտած էր և անիկ գուրս ելլել կ՝ուզէր։ Վերջապէս մէջտեղ եկաւ այդ թշնամին, որ ապա որկոբին բարեկամ և օգնական պիտի ըլլար։ Այն օրը պղտիկը սեղանին վրայ նստեցուցին ու անոր գլխէն վար տեղացուցին շամիչ, կաղին և ուրիշ զանազան չոր միրգեր և անոր փոխարէն ներկանները դրծածեցին իրենց ակռաները և ստամոքսները ծանրացուցին։ Իսկ ան ուրախութեան ճիչերով տուն ու սիրտ կը լեցնէր։

Այս ուրախալի օրն ալ անցաւ։ Եւ կամաց կամաց ոպիտակ սիրունիկ ակռաները անոր բերանը զարգարեցին։ Մայրը մէկ տարի գինքը կաթով սնուցանելէ ետք՝ գիւրամարս կերակուրներու վարժեցուց, թէև ոչ այնքան գիւրաւ։

Նմանապէս Ստեփանիկ չորս կոգմէն ձոգիներով չրջապատուած տեսակ մը վանդակի մը մէջ գրուեցաւ և սկսաւ ոտքերու վրայ կենալ ու քայլեր փորել։ Քիչ վերջ սենեակին մէջ պատերուն հետ քալեց և օր մը ալ

Numérisé par CDMF (PP) - 2013

ասանց պատին ոգնութիւնը մուրալու արագ արագ վազելով, բայց գինովի պէս շարժելով գնաց ինկաւ մայրիկին իրեն երկնցուցած ձեռքերուն մէջ։ Մայրը իր քաջ մանկիկին այս առաջին յաղթանակը ժպիտով ողջունեց ու վարձատրեց երկար ու անուշ պաչիկով։

Ո՜ մանկութիւն անհոգ ու ծիծաղի ծաղիկներով լեցուն։ Մայրը կը տեսնէր իր մանկիկին զարգացումն ու սնունդը և կը հրճուէր։ Ուրախ էր որ պիտի կարենար Վարդանին առողջ ու յուսալից ժառանգ մը ներկայացնել։ Բայց սակայն սև մտածութիւնը դինքը կը լլկէր. պիտի կարենա՞յ դիրար տեսնել և այն ալ ե՞րբ։ Երանի՜ թէ ժամանակը արձիւ թեւերուն վրայ հանդչած՝ չուտով դար։ Կարօտ ունէր ու այդ կարօտը կը կրկնապատկուէր և կը բազմապատկուէր, երբ փոքրիկը իրմէ սորված՝ անուշ ձայնով և կարծես մեծ բան մ'բրած ըլլալու հպարտութեամբ կը պոռար ու կը կանչէր. «Պապա՜, պապա՜»։

Երեկոյ մը կարծես Սուրբիկի սիրտը ալ չկրցաւ իր կուրծքին տակ ամփոփուիլ, այնքան եղաւ։ Սանեփանիկ սեղանին վրայ դանելով հայրիկին յուսաներկարը բերաւ դայն մայրիկին ու բացականչելով ըսաւ՝ «Աչէ՛, Աչէ՛ (նայէ), պապան է, պապան»։ Եւ մայրիկին դիրկն ինկաւ ծիծաղելով։ Ան ծիծաղեցաւ, իսկ մայրը կարօտի խոշոր խոշոր կաթիլներ կլլեց ու զանոնք չցուցուց իր մանկիկին։

Կանանկներն ու արագիլները դարուններն իրենց թեւերուն կապած եկան և աչուններով ու ձմեռնէն խոյս տուին, այո՛ եկան ու գացին։ Բայց Վարդան չեկաւ՝ որ երթայու վրայ խօսք ըլլայ։ Իր նամակները բարերասաօրէն լաւ ճամբան դուած էին և անկասուսա կու գային և անյապաղ կը վերադառնային պատասխանով։ Անոնց գոհացուցիչ բովանդակութիւնը յաւելեալ դժբախտութեան կասկածի ծանրոցը սրտերէն դոնէ հեռու կը պահէր։ Բայց Սուրբիկ կարօտէն չափազանց

Numérisé par CDMF (PP) - 2013

կը նեղուէր։ Սակայն իր մօր տունը կ'երթար ու կը տրտունջէր որ՝ իրեն ի՞նչու կարդալ ու գրել չեն սովորեցուցած։ Ինչե՞ր, ինչե՞ր պիտի գրէր իր սիրելի դարձին, իր անգին Վարդանին։ Իր գրչին փետուրին վրայ առած գինքը հեռաւոր քաղաքէն՝ տուն պիտի բերէր, այնքան պիտի գրէր ու լար, որ անիկա ձանձրանար ու ելլէր տուն դար։ Եւ օր մը ալ, «Բաւ է, բաւ, ինքդինքը տանջել» ու վազեց տէրտէրին մօտ։ «Թէ անոր մեղքերս անկեղծօրէն կրնամ ըսել, ինչո՞ւ որտեղ կարօտ պիտի չյայտնեմ»։ Կեռուրէն կանխու թիւրուութիւն խնդրեց, վասն զի սոփորութեան համաձայն էր նամակ գրել ու կարդալ տուողը. և գնաց տէրտէրին։ Գրել տուաւ ինչ ու ինչեր որ կը ցանկար։ Քահանան՝ մարդու «հալէն» հասկցող մարդ՝ գրեց այնպէս և այն ամէն բան որ թելադրեց։ Պարզեց Սուրբիկի կարօտը, անոր սիրտը ներկայացուց իրրև բոց նամակ, որուն ամէն մէկ տողը սիրոյ կրակ էր և հրաւէր հայրենիք դառնալու։

Այն օրէն ի վեր Սուրբիկին սիրտը թեթեւցած էր և կրկնապատիկ փոյթ կը տանէր իր դաւակին լաւ զարգացումին, որպէս զի վերադարձող հօրը ուրախութիւնը՝ կրկնապատկուէր։ Եւ ժանուկը անոր խնամքին տակ զարգացաւ, ուռճացաւ և թերթեր բացաւ։ Անոր ամբողջ եղան մէյ մէկ վարդեր։

Օրերը անցան, թէև Սուրբիկին համար շատ դանդաղ, և ահա օր մը տէրտէրը Վարդանէն նամակ բերաւ։ Կարճ էր բովանդակութիւնը և կարիք ալ չկար երկար գրելու։ Վարդան կը հաղորդէր թէ՝ մէկ երկու ամսէն մայրենի ափերը կը վերադառնար և շատ ու շատ ըսելիքներ ունէր։

Սուրբիկի սիրտը ուրախութենէն չէր կարող կուրծքին տակ պարուրուիլ։ Ուրախացաւ ան, ուրախացաւ կեսուրը և մանուկն ալ կարծես կը գգար անոնց ուրա-

Numérisé par CDMF (PP) - 2013

խութեան պատճառը։ Անուշ անուշ ճիշերով տունը կը լեցնէր։

Սուրբիկ բոլոր թափով տունը և դրսի գործերը կարգի դնելով սկսաւ զբաղիլ, որպէս զի երբ Վարդան գար՝ գործ ու ընելիք չունենար և զիրար տեսնելով ու զիրար վայելելով անցնէին այն օրերը, որոնք արդէն իրականին շատ երկար չէին։ Վասն զի ան պէտք էր միայն ձմեռն անցնել ու գարնան՝ ծիծառներուն հետ նորէն Թուտուտան երթալ։

Սուրբիկ մաքրեց, շտկեց իր զգեստները, հարսանիքի տանն գործածած հագուստները դուրս հանեց գարանէն, և նոյն իսկ ձեռքերու հինան պատրաստեց։ Բայց շափազանց աշխատանքը և հոգը, նաև կարօտը այլևս իր գագաթնակէտին հասած՝ զինքը տկարացուցին։ Օր մըն ալ քրտնած ըլլալով ու անփոյթ գտնուելով՝ ծանրապէս հիւանդացաւ։ Գլուխը կը ցաւէր, ջերմը զինքը կը լլկէր։ Ոտքի վրայ կենալու ոյժը կը պակսէր։ Հնկողին ինկաւ։ Մարմնական ու հոգեկան ցաւերը զինքը կը նեղէին։ Ինքն իր տէրը չէր։ Ի՞նչ պիտի զգար իր Վարդան, երբ վաղը կամ քանի մը օրէն գար և զինքը այնպէս գտնէր։ Մինչ կաթուած պիտի չունենա՞ր։ Կուլար ու կը տառապէր։ Բայց կեսուրը զինքը կը մխիթարէր։ Ամէպ անոր հայ անուանի աշուղին խօսքերը կը կրկնէր՝

«Զախորդ օրերը ամրան նման
Կու գան ու կ'երթան։
Յուսահատելու չէ, վերջ կ'ունենան,
Կու գան ու կ'երթան»։

Կեսուրը հարար կը խնամէր և ամէն փոյթ կը տանէր, որ օր առաջ բուժուէր։ Բժիշկ կանչեց։ Դրամ ու հոգ չխնայեց։ Մէկ ձեռքովը հարսին կը նայէր և միւս ձեռքովը թոռնիկին հոգ կը տանէր։ Մերթ ընդ մերթ տնէն դուրս կ'ելլէր ու աչքերովը սարերու գագաթները կը բարձրանար – բարեբաստօրէն աչքերը լաւ տեսա-

Numérisé par CDMF (PP) - 2013

դուխնամբ օժտուած էին – և համբարդ ու եկող կը վերնագրէր։ Մակդ ակռանչները կը լարէր, դուցէ անկիւնէ մը ձայն մը ելլէր, թերեւս մէկը աւելիս տար թէ՝ իր դաւակը արդէն եկած հասած է։ Կ'ուզէր որ արդին չուտ հասնէր։ Բայց նաև կը բաղձար որ անոր դայլուտէն առաջ հարսը առողջացած ըլլար։

Աշնանային առաւօտ էր։ Արեւի ամպոյն ճառագայթները հանդչած էին ծառերու գունակ գունակ, բայց արդէն կենսաբերի տերեւներու վրայ։ Անոնց ընկերներէն շատերը դեռին ինկած՝ հողին կը սպասէին, որ գիրենք պիտի առնէր քշէր անկիւն մը՝ հոն թաղելու համար։

Արեւի փոքրիկ ճառագայթ մը Սուրբիկի սենեակին լուսամուտէն ներս սպրդելով՝ եկած թառած էր անոր անկողնին վրայ։ Սուրբիկ աչքերը բանալով տեսաւ սոյն անուշիկ ճառագայթը և սիրտուեցաւ։ Մտքէն ըսաւ՝ «Այսօր լաւ օր է, Վարդանս տարերու վրայ պիտի չմտի»։ Բայց ինքը տաք անկողնին մէջ դեռ թեթեւ գոյ ունէր։ Ձերմը դեռ գինքը չէր թողուցած։ Քիչ մը քրտնած էր, սակայն և այնպէս թեւերը վերմակէն դուրս հանեց, աչքերը շփեց ու հայելին ձեռքն առաւ։ Փոփկիկ մազերը – ճոխ ու խարտեաշ – խառնակուած էին և ուսերուն ու բարձին վրայ սփռուած։ Նայեցաւ դէմքին։ Մթէ այն ի՞նչ դէմքն էր։ Լեցուն այտերը բոլորովին ներս ինկած էին. շատ փոխուած էր։ Հայելին իր տեղը դրաւ ու գլուխը վերմակին տակը քաշելով սկսաւ լալ։ Կեսուրը մերձակայ խոհանոցը կ'աշխատէր. լսեց անոր հեկեկանքը և քովը վազեց։ Ձեռքը անոր ճակատին վրայ դնելով՝ սկսաւ գինքը մխիթարել. «Քաջ եղիր, ապշիկս, տաքութիւնդ բաւական իջած է։ Այսօր կամ վաղը ինքզինքդ կը գտնես, և Վարդանիս հետ երջանիկ կեանք կ'ունենաս։

– Այո, աւա, անիկա կու գայ հոգիս Գարբիկլ հրեշտակին յանձնելու համար։ Եթէ ատոր ալ հասնելու բախտս ունենայ։ Կու գայ գիս սև հողին մէջ դնելու։

Numérisé par CDMF (PP) - 2013

– Զէ՛, աղջիկս, այնպէս մի մտածեր. պիտեմ երէկ մշուշ էր և տամուկ, այսօր արեւոտ է և ջերմին, այսպէս՝ երէկ աւելի ծանր հիւանդ էիր, իսկ այսօր նուազ: Յաւը կ՚անցնի: Հիւանդութիւնը ինչպէս եկաւ՝ այնպէս կ՚երթայ: Պիտի առողջանաս և իմ սիրելի Վարդանիս ու անուշիկ Թոնիկիս հետ երջանիկ օրեր պիտի վայելես. պիտի ծիծաղիս որ այսքան տխուր եղեր ես:

– Խօսքով միայն: Զէ՞ որ այն տարին երբ Վարդան Ռուսատան գնաց՝ դաշտին մէջ խոտ քաղած ատենս կկուն կանչեց և ես հաշուեցի: Անպիտանը միայն չորս անգամ կո՛ւ, կո՛ւ կանչեց:

– Լաւ, անկէ ի՞նչ կ՚ելլէ:

– Զէ՞ որ քանի անգամ որ կը կանչէ, այնքան տարի մարդ դեռ պիտի ապրի: Չորս տարին մօտ ատենէն կը լրանայ և ես պիտի մեռնիմ և այն՝ ատանց Վարդանս տեսնելու և անոր անուշիկ Ստեփանիկս պիտի ձգեմ որը:

– Լաւ, ու մի տանջեր հոգիդ և մարմինդ: Յաւը մարդուն համար և մարդը յաւին համար. այս արդէն ստէպ լսած կ՚ըլլաս: Բայց յաւը անցաւոր է: Մի հաւատար անբան անասունին: Թեզի կ՚ըսեմ՝ դուն պիտի առողջանաս:

– Այո, մահը մարդուն համար է և մարդը մահուան համար. այս ալ հարկաւ դուն իմացած կ՚ըլլաս: Կկուն մարդ չէ որ կաշառուի, սուտ չի խօսիր: Ես պիտի մեռնիմ:

– Զէ, աղջիկս, այնպէս մի մտածեր: Բահանան քարոզին մէջ ըսաւ թէ՝ այդ աւելորդապաշտութիւն է: Կկուին կանչը արժէք չունի: Դուն քանի եղիր, ինչպէս մինչև այսօր էիր: Տիրամայրը քեզի պիտի պահպանի: Ես հիմա ակրտէրին կ՚երթամ անկէ կը խնդրեմ որ քեզի սուրբերու մասունքները համբուրելու բերէ. նաև մայրիկդ ալ հետս կ՚առնեմ ու կու գամ: Արդէն կը զարմանամ որ՝ անիկա այսօր ուշացաւ:

Numérisé par CDMF (PP) - 2013

Կեսուրը թէև այսպէս բան, սակայն խոհեմական դատաւ սպասել և երբ Սուրբիկի մայրը եկաւ՝ ելաւ դիմաց։

Կէս ժամէն կեսուրը տուն դարձաւ, չատ ուրախ։ Ճամբան աւետիս տուած էին թէ՝ մերձաւոր թաղերուն մէջ իր դաւակը տեսնուած էր։ Եւ ան տունը փոխած էր հովէն ալ արագ, ուրախութիւնը գինքը երիտասարդ ըրած էր, թոչունի թեւեր իրեն պարգեւած։

Հասաւ տունը։ Բայց ի՞նչ տեսնէ. տան դուռը բաց և ներսը ձայն ու ծիծաղ։ Հոն էր իր սիրելի Վարդանը՝ մանկիկը գիրկը և Սուրբիկի ձեռքերը անոր պարանոցին վրայ մանեակ կազմած։ Ինքն ալ թռաւ ինկաւ անոնց վրայ։

Զորս երկար տարիներ անցած էին այն սև օրէն ի վեր...։ Զորս տարեր այսօր գիրար գտած էին...։

---

## ԱՋՔԸ ՍԱՐԵՐՈՒՆ՝ ՄԵՌԱԾ ԷՐ

Ինծմէ դուցէ հապա հինգ տարիով մեծ բլլար։ Աղջիկ էր հէքեաթներու մէջ երգուած ու փառաբանուած հուրիներու գեղեցկութեամբ ու շնորհալիութեամբ։ Սակայն իմ վրան ամէնէն աւելի ապտուորութիւն բրած անոր ուրախ բնաւորութիւնը։ Չէր գիտեր թէ տիրել ի՞նչ էր։ Կերգէր ու կը կատակէր, կը խաղար ու կը պարէր։ Թռչուն էր անհոգ ու գեւրեղուն։ Եւ չեմ գիտեր՝ կա՞ր մէկը որ չսիրէր և կամ անոր հետ խաղալ ու պարծ ունենալ չուզէր։ Կը կարծէի թէ անիկա այս աշխարհիս մէջ միակ երջանիկն էր և ցաւ բաւական չունէր։ Որովհետև կը մտածէի՝ աղջիկ մը, որ մէկուն ոսքը կոխած չէր, ու միշտ ժպտուն էր և այնքան գեղեցիկ, ստեղծուած էր մի միայն սիրուելու։ Եւ այդպէս ալ էր։ Զանիկա ատող չկար ու սիրողներ անթիւ։ Դեռ

Numérisé par CDMF (PP) - 2013

փոքր էի և չէի հասկնար, սակայն մտապիր եղած էի՝ որ յատկապէս պատանի մը ստէպ անոր խաղին ու պարին, խօսքին ու գործին սիրով ու հետաքրքրութեամբ կը նայէր։ Անգամ մայրիկիս այդ բանը ըսի և ան խոժոռ ակնարկով դիս չեխեց։

Աղջկան անունը Եղինէ էր, իսկ պատանին Կարապետ կը կոչուէր։ Առաջինը՝ մեր ազգականներէն, երկրորդը՝ մեր դրացիներէն։

Օր մը – գրեթէ մթնշաղի տաւոնները – Եղինէի և ուրիշ աղջիկներու և մանչերու հետ աշկապուկ կը խաղայինք։ Ձիշդ այդ պահուն մէջքիս ցաւ, որ երկու շաբաթ անգամ դիս կը տառապեցնէր, նորէն բռնեց ու եւ խաղէն հեռանալով՝ Եղինէի տան առջև կանանչութեան վրայ երկնցած՝ նախանձով իմ ընկերներուս խաղին կը նայէի։

Եղինենց տան դուռը քիչ մը բաց էր և տեսայ երկու կին, որոնք եռանդով իրարու հետ կը խօսէին։ Ինձի ծանօթ կիներ էին՝ Եղինէի մայրը Տիկին Տիրուհին, զոր Տիրուն կոչել սովոր էինք և Կարապետի մեծ մայրիկը՝ պառաւ Սրբուն։ Տիկին Տիրուհի քիչ մը յուզուած էր և այտերը կարմրած։ Կը պոռար կամ թէ կը բողոքէր. «Ամօթ բան է Թոռնիկիդ ըրածը։ Միշտ իմ աղջիկանս մտերէն կախուած է։ Բայց ես գիտեմ՝ իմ ապջիկս որո՞ւն կու տամ։ Մեր երկրին մէջ ո՞ւր տեսնուած է որ տղաք իրենց ամուսինը փնտռեն՝ ու գտնեն։ Այդ՝ ծնողքի գործ է։ Ես կընամ ու կ'ուզեմ իմ ապջիկս շատ լաւ տեղ դնել։ Թոպաւորի մանչն անգամ կրնայ անոր ամուսինն ըլլալ»։ Տիկին Սրբուն կը ջանար զինքը հանդարտել որ՝ իր Կարապետին տար, հարուստի զաւակ էր։ Հարկ չկար ըսելու որ՝ սիրուն և բարեկիրթ էր։

Թէ վերջէն ի՞նչ եղաւ՝ ես չեմ գիտեր, որովհետև տուն դացի և լսածներս մայրիկիս պատմեցի։ Ան ծիծաղեցաւ։

Յաջորդ օրը անկողնիս մէջ դամուած էի։ Եղինէի

Numérisé par CDMF (PP) - 2013

մայրը մեզի այցի եկաւ։ Անոր հետ էր իր ապչիկը։ Որքան ուրախացայ որ Եւգինէի հետ պիտի կարենայի խօսիլ ու ցաւերս մոռնայ։ Բայց զինքը շատ շատ կրնայուցի։ Վասն զի Տիկին Տիրուհի զանիկա մայրիկիս ներկայացուց յատուկ ձեւով մը ու ըսաւ. «Փոքրիկ հարսը չնորհաւորեցէք»։ Եւգինէ վարդի պէս կարմրեցաւ ու անէն դուրս փախաւ։ Ինչ եղաւ՝ ինծի եղաւ։ Արդ Եւգինէի ներկայութիւնէն ու խօսակցութիւնէն զրկուեցայ։ Տիկին Տիրուն պատմեց որ՝ Կարապետի մեծ մօրը խնամքէն ու ապաշանքներէն ազատուելու համար՝ իր ապչիկը անոր Թոնիկին հետ նշանել կ'ուզէր։ Մայրս այս բարեբաստիկ առիթին համար զինքը շնորհաւորեց և մտքեց որ՝ երկուքն ալ մէկ բարձի վրայ ծերանային և շարը անոնց երջանկութիւնը չպղտորէր։ Բայց ցաւ յայտնեց որ՝ իր ընտրութեանը մէջ շատ ուշացած էր, մինչ պակաս չէին շատերը, որոնք օրորոցէն իրենց փոքրիկները արդէն նշանած էին։ Ապա իրարմէ հեռացան։

Ու մեր մանկական ու պատանեկան խումբէն հեռացաւ Եւգինէ։ Ես առոյգացայ։ Մեր խաղերը փերբակլան, բայց Եւգինէ մեզի հետ չէր խաղար։ Գրպան ապրիւրին պէս ալ չէր երգեր ու ծիծաղեր։ Զէ՞ որ նշանուած էր և մեծերու շարքին մէջ դասուած։ Սակայն զինքը սատարիչ ընկուզենի մը տակն կը տեսնէի։ Ապրիլ-շուտ՝ յուսթի մատերով պատկուած իր պստիկ գլուխը կախ՝ կը մտածէր ու կը մտածէր։ Գիտէր որ Կարապետի ծնողքը հարուստ էր։ Կը տեսնէր որ անիկա չինարի հատակով՝ գեղեցիկ ու մանուանդ բարի երիտասարդ էր։ Բայց կ'ուզէր դեռ ապչիկ մնալ, կը բաղձար մայրիկին և հայրիկին հոգանիի տակ ժպիտով ապրիլ։ Սակայն Կարապետին ալ համակրեցաւ։ Ի՞նչ լաւ կ'ըլլար եթէ ան ու ազատութիւն կարենար իրարու հետ միացնել։ Անոր միակ մտածութիւնն այդ էր։ Լուծում կ'ուզէր՝ և չէր կրնար լուծել։ Կարապետին չէր ուզեր երթալ՝ մեծ մայրիկին համար, վասն զի այդ կնոջ մասին – թէև սխալ – դէշ բաներ լսած էր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Գիշեր մը լուսնցաւ Եղինէի նշանաւորքովը, որմէ երկու ամիս յետոյ Կարապետ Թուսաստան գնաց, բայց խոստումով՝ երկու տարիէն դալու և հարսանիք ընելու։ Եղինէ անոր մեկնումին վրայ շատ ցաւեցաւ։ Ակը արդէն բորբոքած էր և մեծ մայրիկը մեռած։ Այժմ կրնար կամ կ'ուզէր Կարապետենց տունը երթալ և հոն իր Կարապետին հետ երջանիկ օրեր հիւսել։

Երկու տարիները թէև յամբընթաց, սակայն եկան ու անցան, և դեղեցիկ առաւօտ մը դեղեցիկ Կարապետը հոն առաւ ու բերաւ։ Կարելի է ենթադրել Եղինէի ուրախութիւնն ու երջանկութիւնը։ Կարապետ գիրցած ու մեծցած էր։

Փակ օրերը վերջացան ու հարսանիքի օրերը իրարու յաջորդեցին։ Շտաները ամուսնացան։ Պար ու երգ, կեր ու խում ամէն կողմ։

Կարապետի հարսանիքի օրը որոշուեցաւ։ Պատրաստութիւնները, որոնք շատոնց սկսած էին, նոր թափով յառաջ տարուեցան։ Նոր զգեստներ ու զարդեր շինուեցան, մանաւանդ հարսնուկին համար։

Հարսանիքէն քանի մը օր առաջ տեսայ, որ ինչպէս անոնց տունը սենեակի մը մէջ բազմաթիւ զուլպաներ շարուած էին և կին մը դեղեցիկ թաշկինակներ տուփերու մէջէն կը հանէր ու անոնց քով կը դնէր և զանոնք իրարու կը կապէր։ Նաև նկատեցի՝ որ ուսերիններու խանդաղ պատրաստութիւն կար։ Ինձի բոլոր որ հարսանիքի օրերը շատ մօտ են և «Ապուէնները» պիտի գան։ Հետաքրքիր էի թէ այս ապուէնները ի՞նչ ու ի՞նչպէս էին, և ո՞ր տեղէն երեւան պիտի գային։ Կարելու կողմը վազեցի, և ի՞նչ տեսնեմ։ Ընկերներէս ու մեծ մասով Կարապետենց ազգականներէն շատ մը մանչեր, ամէնքը զարդարուած ու «կածնուած» ուրախ զուարթ երգելով Եղիններուն տունը կու գային։ Եղինէի մայրը և անոր մօտ հաւաքուած ուրիշներ գանոնք տուն հրաւիրեցին։ Առաջնորդեցին սենեակ մը, որ զարդարուած

Numérisé par CDMF (PP) - 2013

էր ու անոր մէջտեղը սեղան մը՝ ուտելիքներով, միրգերով և չորքոտներով բեռնաւորուած։ Ապուէնները թէյ խմեցին՝ հետը թաթխիչ ու գաթայ ճաշակելով, նմանապէս ախորժակով հաստութայ, ձուաղեղ, պտուղ ու «չէօրէք» կերան։ Երգեցին ու ճաւաղեցին. կատակներ ըրին։ Հարսին ու փեսային շնորհքն ու գեղը, հարստութիւնն ու տոպրակութիւնը գովեցին ու փառաբանեցին, ինչպէս անէն անոնց բերանը դրուած էր։ Ես անոնց մէջ խառնուեցայ, սակայն անոնց պատասխան աչք չունեցայ։ Անոնց հետ խօսեցայ ու երգեցի։ Եւ նկատեցի որ ի՞նչպէս դրան մէկ թեթեւ բացուածքէն՝ Եւգինէ երբեմն երբեմն իր աչքերով ներս կը մտնէր՝ կը նայէր։

Երկու երեք ժամ տեւեց ապուէնների ուրախութիւնն ու հիւրասիրութիւնը։ Անոնք հարսանիքի օրը կրկին աւեւեցին ու ոտքի ելան։ Եւ ահա քանի մը տիկիններ ու օրիորդներ ամբարեցին և ամէնուն մէջքէն գոյգ մը գուլպայ և թաշկինակ մը կախեցին։ Իսկ փեսային ամէնէն մերձաւոր ապպականին, որ անոնց պլուխն էր, ապուօրիկ աքսաղ մը տուին։ Տեսնէ՞ր ապուէնների ուրախութիւնն ու արամագրութիւնը։ Անոնք գարձեալ երգելով ու կանչելով Եւգինենց տունը թողուցին՝ իրենց բերդին ու շրխունքին վրայ՝ շնորհակալութեան ու մաղթանքի հայեր ու բիւր բան։ Երբ բուսական հեռացան էին, յանկարծ իրարանցում մը տիրեց։ Բարձր անէ մը սոփոր մը ջուր, ապա ուրիշ տեղէ մը գարձեալ ջուր շաղաչելով անոնց վրայ ինքս։ Շտաւերը թրջած մտէ եկան։ Կարծես քարերը կրակի վրայ թափուած՝ ջուրը անոնց ուրախութիւնը վերարծարծեց և անոնք աւելի եռանդով ու խանդով երգելով գարձան փեսային տունը։

Անկէ վերջ Եւգինէն աւելի տխուր քան ուրախ աւասայ։ Երանի՜ թէ մէկ բոպէի մէջ բլլար բլլալիքը և երթար անցնէր։ Զէ՞ որ դեռ քանի մը օր և ան իրենց տունն պիտի հեռանար։ Այն տունն՝ որուն մէջ արեւի առաջին

Numérisé par CDMF (PP) - 2013

ջողը իր աչքին հանկիսած էր, ուր լսած էր օրօրներ ու միայն սիրոյ խօսքեր։ Ուր կային գարմանալի մայր ու խանդակաթ հայր ու այնքան սիրելիներ։ Պիտի բաժ-նուէր իր մանկութեան ու ազգիկութեան ապատ ու ան-հոգ օրերէն։ Պիտի մանէր հոգար ու մէկ գործերու մէջ։ Ամեսցի էր և լուրջ ազգիկ և հասու թէ ինչպիսի՞ քայլ էր որ կ'առնէր։ Երկու սէր –տան ու Կարապետի– անոր սրտին մէջ նոր թափով կռիւ սկսան։ Մայրը սրքան ալ անոր հոգեկան վիճակին ծանօթ էր – չէ՞ որ ինքն ալ սրոշ չափով նոյն պայքարը ունեցած էր – սակայն մեծ արժէք չէր տար և այդ մասին քիչ կը խօսէր։ Ամոլ էր որ կու գար ու կ'անցնէր։ Ե՛ւ եկաւ հասաւ հարսանիքի նախօրեակը։ Այդ օրը տեսայ թէ՝ ինչպէս Եւգինէի ձեռքերուն հինայ դրին։

Յաջորդ օրը հարսանիքի օրն էր և կիրակի։ Եւգինէ ու Կարապետ խոստովանանք եկան ու հաղորդուեցան, մէկը՝ մայր եկեղեցին, և միւսը՝ թաղին մատուռին մէջ։

Կէսօրին Կարապետենց տան մէջ այրեր ու կիներ հաշի նստեցան։ Ամէնքը ճոխ հագնուած ու զարդարուած էին։ Ուրախ ու զուարթ։ Կերակուրներ՝ համեղ ու պէս-պէս՝ սեղանի վրայ եկան և գինիի գաւաթները հա-զար ու բիւր մաղթանքներով խմուեցան։ Կեր ու խումբ երգով ու կատակով համեմուեցաւ։ Քիչ վերջը անանցմէ հոն բազմութիւն մը բաժնուեցաւ։ Մաս մը՝ ղլխաւորաբար երիտասարդութիւնը գինուած էր։ Ա-նոնք՝ ի հարկին՝ հարսը պիտի պաշտպանէին և հրացա-նաձգութեամբ հարսանիքին փայլը պիտի աւելցնէին։ Ելան գացին հարսը բերելու։ Որքան հարսին տան մօ-տեցան՝ այնքան անոնց թիւը աճեցաւ ու խումբը մեծ-ցաւ՝ հետաքրքիր անցորդներով ու մերձաւոր գրացի-ներով։ «Ծավուլ գուռնա»ն, տիկը և «քեմանչէ»ն իրենց ուրախ ձայներովը՝ հարսանիքի ու զուարճութեան կը հրաւիրէին։ Հարսնաւ խումբին մէջեղէն կ'երթար երգ-կար հատակով կայտառ երիտասարդ մը։ Ան բռնած է



Numérisé par CDMF (PP) - 2013

սանձէն այն երջանիկ նժոյգին, որ Հարսը իր վրան պիտի կրէր և գորգերով ու փափուկ բարձերով բեռնաւորուած էր։ Անոնց վրայ պիտի նստեցնէին նաղելի Հարսնուկը։ Կէս ճամբան յանկարծ երկու երիտասարդ խումբէն բաժնուեցան և գրեթէ վազելով եկան Հասան Հարսի տունը և երգելով ըսին՝

«Ղլավուզ եմ, ղլավուզ, գարդայ կ՚ուզեմ,
Զիսուս գարի կ՚ուզեմ, ինձի գինի կ՚ուզեմ»։

Անոնք Հարսը տանողներու ժամանումը աւետողները նկատուեցան և պարգեւներով վարձատրուեցան։ Անոնց մէջէն և ձիերու դլխէն գոյնզգոյն գուլպաներ ու թաշկինակներ կախուեցան։ Եարէն իրենց խումբին հետ նորէն միացան և դանոնք Հարսին տունը առաջնորդեցին։ Հարսին Հայրը անոնց առջև երդելով ներս Հրաւիրեց։ Բարեկամներու և ազգականներու հետ դանոնք պէսպէս ուտելիքներով և ըմպելիներով սկսաւ մեծարել և գրաղեցնել։ Նոյն միջոցին ալեւոր քահանան եկաւ և Հարսին Հալաւները օրհնեց ու շուտով գնաց։ Բնական է՝ նուէս ընդունեցաւ։ Գնաց ու յանկարծ ականջիս լսաւ և պատաւ ձայներ Հասան։ Ուշադիր եղայ։ Եւրինէի ձայնն էր։ Կու լար։ Կը պատաբ ու կը կանչէր։ Սակայն ի՞նչու։ Քովի սենեակէն էր ձայնասունը. ուզեցի ներս մտնել։

Ի զուր. չթողուցին. մանաւանդ թէ կարմիր այտերով ծերուկ մը քիչ մնաց որ շատաչուն ապտակ մը երեսիս իջեցնէր։ Զէի ուզեր որ Եւրինէ իր փառքի օրը լար։ Կին մը երկրաթիւնը ինձի Հաղորդեց։ Քանի մը կիներ Եւրինէի Հարսներ կը Հագցնէին և ան չէր ուզեր։ Թեւերը կը շարժէր, ոտքերը կը ձգտէր։ Հագցուած զգեստը նորէն Հանելու ճիգեր կ՚ընէր և նորէն բանի կը Հագնէր։ Թէ նոյ կ՚ընէր և թէ չէր ուզեր։ Ինքն ալ չէր գիտեր՝ ո՞րն էր լաւը։ Գեղեցիկ զգեստներու մէջ կը ծրարէին, բայց և իր գեղեցիկ ապատութիւնէն կը զրկէին։ Զինքը իր սիրելիներու քովէն կը Հեռացնէին, բայց և զինքը իր սիրելիին մօտ կ՚ուզէին տանիլ։ Երբեմն անուշ

Numérisé par CDMF (PP) - 2013

խոսքերէ տարուելով և երբեմն սատիչ ձայներէ վախ-
նալով հաղնուեցաւ։ Այդ լուր տրուեցաւ ու կեսրայրը
ներս մտաւ։ Հարսը զգեստաւորող կիները, մանաւանդ
լեզուանիներ, իրենց նոր հարսին զովքը հիւսեցին։ Եւ
մինչև որ «կածներհախ», մէկ զեղին սոկի չտուցան,
հարսը անոր չյանձնեցին։ Ան, այսպէս բանք, հարսը
գնեց և քոյրը (փուչին) անոր երեսին վրայ քաշելով
դուրս ելաւ սենեակէն։ Քիչ վերջ Եղինենց տունը գրե-
թէ մարդ չմնաց։ Ամէնքը դուրս եկան և հարսին հետ
եկեղեցի ուղղուեցան։ Կեսրայրը ստէպ ձեռքերը զը-
պանը տանելով դրամ կամ չարար՝ բուռով վեր կը նե-
տէր կամ աջ ու ձախ կը սփռէր։ Մանաւանդ ոտաք գա-
նոնք ժողվելու համար իրարու վրայ կը խուժէին և ի-
րարմէ փախցնելու կը ճգնէին։

Երդերով ու նուագածութեամբ, նմանապէս հրա-
յանաձգութեամբ ամէնքը հասան եկեղեցի, ուր ժամա-
նեցին փեսան ու իր հետեւորդները։ Կարապետ իր սրբ-
տին ցանկացածին կը հասնէր։ Ուրախ էր ու շատ յարգի
զգեստներ հագած։ Եկեղեցական արարողութիւնը չքով
կատարուեցաւ։ Այլեւս Կարապետ և Եղինէ իրարու կը
վերաբերէին։ Անոնք երջանկութեան և նաև ցաւի ճամ-
բաներէն միասին պէտք էին ընթանայ։ Եղինէ թէև
ցած, սակայն յստակ չեշտով խոստացած էր Կարապե-
տի հնազանդ ըլլալ և վերջինս խօսք տուած էր անոր
տէրը ըլլալ։

Հարսանիքի մասնակցողները գրեթէ բոլորը վաս-
ուած մոմեր իրենց ձեռքերուն մէջ՝ եկեղեցիէն ելան։
Կրօնական ու աշխարհիկ երգեր իրարու յաջորդեցին
և տիկ ու քեմանչէ գամէնքը անուշ հնչիւններով խան-
դավառեցին։ Ստուգիւ երկիրը աստղալից երկինք եղած
էր, վասն զի մութին՝ մոմերու լոյսին թափորը այդ
տպեցութիւնը կ'ընէր։

Հարսնեւորները հապիւ թէ փեսային տունը հասան՝

Numérisé par CDMF (PP) - 2013

ահա անոր չէմքին վրայ գանակը աքսպպի մը գլուխը իրանէն բաժնեց և արիւնը գետս ցայտեց։

Ապա աւելի ուրախ մթնոլորտ մը տեղծուեցաւ և կալին մէջ պարերը՝ Կատարաչէն, Բոյրպար, Եռաստամ իրարու յաջորդեցին։ Ծերերն անգամ երիտասարդացան։

Կէս գիշերէն շատ առաջ՝ պար ու երգ վերջ գտան։ Եւ քունը ամէնուն աչքերը փակեց։ Թէ Եւդինէի աչքերն ալ, այդ չեմ գիտեր, սակայն մայրիկէս իմացայ՝ որ այդ օրը խեղճ տղիկը կամ նոր հարսը շատ յոգնած ու լացած էր։

Երկար տաեն անոր դէմքը չտեսայ, որովհետև քոզով ծածկուած էր, թէև կոշմակի թելի մը ան վեր քաշուած էր, որպէս զի ինքը կարենար տեսնել, բայց չտեսնուիլ։ Երբ գինքը բաց երեսով տեսայ, իմ ճանչցած Եւդինէն չէր։ Զուարթ չէր. նիհար էր և տխուր։ Սարերու անհոգ տղիկան ժպիտը դէմքին վրայէն թռուած գացած էր։ Անոր ըսի.«Եւդին ջան, եկուր երթանք՝ աշկապտ՞ուկ խաղանք, եկուր երթանք՝ տարերը մտնենք։ Ծաղիկներով զարդարէ քու փոփուկ վարսերը և մեր երգերովը թռչուններու նախանձը յուզենք»։ Հասկցաւ որ գինքը չէի ծաղրեր ու իրեն հետ կատակ կ՝ընէի։ Սիրուն գլուխը շարժեց ու հեռացաւ։ Սակայն հարկաւ լիշեց իր ապատութեան օրերը և իմ շարաճիրութիւնս իր Կարապետին պատմեց, որուն իր անպէն ապատութիւնը ծախած էր ակը գնելով։ Սակայն այդ իրեն շատ ծանր եկած։ Որքան ալ Կարապետ ու անոր ծնողքը գինքը իրենց տան թանկագին դանձը նկատեցին ու սիրեցին։ Բայց Եւդինէ օրէ օր աւելի նիհարցաւ ու ժժգունեցաւ։ Ուրախ ու ապատ կեանք կ՝ուզէր։ Եւ գժբախտաբար շատախօս մը՝ լսած գաղտնիք մը իր սրտին մէջ չէր պահած և անոր բսած՝ թէ Կարապետ շատ կարճ տաեն Ռուսատան պիտի մեկնէր։ Ճիշդ էր։ Թէև անոր ամուսինը ամէն ջանք թափած էր իր

Numérisé par CDMF (PP) - 2013

մեկնումը ուշացնելու. նպատակին չէր կրցած հասնիլ և առաւօտ մը անէն հեռացաւ։ Հաղար ու մէկ խոստումներով ու համբոյրներով ուզեց Եւգինէն ապահովցնել թէ մօտ առնէն պիտի վերադառնար։ Գնաց։ Միայն դժբախտ Եւգինէն գիտէ թէ այդ ժամանակ և անկէ վերջը ի՛նչ դարձ ու ի՛նչքան տառապեցաւ։

Հալեցաւ ու մաշեցաւ։

Եւ օր մը՝ այլ լսեցինք թէ՝ շատ ծանր հիւանդ էր։ Կարապետի տնեցիները ամէն հոգ տարին։ Բայց օգուտ չեղաւ։ Զուարթ ոգիկը, ապատ ոգիկը անկողնին մէջ անդօր ինկած էր։ Կը տառապէր ու կը տառապեցնէր։

Եւգինէ իր հին բուներ՝ մայրենի տունը ուերին և ես աւելի յաճախ տուիթը կ՚ունենայի գինքը տեսնելու։ Մայրս օր մը չէր անցներ առանց անոր այց տալու, իսկ ես, ուռենիի մշտակախ ճիւղերու պէս միշտ անոր վրայ ծռած էի գլուխս և գինքը կը ջանայի զուարթացնել։ Երբեմն ժպիտ մը գոնատ դէմքին վրայ կը ծաղկէր։ Աչքանայլն արեւի տկար ճառագայթ մը՝ կենսաղուրկ դեղին տերեւի վրայ։ Երբեմն այնպէս կը յուզուէի որ կարծես պիտի պոռայի՝ «Եւգին, բարի Եւգին, երանի՛ թէ քու տեղդ ես հիւանդանայի և դուն պարէիր ու ցատկուտէիր»։ այո, անոր տեղը չէր անկողինը, ան պէտք էր եղնիկին հետ սարերու դագաթը ման դալ։

Մերթ մեղմ ու մարած ձայնով կը խօսէր՝ «Ալ ինծի համար արև չկայ, ծաղիկ չկայ։ Ես պիտի մեռնիմ։ Ա՛յ Կարօ, ո՞ւր ես, մինչ այսքա՞ն շուտ դիս մոռցար»։ Ու անոր աչքերը սարերու դագաթներուն վրայ կը թառէին։ Սակայն անոնց վրայ կը նայէր և կը ցանկար բոպէ առաջ իր ամուսինին բարտիի հասակը անոնց վրայ նկատել։ Բարեբաստութիւն իրենց տան դիրքը շատ լաւ էր։ Մանաւանդ անոր պառկած սենեակին լուսամուտները իրենց առջև ընդարձակ և գեղեցիկ տեսարան ունէին։ Այնն առաւօտ իր մէկ պատուհանէն սարերու կատարին կը նկատէր արեգակին անդրանիկ ճառագայթները

Numérisé par CDMF (PP) - 2013

և միւս լուսամուտէն՝ իրիկուան արեւի մայրամուտը։ Առաւօտը՝ Կարապետի տեսութեան յոյսը վարդի հանդոյն անոր սրտին մէջ կը բացուէր և երեկոյին՝ կը թառամէր։

Եղինէի հիւանդութիւնը ամէնուն բերանն էր և ամէնքը անոր կեանքն ու առողջութիւնը կ'ուզէին։ Ոմանք կ'ըսէին թէ՝ Կարապետի սէրէն ու կարօտէն հիւանդացած ըլլայ, ուրիշները թէ՝ գուարթ ու ապառասէր աղջիկը պէտք չէր կանուխէն ամուսնացնել։ Ոմանք կը կարծէին թէ պապառութիւն ունեցած ըլլար։ Ամէն ղլխէ բան մը կ'ելլէր։ Նամանաւանդ չատ դեղեր փորձուեցան, բժիշկներ կանչուեցան, բայց ի դուր։ Եղինէ օրէ օր կը տկարանար ու մահուան համար կը հասուններ։ Նամակներ եւեւ եւեւ Ռուսատան համբուեցան որ՝ վայրկեան մը յառաջ Կարապետ դար և դայն կա՛մ իր համբոյրովը բուժէր կա՛մ իր արցունքովը թաղէր։

Մայրիկիս սիրելի խօսքն էր «Հաւերն իրենց բուն, մարդիկ իրենց տուն»։ Կ'ուզէր որ արեւի մար մտնելէն յետոյ տղաք տուն հաւաքուէին և հոն կարդային ու խաղային։

Երեկոյ մը յանկարծ եկեղեցւոյ զանգակները ըսկըսան տխուր զօղանջել։ Մայրս հրամայեց իրեն ընկերակցիլ ու միասին «Հայր մեր» ասօթքը ըսել։ Ըսինք։ Անկէ վերջը նկատեցի որ անոր աչքերուն մէջ արտասուքի կաթիլներ հաւաքուած էին և կը սկսէին վար իջնալ։ Մօտեցայ անոր «Մայրիկ, ո՞վ մեռած է»։ Գիտէի որ զանգակի տխուր հնչիւնները մահ կը գուժէին։ Նախ լսեց։ Ապա լեղուին ծայրէն փախցուց՝ «Զըլլա՛յ թէ մեր Եղինը մեռած ըլլայ»։ Հոգիս խորապէս յուզուեցաւ։ Լալով աղերսելով մայրս ստիպեցի Եղինէնց տուն երթալու։ Մեկնեցանք՝ մեր հեռը հիւանդին համար դիւրամարս ու համեղ ուտելիքներ առ-

Numérisé par CDMF (PP) - 2013

նելով։ Մայրս Եղինենց ձեռնունայն երթիք չէր երթար։

Հազիւ քանի մը տուն անցած էինք, ահա ժամկոչը մեր առջեւը ելաւ։ Բօթը տուաւ թէ՝ բարի Եղինէն աչքը սարերուն մեռած էր։ Օր ու արև չվայլած՝ մեռած էր։ Ա՜խ բարի Եղինէ, ուրեմն մահը քու գեղէդ ու շնորհէդ ալ չպատկառեցաւ թէ՝ քու սիրունութեանդ ու բարութեանդ վրայ նախանձեցաւ ու գթեց այս երկրէն առաւ փախցուց։

Գացինք Եղինենց տունը։ Ան արդէն լեցուն էր։ Եղինէի մայրը ցաւին ծանրութեան տակը անճանաչելի եղած էր և դիտումով մեղի լուր չէր տուած որ՝ մենք գոնէ ուշ ցաւ ունենայինք։ Մեր լացն ու կոծը խառնեցինք միւսներու կականներուն։ Ամէնքը Եղինէի դիակը չրջապատած՝ անոր արեւը կը սգային։ Տխուր երգերով և ողբերով անոր բարութիւնն ու գեղը կ՝աւաղէին։

Եղինէի դէմքին վրայ թեթև կարմրութիւն մը տարածուած էր։ Արդէն գեղեցիկ՝ զարմանալի շնորհալիութիւն մը զգեցած էր։ Ձեռքերը կուրծքին վրայ հանգչեցուցած էին. անոնք մեղրամոմի պէս դեղին էին։ Երկու կերոնները տխրագեղեցիկ լոյս ու սու�եր կը տարածէին։ Գլխուն կողմը խաչելութիւն մը դրուած էր։

Մեռած էր խոստովանած ու հաղորդուած։

Մեռած էր աչքերը սարերուն...։

Պառկած էր նման հեքեաթներու մէջ պատմուած ու երգուած գեղեցիկ աղջկան։ Կարծես կը սպասէր թագաւորին սիրուն մանչուն, որ իր կենսատու շրթունքները անոր շրթներուն և այտերուն հպէր և դանիկա իր քնէն արթնցնէր։ Ու թագաւորին մանչը եկաւ։ Այս, այդ գիշեր կարապետ տուն հասաւ և այն անակնկալորէն։ Ինկաւ իր Եղինէի վրայ և ես իմ մայրիկիս վրայ խոնարհեցայ։ Անկէ վերջ անցած դարձածը չեմ

Numérisé par CDMF (PP) - 2013

դիսակը։ Ասաս երբ արթնցայ, դիս իմ անկողինիս մէջ դտայ։ Շուտով վերը ցատկեցի և հակառակ անկիւնները խօսքին Եղինենց վազեցի։

Եղինէի թաղումը աննման հանդէսով ու տրրամութեամբ տեղի ունեցաւ։ Մէկուն ձեռքը և բահը չէր շարժեր դանիկա սև հողին յանձնելու։

Աչքերը սարերուն՝ մեռած էր։ Սիրոյ և կարօտի զոհ։ Ազատութեան և դատարկութեան հովիտներէն, թէև բարեբեր հողի մէջ փոխադրուած, սակայն թառամած։ Կարապետ իր սիրելի ու աննման կնոջ համար շատ լացաւ։ Անոր համար պատարագներ մատուցանել տուաւ, մեռելի հաց բաժնեց և «Ժամ ընել» հրամայեց։ Գերեզմանը գեղեցիկ ծաղիկներով զարդարեց։

Ան սակայն անոր գերեզմանին այցի կ'երթար և կ'ուզէր զոնէ հրաչքով տեսնել՝ այն ապշիկը, որ աչքերը սարերուն՝ մեռած էր, բայց դինքը և միանդամայն ապաստութիւնը փնտռելով։

---

## ՀԱՅՐԵՆԻՔԷՍ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Գիսակ պատմեց՝

«Հայրենիքէս ու սիրելիներէս բաժանումը այնքան յուզիչ և դրաւիչ է որ՝ փորձն անդամ զայն զարդարելու՝ պիտի ըլլայ թանաքի խոշոր սև բիծ սոյն էջնակ նկարին վրայ։

Մայիսի մէջ էինք։ Տայոց աշխարհի Մայիսը։ Այդ տարին բացառաբար ձմրան իշխանութիւնը թէ՛ ծանր և թէ՛ երկարատև եղած էր։ Բայց բարեբախտօրէն արդէն վերջացած։ Երկնի կամարին վրայ ամպի քանի մը պըծներ կային։ Գարնան աւիւնոտ արեւը ցուրտին վրայ տարած յոգեթանակէն արբշիռ՝ ճառագայթները

Numérisé par CDMF (PP) - 2013

չապլլօրէն երկրին կը բաշխէր։ Մասերու ճիւղերուն վրայ հանգչած ձիւնը արդէն հալած էր և կոկոններ ու տերեւիկներ անուշ երազներէ սթափած՝ շփացած երախայի աչուկներով իրարու կը նայէին։ Հովիտներու և բացատներու վրայ, թէպէտ ձմրան ծերուկի մօրուքին ապիտակ թելերէն դեռ աչքի կը դարնէին – ասդին անդին – սակայն խաժուռեկն ու ձնծաղիկը գեղեցիկ օրերու գալուստը կը նշմարէին։ Տանիքներու խաղողակներէն ու հատար ու մէկ ատուակներէն ջուրն էր որ կ'երթար կարկաչներով հեգեմոնաց։ Ջուրի երաժշտութիւն, որքա՜ն ոգեթով։ Թռչուններն ասուլիսներ ունէին անհամանում. կը պատմէին բաւ ու բուրան օրերէն և երջանկագոյն ժամանակներու երազներ կը հիւսէին։ Իսկ դաշտերու տէր ու տիրական Հայը – մեծով ու փոքրով՝ քիչ բացառութեամբ – յծուած էր գործի, արհամարհելով ցեխը, որ կոչիկն ու տրեխը կը ծանրաբեռնէր։

Մայիսի գեղեցիկ օր մը, ես ապայ տասնուերկու մոմերով վառուուն, ապայ կեանքը դուարձութիւն էր։ Մեր կալին մէջ ընկերներուս հետ կը խաղայի։ Սակայն յանկարծ ձիու սմբակներու գոփիւն մը լսելի եղաւ և մենք նկատեցինք Լազ մը, որ նժոյգին սանձէն բռնած՝ մեզի կը յառաջանար։ Մօտեցաւ, և թղթեակ մը ցուցուց։ Ամէնքս կարդալ գիտէինք. հօրս անունը վրան գրուած էր։ Կասկածը հոգիս ցնցեց։ Հայրս իս խո՞սքը կը կատարէր։ Լազը անոր առաջնորդեցի։ Ան մեր նորաշէն մեծ տան պատշգամին յեցած՝ թերթ կը կարդար։ Գուցէ արդէն Լազին կը սպասէր։ Իրարու մերձեցան և սկսան խօսիլ։ Իսկ ես ընկերներուս մօտ վազեցի՝ մեր խաղը շարունակելու։ Բայց աչքս միշտ հայրիկիս վրայ էր։ Տեսայ թէ՝ ինչպէս Լազը ձին ծառի մը կապեց սանձափոկով և հեռացաւ, իսկ հայրս իր ընթերցումը շարունակել սկսաւ։ Սակայն խաղս համ չունէր։ Սիրտս լճակ էր դարձած՝ փոթորկալի՛ց։ Բայց

Numérisé par CDMF (PP) - 2013

մինչ ես ուրիշ երկիր երթալու հաւանութիւնը կանխա-
չէի՞ տուած։ Այո՛, այո՛, սակայն բաժանում կար և
այդ սոսկալի բան էր ինձի համար։ Ի՞նչպէս թողուլ
մայր ու հայր և դեռ այնքան սիրելի անձեր ու տեղեր։
Ի՞նչպէս կրնայի ամիսներով ու տարիներով հեռանալ
անոնցմէ, որոնցմէ օր մը հեռու գտնուիլն ինձի համա-
չա՞ տանջանք էր։ Անկարելի եղաւ խոսքի չարունակու-
թիւնը։ Դադրեցուցինք զայն։ Հայրս կարծես անոր կո-
ղմանէր։ Ան չէր ուզած ընկերներուս հետ ունեցած
վերջին խօսս խանգարել։ Զիս իր մօտ կանչեց։ Տարա-
կոյսի կարիք չկար։ Պէտք չունէր խօսելու։ Իր խոշոր
ձեռքերուն մէջ փակեց թաթիկներս, ու այդ մարդը,
որուն աչքերուն մէջ ցանցառ արտասուք տեսած էի,
յուզուած շեշտով ինձի բարբառեցաւ. «Զաւակս, երկու
օրէն պիտի մեկնիս Եւրոպա։ Ան այս ձին և եղբօրդ հետ
գնա մեր ոգեկաններն ու բարեկամները հրաժեշտի
ճաշկերոյթին կանչելու։ Իսկ արդեւք ունեցողներէն
հրաժեշտ առ։ Այժմ՝ այսքան։ Յետոյ դեռ ըսելիքներ
ունիմ»։

Տղայ էի, ապա՞յ։ Ծանր եկան իր խօսքերը, սակայն
ձի հեծնել կար, ու այս ինձի համար մեծ զուարճութիւն
էր։ Կարծես ցաւս մոռցած՝ եղբօրս հետ թռայ նժոյգին
վրայ. և դացի թաղէ թաղ, անէ տուն։

Ազամամութին տուն վերադարձանք։ Ան փոխուած
էր. հոն խանուած բազմութիւնը կանթեղներու լոյսին
տակ զորձի լծուած էր։ Մէկը ալիւր կը մաղէր, ուրիշ
մը խմոր կը բանար։ Կին մը թոնիրը կ'արծարծէր։
Երկրորդ մը գաթաները կը վերցնէր։ Ի՞նչ անուշ հոտ
բանած էր անջրպետը։ Քանի մը ուրիշ կիներ ճերմակ-
գէններով կը հեռաքրքրուէին։ Իսկ այրերը քովէ քով
եկած կը խօսակցէին։ Ականջիս հասաւ – արդէն սատա-
նան գործ չունի – մէկուն ձայնը. «Դեռ փոքր է ափ-
սո՞ս է»։

Հայրս ու մայրս փնտռեցի։ Մինչ այդ՝ զոյգ մը

Numérisé par CDMF (PP) - 2013

ձեռքեր պարոնց շրջափակեցին և տոքուկ շրթունք-
ներ այտերուս հանդիպեցան։ Մեծ մայրիկս էր։ Ինծի
հանդէպ անոր տածած սէրը չեմ կրնար խօսքով բա-
ցատրել։ Քանի՛ անգամ իր ծունկերուն վրայ դրած եմ
գլուխս ու մշիկ մշիկ քնացած։ Որքան յաճախ իր չա-
քաներն ու անուշեղէնները վայելած։ Համբուրեց,
գգուեց գիս ու բան չէր գտներ ինձ ըսելու. ցաւէն լե-
գուն կապուած էր։ Ես ևս խօսելու անկարող էի, և
միայն արտասուք կը թափէի։ Միտքս կու գային չա-
բութիւններս – բարեբաստութեան թիւով քիչ – ի՞նչպէս
այնպիսի հոգի մը վշտացուցած էի։ Եւ քիչ վերջ ապա-
գակեցի. «Մամիկ, ներէ ինծի, անառակ էի, ներէ ին-
ծի»։ Աւելի յուզուեցաւ։ Վրան մարելիք եկաւ։ Սակայն
գիտցաւ ինքզինքը զսպել ու խօսիլ։ Իր ցաւը յայտնեց
մեկնումիս առթով ու դեղին ոսկիներ տուաւ ինծի,
իր յիշատակին համար բաներ մը գնելու։ Ապա յորդո-
րեց երթալ հայրիկին ու մայրիկին, որոնք արդէն ան-
հանդիստ եղած էին մեր ուշանալուն վրայ։

Հակառակ սովորութեանս – մտամոլոր ու ցրուած
– առանց սենեակին դուռը բակելու ներս մտայ։ Անոնք
բնականաբար յանկարծակիի եկան։ Նստած էին։ Մայ-
րը գունատ էր այնպէս՝ ինչպէս մեծ հայրիկիս մահ-
ուան օրը։ Ակերսպին հօրս շրթունքներուն կը նայէր։
Անոր ակնարկին մէջ կը կարդացուէր. «Դեռ փոքր է և
անփորձ։ Ճամբորդութիւնը ուշացնենք։ Ափսո՞ս է»։
Իսկ հայրս այն դիրքին մէջ էր, որ պիտի պատասխա-
նէր, բայց իմ ներկայութիւնս խափանեց ըսելու. «Բա-
ժանումը միշտ ծանր է։ Որոշումս որոշում է։ Երթա՛յ»։
Այդ խօսքերը օդը չճմաչացուցին. փոսն կի մէկ ձեռքս
մօրս և միւս ձեռքս հօրս վիզը անցուցի, օրակեցի, և
այտերը ու շրթունքներ իրարու մերձեցուցի։ Մանկու-
թեան անմեղ գիւտ։ Անմոռանալի պատկեր, անմոռա-
նալի համբոյրներ

Մայրիկս կ'արտասուէր։ Անուշ մայր, ինչո՞ւ կու

Numérisé par CDMF (PP) - 2013

յոս, թող երթայ, կարուի այն չարաճճի մանչուկը, որ քեզի այնքան հոգ պատճառած է և դքեզ վշտացուցած։ Հայրս կը խոկար՝ մեծ ծրագիր ու մեծ գործ առանց գոհի ու արիւնի չըլլար։ Իսկ ես կը նայէի երկուքին։ Զէի գիտեր՝ ներումի՞ թէ սիրոյ խօսքեր ասասանեմ։ Բնազդաբար յուսթիւնը յաւագոյն միջոցն ընտրեցի։

Հայրս իր սովորական ցայտուն կարգովը խօսք առաւ ու ըսաւ. «Ինչ որ իմ բերնէս կը լսես, տղա, նոյնը գիտնաս մայրիկդ կը կրկնէ։ Մենք այսօր գիշեր Եւրոպա կը դրկենք։ Գնա՛ և մարդ եղիր։ Գնա կարդա, սորվէ, խօսէ, մտածէ և ինքդ ապատօրէն որոշէ՝ թէ ի՛նչ պիտի ըլլաս։ Բայց ինչ որ պիտի ըլլաս, լա՛ւ եղիր։ Մեր ընտանիքին պատիւը ոտքերու տակ չառնես։ Մեր տան ճակտին վրայ մուր չքսես և ցեղս շատրատեսես...։ Վաղը Ագատարար Սուրբ Աստուածածնին ուխտի կ'երթանք և յաջորդ օրը քեսիդ հետ Տրապիզոն կը մեկնիս՝ անկէ Եւրոպա։ Քեզի քեզի հայրութիւն պիտի ընէ։ Քսակիդ մէջ շատ դրամ դրած եմ, զգայլ եղիր՝ չգողնան քեզմէ։ Ամբողջ գործածէ դանոնք։ Հիմա գնա հանգչէ»։ Բարի գիշերի համբոյրներով բաժնուեցայ։ Մայրս միշտ լուռ մնաց։ Արցունք կը կլլէր։

Անցաւ գիշերը՝ կէս քուն, կէս արթուն։ Յաջորդ առաւօտ ուխտի մեկնեցանք։ Շատուսոր էինք՝ վարդապետ մը, հայրս, մեծ մայրիկս, հօրեղբօրս կինը, եղբայրս, քոյրիկս. սա եւս ուզած էր իր հրեշտակի աղօթքը միացնել իր եղբօրը բարի ճամբորդութեան համար։ Մեր հետ էին նաև ազգականներ ու բարեկամներ։ Մայրս տուն կը մնար պատրաստութիւններու պարբուակով կամ պատճառով։

Հասանք ուխտավայրը։ Մատաղը կարուեցաւ։ Անոնցմէ ներմեռանդութեամբ ամէնքս Ս. Զոհին ներկայ գտնուեցանք։ Ապա ճաշի նստեցանք։ Հոգեւոր տպեր,

Numérisé par CDMF (PP) - 2013

նան ուրիշ գանգան երգեր ու կատակներ արամագրութիւններբ տարբեր բանելու վրայ դարձուցին։

Երեկոյեան տուն վերադարձանք։ Նոյն ազմուկն ու պատրաստութիւնները։ Խօսակցութիւն ու երբեմն լաց։ Վերջին գիշեր հայրենի՛ յարկին տակ։ Շատ երկար է գիշերը։ Սակայն այս անգամ ինծի գլուր ու սիրելի։ Որքան երկար, այնքան աւելի ուշ՝ բաժանումս հայրենի անէն։

Բայց աքաղաղին կանչը լսելի եղաւ։ Տունը արթնցաւ և կեանքը սկսաւ։ Հագուիլ, լուացուիլ, աղօթք ու եկեղեցի երթալ իրարու յաջորդեցին։։ Սուրբ խորհուրդներու մերձենալէ և գոհութեան աղօթքէ յետոյ տուն դարձայ։ Հոն ամէն բան ծրարուած ու կարգի դրուած էր։ Բայց յանկարծ, կարծես մէկէ մը ապրպրուած՝ բիլ երկինքը սև ու մութ ամպեր դիզուեցան ու տեղատարափը սկսաւ։ Մօրս ու իմ սրտիս մէջ արև ծագեցաւ, — կրնայ լլլալ որ ճամբորդութիւնս օր մը յետաձգուի։ Մայրս ա՛լ հաշտուած է Եւրոպա անցնելու գաղափարին հետ և այսօր քիչ մը կը խօսի։

Մեկնումի որոշուած ժամը հասաւ, սակայն քեռիս, որ պիտի գար դիս հեռո առնելու, չերևցաւ։ Սպասեցինք։ Անձրևն իր ընթացքը շարունակեց, անդադրում։ Հայրս՝ դուարթ մթնոլորտ մը ստեղծելու մտքով՝ եղբօրս և ինծի հրամայեց թուղթ խաղալ։ Ներկանները դմեզ չըլսապատեցին։ Շատերը իմ կողմս եկան, ուզելով որ ես յաղթեմ, չէ՞, որ ճամբորդ եմ։ յա՛րգ ունիմ։

Սակայն քիչ վերջ ձայներ լսելի եկան։ Բաժանները են որ հնչեցին, նախ մեղմ և ապա որքան մերձեցան՝ զօրաւոր։ Անո՞նք էին՝ ճամբորդները։ Խաղը մնաց կէս։

Իրարանցումը սկսաւ։ Թօնը գրեթէ դադրած է։ Քահանան ժամանակին հասնելով «Պահպանիչ»ը արտասանեց և Սուրբ Խաչը մեզի դէն ու օգնական տուաւ։ Ապա պաշարները — ուտելիք ու ապանելիք — ջորիի մը վրայ բարձուեցան և ես անէն դուրս ելլելով՝ ոտքս

Numérisé par CDMF (PP) - 2013

ասպանդակին վրայ դրած՝ ձիուս նիւսը բարձրացայ։ Ոտքս հայրենի ու մայրենի կուրի հողէն կարեցի և բաժնուեցայ։ Ա՜խ, թէ այսօր ըլլար այդ օրը՝ պիտի տաքածուէի սոյն նուիրական ու ոսկի հողին վրայ և պիտի կառչէի գրանդիներուն։ Հապարաւոր Աժդահաներ պիտի չկարենային դիս թդաչափ իսկ անոնցմէ հեռացրնել։

Մնաս բարո՜վ իմ սրտրան, մնաս բարո՜վ իմ թոնիր։ Մնացէք բարո՜վ մէն մի քար։ Մնացէք բարո՜վ թթենիներ ու վարդենիներ։ Դուք ամէնքդ ալ ինձի սիրելի և անդին։ Ձեզ չեմ կարող մոռնալ՝ բայց կընամ դիս մոռնալ։ Պիտի գա՜մ, պիտի գա՜մ ձեր կարօտովը այրուած ու դրեթէ սպառած։ Շէն մնաք, չոգ ու չոգ ունենաք։ Մինչև իմ գալուստս։ Բայց, ե՞րբ։

Ճամբորդներս ձիով և ուղարկաւորները հետոտն ընթացանք։ Իմ աչքերս ամէն կողմ էին։ Մօտս էին մեբինները, նոյն իսկ քոյրիկս, ապգականներ ու բարեկամներ։ Սակայն եղբայրս չկար։ Ձիս անդադար կեցուցի։ Ցամաւօրէն պահանջեցի եղբայրս և առանց անոր չուզեցի մէկ քայլ չարժիլ, մինչ անձրեւը նորէն թեթեւօրէն սկսած էր մաղել և սաստկանալու սպառնալիք ունէր։ Եղբայրս դատ, դուցէ այն չտեմարանին մէջ, ուր սակայ պահուըտուք կը խաղայինք։ Ձինքը ձիուս վրայ տալ և նոյն իսկ ուզեցի փախցնել։ Ան իր զեղեցիկ ձայնովը ու զուարթ բնաւորութեամբը իմ կեանքս յաճախ համեմած էր ուրախ ժամերով։

Բաւական յուսաչացանք։ Բլուրի մը վրայ հօրս առաջարկին անուրով՝ տիարներէն ու արդիլը ունեցողներէն հրաժեշտ առնելու սկսայ։ Քոյրիկս վեր բռնեցին ու ես վար խոնարհելով անոր վարդաթոյր երեսը համբուրեցի և իր արտասուքը – այսերուս վրայ հանդչած – տի ինձի յիշատակ։ (Կընայի՞ այն պահուն դուշակել՝ թէ օր մը, տարագրութեան չրջանին, ան մաքրութեան ու արբութեան սպիտակ շուշանը սպիտակ

Numérisé par CDMF (PP) - 2013

ձեռքերուն մէջ առած՝ հրեշտակի թեւերով Հայաստանի սարերէն երկնի կապոյտը պիտի սաւառնէր)։

Վար խոնարհեցայ ձիկս ու համբուրեցի մեծ մայրիկիս ձեռքը և ան քանի մը համբոյր գրոշմեց երեսիս վրայ։ «Անուշիկ մամիկ, ինա՞ս բարով։ Մի մոռնար թոռնիկդ, բայց մոռցիր անոր չարութիւնները։ Թող սիրտը թեթեւ հեռանայ»։ Իսկ ան լալագին ինծի բաւ. «Որդի ջան, համբիր են աչքերս, գնա ու եկուր սև հողը արդէն սև գլխուս ցանէ որ՝ հանդչիմ սիրելի մեծ հայրիկիդ կողքին»։ «Չէ՛, մեծ մայրիկ, չէ՛, պիտի գամ քու վերջալոյսը արշալոյս ընելու։ Դուն դեռ պէտք ես շատ ապրիլ։ Քեզի պէտք ունին մեր տունն ու օճախը»։ (Սակայն իմ մտքիանքս ինոյ ամպերէն կախուած։ Ան տարապրուքեան զոհ եկաւ։ Թուրքերը զինքը – 70 տարեկան հասակին – մինչև Երզնկա կը քշեն և հոն կը մեռնի։ Մահուան պարագաներն ինծի կը մնան անծանօթ)։

Ապա համբոյր տուի իմ աննման մայրիկիս և անկէ ետեցայ համբոյրներ շա՞տ։ Ան չխօսեցաւ և ես չխօսեցայ, բայց մեր սրտերը խօսեցան ու հալեցան։ Զիւնանման ոպիտակ ալեզարդը ճակատիս վրայ խաչ մը հանեց ու ձախովը ձեռքիս մէջ դրաւ տուփ մը, որուն մէջ կային, (երբ յետոյ նայեցայ), ոսկիներ, և անդին ու սիրելի բան մը՝ իր մեռաքսաթել չէկ մոպերէն փունջ մը։ (Հրաժեշտի այդ բոպէին երբեք չէի կրնար մտքիս անցնել որ՝ օր մը ան տարապրուած հայրենիքէ՝ խանի մը մէջ ողջ ողջ պիտի այրուէր՝ իր կանոցի պատիւն ու սուրբ հաւատքը չզոհելու համար։ Մա՛յր, սիրելի՛ մայր, դուն մե՛ծ ես, դուն սրբուհի՛ ես։ Սրտիս մէջ խորան ունիս)։

Քիչ վերջ եւեւս զարձայ՝ եղբօրմէս հրաժեշտ առնելու, սակայն անոր սիրտը չէր կրցած տոկալ ու ձիուն զաւակէն իջնելով՝ աննշմար փախած էր։

Numérisé par CDMF (PP) - 2013

Հրաժեշտ հրաժեշտի յաջորդեց։ Արցունք արցունքի վրայ թափուեցաւ։ Յետոյ ջուրը թափուեցաւ մեր ճամբուն վրայ՝ անվատանգ կոխենք հողը և անվատանգ անցնենք գետերէ ու ծովերէ։

Զիւերը քշեցինք ասաջ, բայց աչքերս եռեւս մնացին։ Գոհարնե՛ր, գանձե՛ր, անփոխարինելի՛ հոգեակնե՛ր ու արտե՛ր կը կորսնցնէի։ Անոնք ինծմէ կը հեռանային և ես անոնցմէ։ Իւրաքանչիւր քայլ մեր բաժանումի անջրպետը կը մեծցնէր։

Ս. Յակոբի մատուռին մօտ հասանք։ Հոն հայրս յարմարութիւն գտնելով ուժեղ շարժումով գիս ձիէն վար առաւ։ Աչքերուս նայելով՝ յստակ և ազդու ձայնով ըսաւ. «Երթաս բարով, Հոգեակս։ Միշտ քաջ եղիր և վհատութիւնը սիրտդ չլլկէ։ Սիրէ գիրք ու գիտութիւն։ Հոգիդ մեղքէն հեռու պահէ։ Աստուած՝ քեզ հայր ու Տիրամայրը՝ մայր։ Գնա, որդեա՛կ, գնա՛. մի՛ մոռնար գմեզ ու խրատներս»։ Քանի մ'անգամ գրկեց գիս և ես իրեն պլլուեցայ։ Պատուղը ճիւղէն չէր ուզեր բաժնուիլ։ Ապա գիս կրկին ձիուն վրայ դրաւ ու կոնակը դարձուց ինծի։ Ան չուզեց իր արտասուքն ինծի ցուցնել։

Հայրս, սիրելի հայրս, քու խօսքերդ սրտիս մէջ են միշտ։ Անոնք սերմեր են, որոնք պիտի ծլին և պտուղ բերեն։ Կ'ուզեմ սորվիլ, կ'ուզեմ նկարագրի ամէր մարդ դլլալ։ Մեղքի ատաւերն անգամ պիտի չհանդուրժեմ։

Զիտարեցինք յառաջ։ Հասանք Ագրակ, ուր մեր նախիրները դարնատային և ամառնային չրջաններուն կը գտնուէին։ Հոն էր մեր տան մէկ սիրելի անդամը, մեծ հօրս եղբօր կինը։ Տանտիկին էր արդէն ապիտակ ծամերով։ Ունէր գուարթ բնաւորութիւն և իրրև ցաւէ ու «դարտ»է հասկցող՝ ամէնէն սիրուած էր։ Մեր մեկնումի լուրն իրեն հասած էր։ Զմեզ դիմաւորելով տուն առաջնորդեց։ Բերած էր ջուր Քուր–Ագրօր գետիւրէն և ճաշը պատրաստած։ Եփած էր պանիրատապակը և ալն՝ շատ յաջող։ Սակայն ախորժակ չկար։ Քանի մը պատառ

Numérisé par CDMF (PP) - 2013

բռնութեամբ կլլեցի։ Նկատեցի որ պառաւ կինը –ամէնէս կոչուած Թիրաք Խաթուն – չափազանց յուզուած էր։ Սակայն զիտէր ինքզինք զսպել և նոյն իսկ կատակով մեր տրամադրութիւնը փոխել։ Ըսաւ. «Թոռնիկս կ'ելթայ՝ մեծ մարդ կ'ըլլայ ու կու գայ։ Ես՝ այս օրէն սկսած՝ անոր անունովը գառնուկ մը պիտի պահեմ։ Այս գառնուկը պիտի մեծնայ, ձագ պիտի ունենայ։ Զայն ալ պիտի հոգամ։ Այն եւս ձագ պիտի ունենայ. ու երբ մեր մանչուկը գայ՝ անոր կենացը մորթել պիտի տամ և «քէֆ» է որ պիտի ընենք։ Դէ՛հ գնա Թոռնիկս, հասիր քու մուրատիդ և եկուր։ Աստուած մեզ իրար տեսութեան արժանացնէ»։

Հրաժեշտ առի իրմէ։ Համբոյր մը տուաւ այնքան ձայնով ու հնչեղ, որ մեր եօթը սարերը արձագանգեցին։

Ժողովներու վրայ բարձրացանք։ Յառաջացանք զէպի սարը։ Աչքերս սակայն եւ կը գառնային. ի՞նչ ազէկ է. ծանօթ վայրեր անոնց դեռ կը հանդիպին։

Սարի գագաթին՝ քեռիս բաւ. «Մանչուկս, անդամ մըն ալ աչքերդ եւ գարձուր, նայէ՛ ամէն կողմ, նայէ՛։ Սակէ վերջ գառիվարը կը սկսի և հայրենիքդ բան պիտի չտեսնես»։ Դարձայ եւեւս։ Հոս՝ Աղրակ։ Հոն՝ մեր գաշտերն ու արտերը։ Հոն են մեր թթենիները և անոնց շուքին ներքև նստած է մեր տունը։ Եւ գուցէ անոր պատուհաններէն ինձի կը նային սիրելիներուս սիրելի աչքերը։ Նայեցայ ծաբաւի և անկուշտ։ Սակայն յանկարծ ականջիս ուժեղ ձայն մը հասաւ՝

«Երթաս բարո՛վ»։

Թիրաք Խաթունիս ձայնն էր։ Զօրաւոր, բայց անուշ։

Հոգիս ծով գարձաւ՝ մրրկայո՛յզ։

Երիվարիս գլուխը գարձուցի և գիմեցի զէպի վար, աբցանգներ՝ աչքերէս վար։

Աչքերս ա՛լ չէին տեսներ տուն ու սիրելիներ։ Ականջիս մէջ, սրտիս մէջ միայն կը հնչէր ձայն մը հայրենի

Numérisé par CDMF (PP) - 2013

հավերով ինձի հասած՝ «երթաս բարո՛վ»։

– Ե՞րբ, ե՞րբ պիտի կարենամ ըսել. «Եկա՛յ, եկա՛յ»։

Այն օրէն ի վեր

Կանչում է կրկին, կանչում անդադար,
Այն չքնաղ երկրի կարօտը անհուն...
Թռչում է հոգիս, թռչում դէպի տուն...
Վաղուց կարօտով սպասում են ինձ։

(Յովհ. Թումանեան)

Երնէ՛կ քեզ, բարեբա՛խտ բանաստեղծ, որ չէն հայրենիք և դեռ քեզ սպասողներ ունիս։

Բայց ես ի՞նչ ունիմ...

Մխայն կարօտ, և դարձեալ կարօտ՝ սիրելիներու, որոնք «հիմի չկան»։ Հայրենիքի՛, որ ուեր է և ուր մուտքը արգիլուած»։

Գիտակ լսեց։ Զարմացանց յուզուած էր։ Թէև դեռ շատ պատմելիք ունէր, բայց չուզեց իր խօսքը շարունակել։

Numérisé par CDMF (PP) - 2013

# ԵՐՆԷ՛Կ ԷՆ ՕՐԵՐՈՒՆ...

Լեգուն դեռ վակ, բայց ան աչքով
Կը խօսէր մօր – որբանին քով –
Որ սիրազեղ՝ կ՚երգէր անո՛ւշ՝
«Օ՛ր տես, օ՛ր տա՛ւր, սիրուն Մանուշ»։
Երնէ՛կ էն օրերուն,
Բաղդրիկ էն օրերուն։

Հայ ազգիկներն միշտ դատարթուն,
Լեռ կ՚ելլէին՝ գիշերն արթուն,
Համբարձումին ծագկեցսակ՝
Հոն քաշելու բախտ ու վիճակ։
Երնէ՛կ էն օրերուն,
Յոյսի էն օրերուն։

Թագին հարաներ մէկ մէկ հուրի,
Կուժը՝ ուսին, էհէ՛ ջուրի՝
Երգով պարով կը սուրային
Եւ սրտին մէջ՝ սէրն ակութին։
Երնէ՛կ էն օրերուն,
Սիրոյ էն օրերուն։

Ժայռի գլխին կը նստէր ան՝
Հայ պատանին տկճար բերան։
Անոր ձայնով ի՛նչպէս գլուխներ
Են պառնուկին հետ ուլիկներ։
Երնէ՛կ էն օրերուն,
Ուրախ էն օրերուն։

Numérisé par CDMF (PP) - 2013

Թոնիրին մօտ խոնարհած վար
– Ի՜նչ բոյր ամէն անկիւն ու վայր –
Հաց կը թխէր մայրը՝ առատ,
Իրեններուն ասպնջէ՛ն չատ.
Երնէ՛կ էն օրերուն,
Վարձքի էն օրերուն:

Առտուան ատած օդին մէջ թիս,
Գովքը կ'ընէր մշակին ժիր:
Թոպ իր դէմքէն քրտինք կաթէ.
Ան կը հնձէր ցորեն սաթէ.
Երնէ՛կ էն օրերուն,
Գործի էն օրերուն:

Իսկ կիրակի առաւօտուն,
Ո՛րքան սիրով ամրոցէ իսկ տուն՝
Եկեղեցին կը հաւաքուէր,
Խունկ ու աղօթք տալու նուէր.
Երնէ՛կ էն օրերուն,
Լոյսի էն օրերուն:

Ցաւերուն մէջ թէ տառապէր
Մայրի՛ր մեծ՝ ջերմով դիշեր,
Ցաւերը իր կ'ըլլային կէս,
Կը հոգայի՝ դինք սիրակէզ.
Երնէ՛կ էն օրերուն,
Ցաւի էն օրերուն:

Իր կուրծքին լոյսին անչէջ՝
Պապը վառած իր հի՛ն տան մէջ,
Ուրախ և գոհ կու տար հոգին՝
Ծոցն իջնալով Հայրենիքին.
Երնէ՛կ էն օրերուն,
Խաղաղ էն օրերուն:

Numérisé par CDMF (PP) - 2013

* * *

«Կանաչ վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով ծալապատակ,
Մեր նախնիները, «Ապրեցէք երեխէք»
Մաղթեցին մեզ, « Բայց մեզ պէս չապրէք »:

(Յովհ. Թումանեան)

*Բարի Հայրերը ջան, իսկ մենք ի՞նչ ըսենք*
*Մեր պատահներուն, երբ նախանձ ու նենգ*
*Պոկեցին ըզմեզ հողէն հայրենի:*
*Ներկան ողբալով՝ կու տանք երանի՛:*

*Երնէ՛կ էն օրերուն,*
*Ապրած էն օրերուն*
*Մեր սիրելի նախնիներուն՝*
*Հա՛յ արեւին տակ իրենց տուն:*

Numérisé par CDMF (PP) - 2013